



**ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2014

ՀՏԴ 343.62(479.25) : 316

ԳՄԴ 67.99(2Հ) 8 + 60.55

Ե 787

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝

Հետազոտության ղեկավար և վերլուծարան՝

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Ադրինե Բաբլոյան

Տվյալների բազաների մասնագետ և վերլուծարան՝

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Բագրատ Հարությունյան

Հետազոտության դաշտային աշխատանքների համակարգող՝

Տիգրան Հարությունյան

Հետազոտության ադմինիստրատիվ կառավարում՝

Հովհաննես Քեշիշյան

Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի
Ե 787 Հանրապետությունում: Հետազոտության արդյունքների վերլուծության
հաշվետվություն // Հետազոտ. աշխատ. խումբ.- Եր.: Լուսաբաց, 2014.- 116 էջ:

ՀՏԴ 343.62(479.25) : 316

ԳՄԴ 67.99(2Հ) 8+ 60.55

“ՕՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ”

“THE PROJECT IS FUNDED BY THE ESTONIAN MINISTRY OF FOREIGN AFFAIRS FUNDS FOR
DEVELOPMENT AND HUMANITARIAN AID“



ENUT



ISBN 978-9939-69-115-2

© «Հույս և օգնություն» ՀԿ, 2014
“Hope and Help” NGO

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները ՀՀ-ում» սոցիոլոգիական հետազոտությունը հնարավոր եղավ իրականացնել Էստոնիայի կանանց ուսումնասիրությունների և հետազոտությունների կենտրոնի (ENUT) և «Հույս և օգնություն» ՀԿ-ի կողմից համատեղ իրականացվող «Երեխաների պաշտպանություն բռնությունից գիտելիքների ամրապնդման և լավագույն փորձի միջոցով» ծրագրի շրջանակում: Ծրագրին ֆինանսական աջակցություն է ցուցաբերել Էստոնիայի արտաքին գործերի նախարարությանը:

«Հույս և օգնություն» հասարակական կազմակերպությունը խորին երախտագիտություն է հայտնում Էստոնիայի արտաքին գործերի նախարարությանը և Էստոնիայի կանանց ուսումնասիրությունների և հետազոտությունների կենտրոնին (ENUT):

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում «ՄԵԴԻԱ-ՄՈԴԵԼ» ընկերության հետազոտավերլուծական թիմին՝ հետազոտության ղեկավար և վերլուծաբան՝ Ադրինե Բաբլոյանին, տվյալների բազաների մասնագետ և վերլուծաբան Բագրատ Հարությունյանին, հետազոտության դաշտային աշխատանքների համակարգող՝ Տիգրան Հարությունյանին, հետազոտության ադմինիստրատիվ կառավարող՝ Հովհաննես Քեշիշյանին հետազոտությունը իրականացնելու, ինչպես նաև փորձագետ-իրավաբան Լիլիթ Երեմյանին «Երեխաների բռնությունից պաշտպանությունը սահմանող ՀՀ օրենսդրական կարգավորումները» վերլուծությունը իրականացնելու համար:

Հուսով ենք, որ սույն հետազոտության արդյունքները հաշվի կառնվեն պատկաճ մարմինների կողմից՝ երեխաների բռնությունից պաշտպանությանը ուղղված ռազմավարական որոշումներ ընդունելիս:

Acknowledgments

The “Manifestation of Violence Against Children in the Republic of Armenia” sociological research was possible to implement by Estonian Women's Studies and Research Centre (ENUT) in association with Hope and Help NGO in the frame of “To Help Children-United Knowledge and the Best Practice to Protect Armenian Children” project. The project is supported by the Ministry of Foreign Affairs of Estonia. "Hope and Help" NGO expresses its deep gratitude to the Ministry of Foreign Affairs of Estonia and the Estonian Women's Studies and Resource Centre (ENUT).

We would like to express special thanks to the "MEDIA-MODEL" company's research team: research director and analyst Adrine Babloyan; database specialist and analyst Bagrat Harutyunyan; research field coordinator Tigran Harutyunyan; research administrative manager Hovhannes Keshishyan, as well as an expert-lawyer Lilit Yeremyan for carrying out the “Legal Regulations of the Republic of Armenia stipulating protection of the child from abuse” analysis.

We hope that the results of this study will be considered by responsible bodies during the process of making strategic decisions aimed at protection of children from violence.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ	5
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	8
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ	10
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	13
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	14
ԳԼՈՒԽ I. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ՈՒ ԴՐԱ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱԶՔԵՐՈՎ	20
1.1. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆ ՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ	20
1.2. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ	25
ԳԼՈՒԽ II. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	30
2.1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ.....	30
2.2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ	33
2.3. ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	39
2.4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԻՉԸ	42
ԳԼՈՒԽ III. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ	46
3.1. ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՇՐՁԱՆՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏԻ ՄՊԱՌՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	46
3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.....	48
3.3. ՌԻՍԿԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ	53
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	55
Հավելված 1. Հետազոտության գործիքներ	60
Հավելված 2. Բռնության դեպքերի մասին մեջբերումներ ֆոկլուս-խմբային հարցազրույցներից.....	78
Երեխային բռնությունից պաշտպանությունը սահմանող ՀՀ օրենսդրական կարգավորումները: Լ.Երեմյան.....	81
Violence Against Children In The Republic Of Armenia Analitical Report On Research Results Executive Summery.....	96
Legal Regulations Of The Republic Of Armenia Stipulating Protection of The Child From Abuse. Lilit Yeremyan.....	102

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումը՝ ՀՀ աշակերտների թվի նկատմամբ 18

Աղյուսակ 2. Ընտրանքի կլաստերները՝ ըստ ուսումնական հաստատությունների տիպի..... 18

Աղյուսակ 3. Ընտրանքի բաշխումը..... 18

Աղյուսակ 4. Բռնության ձևերն ու սուբյեկտները՝ ըստ մասնակիցների 21

Պատկեր 1. Բռնության մեկնաբանումները՝ ֆոկուս խմբերում: 25

Աղյուսակ 5. Դպրոցում անկարգ աշակերտների նկատմամբ կիրառվող մեթոդների
գնահատականներ 26

Աղյուսակ 6. Ֆիզիկական բռնության տարածվածության ցուցանիշներ..... 30

Աղյուսակ 7. Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից ֆիզիկական ուժ կիրառելու
դեպքերը՝ ընտրանքային կլաստերներում 31

Աղյուսակ 8. Ուսուցիչների/դասախոսների կողմից ֆիզիկական ուժ կիրառելու դեպքերը՝
ընտրանքային կլաստերներում..... 31

Աղյուսակ 9. Ֆիզիկական բռնության դրսևորումների տարածվածության ցուցանիշներ 32

Աղյուսակ 10. Ապտակի և հրմշտոցի կիրառումը ընտանիքում՝ ըստ բարեկեցության
աստիճանի 32

Աղյուսակ 11. Ապտակ/հրմշտոցի կիրառումը ընտանիքում՝ ըստ կլաստերների 33

Աղյուսակ 12. Ապտակ/հրմշտոցի կիրառումը ընտանիքում՝ ըստ բնակավայրի տեսակի 33

Աղյուսակ 13. Հասակակիցների կողմից միմյանց հանդեպ ֆիզիկական բռնության
դրսևորումներ 33

Աղյուսակ 14. Հոգեբանական բռնության տարածվածության ցուցանիշներ 34

Գծապատկեր 1. Ինչպե՞ս կբնութագրեք մթնոլորտը Ձեր ընտանիքում: 35

Գծապատկեր 2. Ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունները 35

Գծապատկեր 3. Ընտանիքում ֆիզիկական ուժ կիրառելը 35

Աղյուսակ 15. Ընտանիքում բռնության ռիսկերը՝ ըստ բնակավայրերի 36

Աղյուսակ 16. Ընտանիքի անդամների կողմից երեխաների հանդեպ հոգեբանական
բռնության դրսևորումներ 36

Աղյուսակ 17. Որքանով են ծնողները վերահսկում երեխաների կյանքը..... 37

Աղյուսակ 18. Հասակակիցների կողմից միմյանց հանդեպ հոգեբանական բռնության
դրսևորումներ 38

Գծապատկեր 4. Ովքե՞ր են Ձեր ընկերները: 38

Աղյուսակ 19. Ընկերական և ուսումնական միջավայրում հարաբերությունների բնութագիրը.....	38
Աղյուսակ 20. Սեռական բռնության տարածվածության ցուցանիշներ.....	39
Աղյուսակ 21. Եթե հանկարծ նկատեք, որ հայտնվել եք սեռական բռնության վտանգ պարունակող իրավիճակում, ու՞մ կղիմեք օգնության համար:.....	40
Գծապատկեր 5. Սեռական բռնության ականատես/զոհ դառնալու հետ կապված գործողություններ.....	41
Գծապատկեր 6. Բռնության ենթարկված անչափահասներին աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների վերաբերյալ իրազեկվածություն.....	41
Աղյուսակ 22. Բռնության գործոններ.....	42
Աղյուսակ 23. Բռնության գործոնների ցուցանիշներ.....	43
Աղյուսակ 24. Բռնության գործակիցները՝ ըստ բռնության ձևերի.....	43
Գծապատկեր 7. Հասակակիցների միջև բռնության իրավիճակում միջամտողները.....	44
Աղյուսակ 25. Որտեղի՞ց եք տեղեկացել ուսուցիչների/դասախոսների կողմից Ձեր հասակակիցների նկատմամբ բռնության կիրառման դեպքերի մասին.	45
Աղյուսակ 26. Որքա՞ն հաճախ եք օգտվում ինտերնետից.....	46
Աղյուսակ 27. Ինտերնետից օգտվելու հաճախականությունը՝ ըստ տարածքների.....	46
Աղյուսակ 28. Օրվա ընթացքում միջինում քանի՞ ժամ եք գտնվում ցանցում.....	47
Գծապատկեր 8. Ինտերնետին միանալիս սովորաբար ինչպիսի՞ միջոց եք օգտագործում (տոկոսը պատասխաններից).	47
Աղյուսակ 29. Ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտվում ինտերնետից.....	48
Աղյուսակ 30. Արդյոք գրանցված եք որևէ սոցիալական ցանցում.....	48
Աղյուսակ 31. Ձեր համացանցի ընկերներից, ո՞ր մասի հետ եք ծանոթ անձնապես իրական կյանքում.....	49
Աղյուսակ 32. Որքանո՞վ է հավանական, որ հանդիպում նշանակեք/հանդիպեք համացանցում ձեռք բերված նոր ընկերոջ/ուհու հետ.....	49
Աղյուսակ 33. Որքանո՞վ է հավանական, որ հանդիպում նշանակեք/հանդիպեք համացանցում ձեռք բերված նոր ընկերոջ/ուհու հետ՝ բաշխում ըստ սեռի:.....	50
Աղյուսակ 34. Համացանցում անձանոթներից առաջարկություն ստացողների բաշխումը՝ ըստ բնակավայրերի.....	51
Աղյուսակ 35. Անձանոթների կողմից համացանցում առաջարկություններ.....	51
Աղյուսակ 36. Անձնական տվյալները հանրության համար բաց պահողների համասնությունները.....	52

Աղյուսակ 37. Արդյո՞ք օգտագործում եք Ձեր իրական անձնական տվյալները սոցիալական ցանցերում, փոստում, ֆորումներում և այլուր գրանցվելիս.	52
Աղյուսակ 38. Ինտերնետի սպառման անվտանգության կանոնների խախտում.....	53
Աղյուսակ 39. Ռիսկի գործոնների նկարագրություն	53
Աղյուսակ 40. Կիրեր-հանցագործության ռիսկերը.....	54
Աղյուսակ 41. Կիրերհանցագործությունների ռիսկային ուղղությունները	54

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ¹

Երեխա	մինչև 18 տարեկան անձ՝ կոչվում է նաև անչափահաս:
Դեռահաս	մանկության տարիքից պատանեկության տարիքի անցումային շրջանում գտնվող 14-18 տարեկան երեխա:
Բռնություն	Ֆիզիկական ուժի կամ իշխանության դիտավորյալ կիրառումը կամ կիրառման սպառնալը որևէ անձի, անձանց խմբի կամ հանրության նկատմամբ, որը բերում է կամ մեծ հավանականությամբ կարող է բերել մարմնական վնասվածքների, մահվան, հոգեբանական վնասի, թերզարգացման կամ զրկման:
Ֆիզիկական բռնություն	որևէ անձի կողմից մյուս անձի նկատմամբ ծեծի, վնասվածքների, կոտրվածքների և այլ ֆիզիկական վնասի կանխամտածված հասցնելը:
Հոգեբանական բռնություն	բռնության տեսակ, որը բնութագրվում է մեկ անձի կողմից մյուսին այնպիսի պահվածքի ենթարկում, որը կարող է բերել հոգեբանական ցնցման և արտահայտվել զոհի անհանգստությամբ, խրոնիկական դեպրեսիայով, հետտրավմատիկ սթրեսային խանգարմամբ և այլն:
Սեռական բռնություն	որևէ անձի սեռական բնույթի գործողությունների պարտադրելը՝ սեռական գործողությունների պարտադրող անձի ֆիզիկական բավարարման կամ շահույթ ստանալու նպատակով:
Ստիպել, հարկադրել Ինտերնետ	պարտադրել մեկին գործել իր կամքին հակառակ: համաշխարհային մակարդակով համակարգչային կապակցված ցանցերի համակարգ, որն իրականացնում է տվյալների հաղորդման այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են համակարգի հեռակա մուտք, ֆայլերի փոխանցում, էլեկտրոնային փոստ և ցանցային հաղորդակցություններ:
Թրաֆիքինգ	շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ

¹ Մարդկանց թրաֆիքինգի ռիսկի գնահատում, Հույս և Օգնություն ՀԿ, Երևան, Լուսաբաց, 2013; Հարավարևելյան Եվրոպայում հակաթրաֆիքինգային տվյալների հավաքագրման ձեռնարկ՝ տարածաշրջանային չափանիշների մշակում, ՄԲԶՄԿ, 2009; Детство без насилия, CNPAC, UNICEF, Кишинев, 2006:

հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով:

Կիրառվող հանցագործություններ

համակարգչային համակարգերի և ցանցերի օգտագործմամբ կատարվող հանցագործություններ, որոնք ներառում են ինչպես վնասաբեր վիրուսների տարածումը, գաղտնաբառերի կոտրումը, կրեդիտ քարտերի համարների և բանկային այլ վավերապայմանների գողությունը (ֆիշինգ), այնպես էլ համացանցի միջոցով հակաօրինական տեղեկատվության տարածումը (զրպարտություն, պոռնոգրաֆիկական բնույթի նյութեր, միջազգային և միջկրոնական թշնամանք առաջացնող նյութեր) և համացանցի օգտագործմամբ կատարվող խարդախություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումների հետազոտությունն իրականացվել է Հայաստանի մայրաքաղաքում և հյուսիսային Լոռի, Տավուշ, հարավային Վայոց Ձոր, Սյունիք մարզերում՝ 2014 թվականի մարտ-հուլիս ամիսներին «ՄԵԴԻԱ-ՄՈՂԵԼ» ընկերության հետազոտավերլուծական թիմի կողմից՝ «ՀՈՒՅՍ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» Հասարակական կազմակերպության գրասենյակի հետ համագործակցությամբ: Հետազոտության առաջնային նպատակն էր բացահայտել ՀՀ-ում երեխաների, մասնավորապես 14-18 տարիքային խմբի նկատմամբ բռնության դրսևորումներն ու կիբեր-հանցագործությունների ռիսկերը:

Կատարվել է բազմաստիճան ներկայացուցչական պատահական ընտրանք: Հետազոտության ընտրանքը կազմել է 780 անձ, որոնցից 711 հոգի ընդգրկված բնակավայրերի հանրակրթական հաստատություններում սովորող IX-XII դասարանների աշակերտներ, և 69 հոգի ընտրված Բուհերի առաջին կուրսի ուսանողներ²: Ընտրանքի սխալը կազմում է $\pm 3,5\%$ ՝ 0,95 վստահելիության միջակայքում³:

Իրականացվել են նաև ընտրված մարզերի կտրվածքով ուսումնական հաստատությունների հիմնական անձնակազմի ներկայացուցիչների հետ 5 ֆոկուս-խմբային հարցազրույցներ:

Հետազոտության ամփոփ բացահայտումներն են.

- **դեռահասների նկատմամբ բռնության և դրա կանխարգելման ոլորտում հատուկ գիտելիքների պակասը** հանրակրթական դպրոցների հիմնական ուսուցչական կազմի, հատկապես մարզային դպրոցների անձնակազմի մոտ,
- **բռնության դրսևորումների և վերահսկողության պատասխանատվության տեղափոխության միտումը** կրթության այն ուղղությունների վրա, որոնց անմիջական սուբյեկտը տվյալ ուսումնական հաստատությունը/անձնակազմը չեն հանդիսանում,
- **բռնության ենթարկված երեխաներին բացահայտելու կամ նման դեպքերում հատուկ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ** ուսուցիչների համար հատուկ ուղեցույց-հրահանգներ բացակայությունը, սոցիալական մանկավարժների, սոցիալական աշխատողների, հոգեբանների և այլ հատուկ մասնագետների մասնակցության սահմանափակումը/նվազագույն ընդգրկվածությունը հիմնական

² Թիրախում չեն ներառվել հատուկ, գիշերօթիկ և այլ ուսումնակրթական հաստատությունները՝ առավել համահարթ և տիպիկ պատկեր վեր հանելու ակնկալիքով: Բացի այդ հաշվի են առնվել հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ ստանդարտացված հարցաթերթի լրացման և դեմ առ դեմ չմիջնորդավորված հարցազրույց իրականացնելու սահմանափակումները:

³ Մանրամասների համար տես Հետազոտության ընտրանքը՝ էջ 15:

ուսուցչական կազմի/դասվարների կողմից, **երեխաների նկատմամբ բռնության համադրական ոչ-բարձր ցուցիչը՝** մոտ 54%. այսինքն հարցվողների 46 %-ը գերծ է ուսումնասիրությամբ նախատեսված բռնության որևէ ռիսկի գործոնից:

- **հոգեբանական բռնության առավել բարձր ցուցանիշները՝** ֆիզիկական և սեռական բռնության գրեթե հավասար ցուցանիշների համեմատությամբ,
- **որպես ֆիզիկական բռնության հիմնական տիրույթը ուսումնական հաստատությունների հանդես գալը՝** առավել բարձր են ֆիզիկական բռնության ցուցանիշները դպրոցների և բուհերի համար՝ 2 առաջնային սուբյեկտների ներգրավմամբ՝ համադասարանցիներ (ցուցանիշը ամենաբարձրն է) և ուսուցիչներ/դասախոսներ:
- **հասակակիցների միջև բռնության տարածվածությունը՝** ավելի բարձր է Երևանում, այնուհետև Հյուսիսային կլաստերում (Լոռի և Տավուշ մարզերում) և Հարավային կլաստերում (Վայոց Ձոր և Սյունիք մարզերում):
- **ուսումնական հաստատություններում հոգեբանական բռնության բարձր ցուցանիշը,** որը գերազանցում է ընտանիքում և փողոցում հոգեբանական բռնության ցուցանիշներին: Հոգեբանական բռնության ենթարկվում են առավելապես իգական սեռի երեխաները:
- **արտաքին տեսքի, ազատ տեղաշարժվելու, ընկերների հետ շփվելու և այլ ուղղություններով անվերահսկելի դեռահասների ռիսկային խմբի առկայությունը,** որը բացարձակ մեծամասնությամբ Երևանից: Այն ներկայացված է արական սեռի հարցվողներով, ովքեր ունեն միջին և միջինից բարձր բարեկեցության աստիճան:
- **սեռական բռնության ցուցանիշների ձգտումը գրոյի,** բացառությամբ հասակակիցների կողմից (70 հարցվողներից 16-ը լսել են հասակակիցների կողմից սեռական բռնության դեպքերի մասին) և այլ չափահասների կողմից (70 հարցվողներից 12-ը լսել են այլ չափահասների կողմից սեռական բռնության դեպքերի մասին) ցուցանիշների:
- **սեռական բռնության դեպքերը թաքցնելու միտումը.** ուսանողների մոտ 1/3-ը սեռական բնույթի գործողությունների զոհ կամ ականատես դառնալու դեպքում կնախընտրեն թաքցնել դեպքի մանրամասները, քանի որ կարող են վարկաբեկվել կամ հայտնվել ամոթալի իրավիճակում:
- **երեխաների անբավարար իրազեկվածությունը հատուկ աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների և պատասխանատու մարմինների վերաբերյալ.** հարցված 70 ուսանողներից ընդամենը 3-ն են նշել նման կազմակերպություն:

- **կիրքերհանցագործության ռիսկայնության համադրական բարձր ցուցիչը՝** մոտ 79%: միջինում մեկ անձի վրա ազդում է կիրքերհանցագործության զոհ դառնալու 3 ռիսկի գործոն, ինչը բավականին շատ է: Մեծ է նաև այն դեռահասների խումբը, ովքեր մաքսիմալ վտանգի տակ են գտնվում, քանի որ նրանց վրա ազդում է միաժամանակ 7-ից ավելի ռիսկի գործոններ՝ մոտ 12,5 %:
- **կիրքերհանցագործությունների ռիսկի հիմնական խումբը:** տղաներ, որոնք, համաձայն հետազոտության արդյունքների, մի կողմից առավել հաճախ և երկարատև են գտնում համացանցում, իսկ մյուս կողմից՝ փնտրում են ծանոթություններ և արկածախնդրորեն պատրաստ են հանդիպումների: Ռիսկային խումբը մեծ է հատկապես Երևանում, այնուհետև հյուսիսային մարզերում և հարավում:
- **ինտերնետ անվտանգության բնագավառում գրագիտության պակասը,** որի մասին են վկայում տվյալները համացանցի օգտագործման ընթացքում անվտանգության կանոնների խախտման մասով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունն ամփոփում է Հայաստանի մայրաքաղաքում և 4 մարզերում⁴ 2014 թվականի մարտ-հուլիս ամիսներին իրականացված երեխաների նկատմամբ բռնության դրսևորումների հետազոտության մեթոդաբանությունն ու արդյունքները:

Հետազոտությունն իրագործվել է «ՄԵԴԻԱ-ՄՈԴԵԼ» ընկերության հետազոտա-վերլուծական թիմի կողմից՝ «ՀՈՒՅՍ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» հասարակական կազմակերպության գրասենյակի հետ համագործակցությամբ: Հետազոտությունն ունի վերլուծական հետախույզի ուղղվածություն՝ ապահովելով հետազոտվող հիմնախնդրի քանակական և որակական բնութագրիչների վերաբերյալ ընդհանրական պատկերացում: Ստացված արդյունքները կարող են հանդես գալ որպես ելակետային տվյալներ՝ ՀՀ-ում երեխաների, մասնավորապես 13-18 տարիքային խմբի, նկատմամբ բռնության և կիրքերհանցագործությունների ընդհանուր վիճակի մասին, ինչպես նաև ուղեցույց ծառայել ոլորտում շարունակական և առավել խորքային ուսումնասիրությունների և թիրախային միջոցառումների կազմակերպման համար:

Նախագծի շրջանակներում բռնությունը դիտարկվել է որպես ֆիզիկական ուժի կամ իշխանության դիտավորյալ կիրառում կամ կիրառման սպառնալիք որևէ երեխայի/անչափահասության տարիքում գտնվող անձի, անձանց խմբի կամ հանրության նկատմամբ, որը բերում է կամ մեծ հավանականությամբ կարող է բերել մարմնական վնասվածքների, մահվան, հոգեբանական վնասի, թերզարգացման կամ զրկման: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության եզրույթները, ինչպես նաև փորձ է կատարվել վերհանել թիրախ խմբերի կողմից հասկացության մեկնաբանության այլ առանձնահատկություններ:

Հետազոտությունն ունի քանակական-որակական մեթոդաբանություն⁵, որում փորձ է կատարվել համադրել առաջնային տեղեկատվության հավաքագրման քանակական և որակական մեթոդները: Նշված մոտեցումն ապահովել է բռնության երևույթի բազմակողմանի և հավաստի վերլուծության հնարավորություն: Հաշվետվությունում ներկայացված են թիրախավորված մարզերի և մայրաքաղաքի կտրվածքով ուսումնական հաստատությունների հիմնական անձնակազմի ներկայացուցիչների հետ 5 ֆոկուս-խմային հարցազրույցների արդյունքներն ու 13-18 տարեկան 780 երեխաների հետ ստանդարտացված հարցաթերթով անցկացված դեմ առ դեմ հարցազրույցների արդյունքները: Հետազոտությունն ընդգրկել է հանրակրթական ուսումնական հաստատությունների նշված տարիքի աշակերտներին և ընտրված Բուհ-երի առաջին կուրսի ուսանողներին՝ բացառելով հատուկ, գիշերօթիկ և այլ ուսումնակրթական հաստատությունները՝ առավել համահարթ և տիպիկ պատկեր վեր հանելու ակնկալիքով:

Հետազոտական թիմը երաշխավորել է մասնակիցների անանունությունը, հետևապես բացահայտված բռնության դեպքերը կամ դրանց ակնարկումները հավելվածում ներկայացված են առանց հարցվողների անձը բացահայտող մանրամասների:

⁴ Մանրամասների համար տես Հետազոտության ընտրանքը՝ էջ 15:

⁵ Մանրամասների համար տես Հետազոտության մեթոդաբանություն՝ էջ 11:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտական մոտեցումը, հետազոտության նպատակն ու խնդիրները

Նախագծի շրջանակներում մշակվել և կիրառվել է բռնության և կիրքերահանցագործությունների դրսևորումների ուսումնասիրման յուրօրինակ մեթոդաբանական մոտեցում: Վերլուծական սխեմայի կենտրոնում դրվել են բռնության դրսևորումների ձևերի տիպաբանության, համացանցի օգտագործման անվտանգության աստիճանի և կիրքերահանցագործությունների ռիսկերի չափման գաղափարները: Այս դիտանկյունից, հետազոտության խնդիրները կենտրոնացվել են ոչ միայն երեխաների/դեռահասների նկատմամբ բռնության տարածվածության չափման վրա, այլև երեխաների այն խմբերի բացահայտման վրա, որոնք բռնության և կիրքերահանցագործությունների առումով առավել ռիսկային են: Այսպիսով հետազոտության առաջնային նպատակն էր բացահայտել ՀՀ-ում երեխաների/դեռահասների նկատմամբ բռնության դրսևորումներն ու կիրքերահանցագործությունների ռիսկերը:

Հետազոտության խնդիրները ներառել են հետևյալ ուղղությունները.

- Մանկավարժների կողմից բռնության երևույթի մեկնաբանման առանձնահատկությունների բացահայտում;
- Երեխաների նկատմամբ բռնության ձևերի և դրանց տարածվածության չափում;
- Բռնության առաջնային սուբյեկտների բացահայտում;
- Ընտանիքում/ուսումնական հաստատություններում/ընկերական միջավայրում բռնության ռիսկերի հաշվառում;
- Դեռահասների շրջանում բռնության և կիրքերահանցագործությունների տարածմանը նպատող գործոնների վերհանում;
- Համացանցի օգտագործման և սոցիալական ցանցերում հաղորդակցման անվտանգության չափում;
- Կանխարգելիչ և վերահսկման միջոցառումների մշակման ուղղությունների մատնանշում:

Որպես հետազոտության հիմնական օբյեկտ դիտարկվել են ՀՀ ընտրված մարզերի և մայրաքաղաքի հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 13-18 տարեկան անչափահասները⁶: Թիրախում չեն ներառվել հատուկ, գիշերօթիկ և այլ ուսումնակրթական հաստատությունները՝ առավել համահարթ և տիպիկ պատկեր վեր հանելու ակնկալիքով: Բացի այդ հաշվի են առնվել հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ ստանդարտացված հարցաթերթի լրացման և դեմ առ դեմ չմիջնորդավորված հարցազրույց իրականացնելու սահմանափակումները:

⁶ Մանրամասների համար տես Հետազոտության ընտրանքը՝ էջ 15:

Հետազոտության մեթոդներն ու գործիքակազմը

Ինչպես հայտնի է, ոլորտում կատարված ուսումնասիրությունները սակավաթիվ են և ունեն հիմնականում տեղայնացված բնույթ: Տվյալ հետազոտության համար կարևորվել է հատկապես ՀՀ-ում երեխաների նկատմամբ բռնության առավել ընդհանրացված պատկերի բացահայտումը, որը կարող է հանդես գալ որպես ելակետային տվյալների շտեմարան ոլորտի բոլոր մասնագետների համար: Մինչև 2015 ժամանակ հետազոտությունը որպես վերջնարդյունք թվային տվյալներին ու քանակական բնույթի օրինաչափությունների բացահայտմանը զուգահեռ կարևորել է հիմնախնդրի անմիջական կրողների մեկնաբանություններն ու սուբյեկտիվ ընկալումները բռնության և դրա դրսևորումների վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով որդեգրվել է ոչ թե զուտ-քանակական սոցիալական հետազոտությունների մեթոդաբանությունը, այլ կիրառվել է քանակական և որակական մեթոդաբանությունների համադրման մոտեցում: Նախագիծը հետապնդել է ինչպես վիճակագրական նշանակալիության և քանակական ընտրանքի ներկայացուցչականության պահանջների բավարարման նպատակ, այնպես էլ կենտրոնացել է դեպքերի վեր հանման մեթոդաբանական սկզբունքների վրա:

Նախապատվություն է տրվել առաջնային տեղեկատվության հավաքման երկու հիմնական մեթոդներին՝ ստանդարտացված հարցաթերթով դեմ առ դեմ հարցազրույցի մեթոդ և ֆոկուս-խմբերի մեթոդ: Մեթոդների համադրությունը թույլ է տվել նաև տրիանգուլյացիայի հնարավորություններն օգտագործելով ապահովել հավաքված տեղեկատվության որակը՝ հուսալիությունն ու ճշգրտությունը:

Ստանդարտացված հարցազրույցը դիտարկվել է որպես առավել օպտիմալ միջոց բռնության տարածվածության և դրևորումների քանակական պատկեր ստանալու տեսանկյունից: Տարիքային առանձնահատկություններն հաշվի առնելով՝ որպես առաջնային տեղեկատուներ դիտարկվել են դեռահասները, ովքեր կարող են առավել ազատ և ինքնուրույն խոսել բռնության հիմնախնդիրների մասին, ինչպես նաև տեխնիկապես ի վիճակի են մասնակցել հարցաթերթի լրացման ընթացքին:

Որպես տեղեկատվության հավաքման գործիք հանդես է եկել ստանդարտացված հարցաթերթը, որում առանձնացված էին 3 հիմնական բլոկներ և 1 ներդիր բլոկ՝

- Ա. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ**
- Բ. ԸՆԿԵՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ**
- Գ. ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**
- Դ. ԻՆՏԵՐՆԵՏԻ ՄՊԱՌՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՅԵՐՈՒՄ**
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ:

Թվարկվածներից Գ բլոկը նախատեսված էր միայն Բուհ-երի I կուրսի ուսանողների համար: Հարցաթերթի նման կառուցվածքը որոշվել է գործիքի փորձարկման փուլից հետո, երբ պարզ դարձավ, որ սեռական բռնության վերաբերյալ հարցերը առաջացնում էին ավելորդ լարվածություն և կաշկանդվածություն դպրոցականների մոտ,

պատասխաններից հրաժարվելու մեծ միտում: Հարցման բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով սեռական բռնության վերաբերյալ հարցերը դպրոցականներին չեն տրվել, փոխարենը դպրոցական տարիներին սեռական բռնության դրսևորումների վերաբերյալ պատկերը ստացվել է ուսանողներից, ովքեր առավել անկաշկանդ կերպով տրամադրել են տեղեկատվությունը:

Հարցազրույցներն իրականացվել են հմուտ հարցազրուցավարների կողմից, ովքեր բացի ընդհանուր վերապատրաստումից, անցել են նաև հատուկ հրահանգավորում հետազոտության առանձնահատկությունների և կարգի վերաբերյալ: Հարցումն ացն է կացվել առանձնազրույցների ձևով՝ բացառելով ուսուցիչների, համադասարանցիների/համակուրսեցիների, ծնողների մասնակցությունը: Հարցազրույցից առաջ յուրաքանչյուր երեխայից հավաստիացել են, արդյոք ծնողները թույլատրում են մասնակցել հարցազրույցի: Միջինում մեկ հարցաթերթի լրացումը առանց ներդիր թերթիկի տևել է 13 րոպե, ներդիր թերթիկով՝ 16 րոպե:

Հարցմանը զուգընթաց իրականացվել են նպատակային 5 ֆոկուս-խմբեր, որոնցից երկուսը Տավուշի և Վայց Ձորի մարզերում, իսկ մնացածը Երևանում: Ֆոկուս-խմբերը ներառել են 6-11 մասնակիցներ, որոնք նախապես ընտրվել են հաշվի առնելով առաջադրված համապատասխանության չափանիշները, ինչպիսիք էին ավագ դասարաններում աշխատելու ստաժը, իրար անձանոթ լինելը, բազմապրոֆիլությունը և այլն: Յուրաքանչյուր ֆոկուս խմբում ընդգրկված են եղել 9-12-րդ դասարանների դասվար և այլ ուսուցիչներ, սոցիալական մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, դպրոցի բժիշկ/բուժ.քույր, անվտանգության մասնագետ/ուստիկան, ինչպես նաև մարզպետարանի պատասխանատու: Ֆոկուս-խմբային քննարկումները տևել են միջինում 2 ժամ և իրականացվել են նախապես մշակված և փորձարկում անցած ուղեցույցի հիման վրա, որը ներառել է հարցերի հետևյալ թեմատիկ ուղղություններ.

- Ա. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ, ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**
- Բ.ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ/ԸՆՏԱՆԻՔՈՒՄ**
- Գ.ԿԻԲԵՐ-ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՏԱՆԳԸ**
- Դ.ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ:**

Հավաքված տվյալները ճշգրտորեն վերծանվել են սղագրությունների ձևով, որոնք արխիվացվել են անանունության և գաղտնիության սկզբունքների խիստ պահպանությամբ:

Հետազոտական գործընթացը կազմակերպվել է գալարածև զարգացման ընթացակարգով՝ ինչն ապահովել է վերջինիս ճկունությունն ու թույլ է տվել պարբերաբար վերադառնալ մեթոդաբանական սխեմաների վերանայմանն ու ճշգրտումներին, առաջադրել նոր վարկածներ և վերաձևակերպել վերլուծական կատեգորիաները: Ընդհանուր առմամբ դաշտային աշխատանքների փուլը տևել է 2 ամիս՝ անց կացվելով 2014 թ. ապրիլ-մայիս ամիսներին:

Հետազոտության ընտրանքային ռազմավարությունն ու իրագործված ընտրանքը

Որպես առաջնային տեղեկատվության աղբյուր դիտարկվել են ընտրանքում ընդգրկված բնակավայրերի հանրակրթական հաստատություններում սովորող 711 IX-XII դասարանների աշակերտները, ինչպես նաև ընրտված Բուհ-երի 69 առաջին կուրսի ուսանողներ: Ընդհանուր առմամբ, հետազոտության ընտրանքը կազմել է 780 անձ: Ընտրանքի սխալը կազմում է $\pm 3,5\% \cdot 0,95$ վստահելիության միջակայքում:

Ընտրանքի հավանականային կառուցվածքը ենթադրում է խոչընդոտների առկայության դեպքում տիպաբանական առանձնահատկությունների պահպանման պարագայում միավորների համարժեք փախարհման հնարավորություն:

Ընտրանքի առաջին քայլում ընտրվել են հետևյալ մարզկենտրոնները՝

Մարզկենտրոն՝

1. Երևան
2. Վանաձոր
3. Իջևան
4. Կապան
5. Եղեգնաձոր

Ընտրությունը հիմնվավորվում է թրաֆիքինգի և սեռական շահագործման պոտենցիալ շուկաների առկայությամբ՝ հայ-վրացական, հայ-իրանական սահմաններ և մայրաքաղաք: Այս սկզբունքի հիման վրա ստեղծվել է 3 կլաստեր՝ Երևան, Հյուսիս և Հարավ, որոնք էլ ընդգրկել են համապատասխանաբար հյուսիսային Լոռի և Տավուշ մարզերը և հարավային Վայոց Ձոր և Սյունիք մարզերը:

Ընտրանքի երկրորդ քայլում մնացած 38 քաղաքներից ըստ մարզերի պատահականորեն ընտրվել են այլ քաղաքներ՝ Ստեփանավան, Բերդ, Գորիս, Վայք:

Գյուղական համայնքների ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքով՝ նախ սահմանվել են նախկին վարչական շրջանները՝ հիմք ընդունելով պատահականորեն ընտրված մարզային այլ քաղաքները: Այնուհետև հաշվարկվել է նախկին շրջկենտրոնից հեռավորության մեդիանան, այսինքն այն թվային մեծությունը, որը բաժանում է բոլոր գյուղերը երկու խմբի՝ ըստ հեռավորության: Ամեն խմբից պատահականորեն ընտրվել է մեկական գյուղ:

Ընտրված բնակավայրերում դպրոցականների հարաբերակցությունը Հայաստանում աշակերտների ընդհանուր թվի նկատմամբ ունի հետևյալ քանակական բնութագիրը:

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումը՝ ՀՀ աշակերտների թվի նկատմամբ

Դասարաններ						
	9	10	11	12	%	Կլաստեր
Երևան	11951	6958	7992	10517	28.2	51.7
Արագածոտն	1972	1519	1619	1974	5.3	
Արմավիր	3826	2737	2796	3499	9.7	
Կոտայք	3487	2542	2396	2897	8.5	
Արարատ	3532	2461	2799	3503	9.3	16.2
Սյունիք	1670	1400	1487	1766	4.8	
Վայոց Ձոր	734	612	686	934	2.2	
Գեղարքունիկ	3282	2840	2789	3447	9.3	32.1
Լոռի	3346	2252	2533	3317	8.6	
Շիրակ	3504	2567	3053	3580	9.6	
Տավուշ	1661	1352	1394	1675	4.6	
Ընդամենը	38965	27240	29544	37109	100	100

Ըստ այդմ, աշակերտների թիվը համապատասխանաբար բաշխվել է նշված 3 կլաստերներով. ամեն բնակավայրում այնպես, որ ընդհանուր թիվը հավասար լինի կլաստերի մասնաբաժնին:

Հաշվի առնելով հանրապետական կտրվածքով 9-12-րդ դասարաններ ունեցող դպրոցների քանակը՝ 3 կլաստերներում ապահովվել է հետևյալ տիպաբանական համամասնությունը՝

Աղյուսակ 2. Ընտրանքի կլաստերները՝ ըստ ուսումնական հաստատությունների տիպի

Տեսակ	Ոչ պետական (մասնավոր)	Պետական	Ընդամենը
ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ)	0.5	7.1	7.6
հիմնական դպրոց (1-9-րդ դասարաններ)	0.3	34.1	34.3
միջնակարգ դպրոց (1-12-րդ դասարաններ)	2.2	54.0	56.2
վարժարան (5-12-րդ դասարաններ)	0.2	1.1	1.3
Ը նդամենը	3.1	96.9	100.0

Նախորդ տիպաբանության հիման վրա՝ ստացվել է ընտրանքում աշակերտների/ուսանողների հետևյալ բաշխումը.

Աղյուսակ 3. Ընտրանքի բաշխումը

Դասարաններ							
	9	10	11	12	1-ին կուրս	%	Ընդամենը
Կլաստեր 1	97	81	97	97	70	51.7	441
Կլաստեր 2	30	25	30	30	x	16.2	115
Կլաստեր 3	60	50	60	60	x	32.1	230
Ընդամենը	187	156	187	187	70	100	786

Տվյալների մուտքագրումն ու մշակումը, օգտագործված ինդեքսներ

Տվյալների մուտքագրումից առաջ կատարվել է որակի բազմամակարդակ վերահսկողություն: Առաջին մակարդակում՝ վերահսկվել է հարցազրույցի իրականացման կարգը դաշտային կոորդինատորների կողմից, երկրորդ մակարդակում՝ կատարվել է հարցաթերթերի լրացման կարգի տեխնիկական և տրամաբանական ստուգում: Տվյալների մուտքագրումն իրագործվել է SPSS 20 ծրագրային փաթեթի ձևաչափով՝ տվյալների կրկնակի մուտքագրման ընթացակարգով: Տվյալները համակարգիչ մուտքագրելուց հետո իրականացվել է ստուգման երրորդ փուլը՝ տեսական և ծրագրային հսկողության միջոցով՝ սխալները ստուգելու և ճշտելու նպատակով:

Տվյալների մշակումը կատարվել է SPSS 20 ծրագրով: Մշակման ընթացքում կատարվել է ինչպես ընդհանուր վիճակագրական վերլուծություն, այդպես էլ խմբավորում, ցուցիչների ձևավորում և հաշվառում: Հաշվետվության մեջ օգտագործված են մասնավորապես բռնության և կիբերհանցագործությունների համադրական ցուցիչները, որոնց նկարագրությունը ներկայացված է համապատասխան բաժիններում (տես էջ 48, 61):

Հետազոտության սահմանափակումները

Հետազոտության իրագործման ընթացքում առաջ են եկել մի շարք խոչընդոտներ, որոնք պայմանավորել են հետազոտության սահմանափակումների առաջացումը.

1. Ուսումնական հաստատությունների ղեկավար անձնակազմի կողմից հետազոտության ընթացքին միջամտելու փորձեր
2. Դպրոցականների կողմից ընտանիքում խնդիրները քողարկման ցանկություն
3. Մեռական բռնության վերաբերյալ դպրոցում և դպրոցականների հետ զրուցելու դժվարություն
4. Մանկավարժական կազմի կողմից սեփական դպրոցի վերաբերյալ տեղեկությունների փոխարինում այլ դպրոցների մասին պատմություններով:

Հետազոտության սահմանափակումներից է նաև արդյունքների տարածելիության խնդիրը, քանի որ տվյալները հավաքագրվել են միայն հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանցիների և ընտրված Բուհ-երի 1-ին կուրսեցիների պատասխանների հիման վրա: Այսինքն արդյունքները նպատակահարմար է տարածել դեռահասների նշված խմբի վրա: Հետագա հետազոտություններն անհրաժեշտաբար պետք է կենտրոնացնել հատուկ, գիշերօթիկ դպրոցների, մանկատների և այլ նմանատիպ հաստատությունների ուղղությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ստացված արդյունքները՝ կատարել հատուկ դեպքերի ուսումնասիրություններ օգտագործելով որակական հետազոտական ընթացակարգեր:

**ԳԼՈՒԽ I. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ
ՈՒ ԴՐԱ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱԶՔԵՐՈՎ**

1.1. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆ ՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Իրականացված 5 Ֆուկուս-խմբերի ընթացքում փորձ է կատարվել բացահայտել երեխաների նկատմամբ բռնության երևույթի մեկնաբանության առանձնահատկությունները ուսումնական հաստատությունների (տվյալ դեպքում դպրոցների) հիմնական ուսուցչական և սպասարկող անձնակազմի կողմից: Արդյունքում հարցվողների կողմից քննարկված բռնության սահմանումները և սուբյեկտիվ մեկնաբանումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝

- Մասնագիտական կամ տեսաիրավական մեկնաբանումներ
- Առօրեական կամ տեղայնացվող մեկնաբանումներ:

Առաջին խմբի մեկնաբանումները բնորոշ են հիմնախնդրին առավել իրազեկված հարցման մասնակիցների խոսքին, մասնավորապես սոցիալական մանկավարժների, հոգեբանների, երիտասարդ տարիքի ուսուցիչների մեկնաբանումներին: Նրանք ձգտում են մասնագիտական սահմանումներով փակել երևույթը՝ դիտարկելով այն որպես բազբաբարդ տեսական կատեգորիա, որի դրսևորումներն իրական կյանքում նրանք կարող են տեսակավորել և արձագանքել նպատակադրված:

Մյուս մասնակիցները հիմնականում հիմնվում են երեխաների նկատմամբ բռնության հասկացությունն առօրեական կամ իրական իրադարձությունների հետ կապակցելու անհրաժեշտությունից: Նկատվում է, որ հիմնական ուսուցչական կազմը, հատկապես մարզային դպրոցներից, մեծամասամբ չունի հատուկ գիտելիքներ դեռահասների նկատմամբ բռնության և դրա կանխարգելման ոլորտում: Իրենց սահմանումներում ուսուցիչները շեշտադրում էին երևույթի այն ասպեկտները, որոնք, ըստ էության տեսնում/կարևորում են առօրյաում, սակայն գիտելիքը չունի հստակ համակարգվածություն, տիպաբանական հիմքեր կամ հատուկ մասնագիտական տերմինաբանություն: Բացի այդ բռնության հստակ սահմանագծման բացակայության պայմաններում՝ նրանց ընկալումներում բռնությունը սերտաճում է մի շարք հարակից հասկացությունների հետ՝ ստեղծելով մասնագիտական խառնաշփոթ: Այդպես՝ բռնության համատեքստում քննարկվում են թրաֆիքինգի, քարոզչության, աշակերտների ուսումնական գերծանրաբեռնվածության և այլ երևույթներ, որոնց նույնացումը բռնության հետ թույլ է տալիս խույս տալ բռնության բուն ֆիզիկական, սեռական և այլ հիմնահարցերի քննարկման կարևորությունից, ինչպես նաև բացառում է հատուկ մանկավարժական հմտությունների կիրառմամբ բռնության դեպքերի բացահայտումը:

Բռնության դրսևորման ձևերը քննարկվել են ֆուկուս-խմբերի մասնակիցների հետ իրագործող սուբյեկտների համատեքստում: Ըստ ստացված արդյունքների՝ որպես

կենտրոնական ասոցիատիվ շարք դպրոցական անձնակազմի աչքերով կարող են առանձնացվել Հայաստանում երեխաների նկատմամբ բռնության սահմանման հետևյալ բաղադրամասերը և բռնության հետևյալ կենտրոնական սուբյեկտները՝

Աղյուսակ 4. Բռնության ձևերն ու սուբյեկտները՝ ըստ մասնակիցների

Բռնության դրսևորումները/ձևերը	Բռնության սուբյեկտները՝ ըստ առաջնահերթության
Խոսքի սահմանափակում	Մանկավարժներ, ծնողներ՝ առավել հաճախ մայր
Կարծիքի պարտադրում	Մանկավարժներ, հասակակիցներ
Պարտադրում սովորելու	Ծնողներ, կրթական ծրագիր
Դավանանքի պարտադրում	Ծնողներ, կրթական ծրագիր
Աշխատանքի պարտադրում	Ընտանիք
Ֆիզիկական բռնություն /ձեծ/	Հասակակիցներ, ուստիկանության աշխատակիցներ
Սոց. բարեկեցության հիմքով մեկուսացում	Հասակակիցներ
Սեռական բռնություն	Բացառիկ դեպքեր՝ հատուկ, գիշերօթիկ դպրոցների, մանկատների անձնակազմ, ուստիկանության աշխատակիցներ, ընտանիք

Ուշագրավ է այն փաստը, որ ի տարբերություն Երևանի մանկավարժների, մարզերի մանկավարժները հակված չեն որպես բռնություն դիտարկել իրենց կողմից ձեռնարկվող մի շարք գործողություններ /ականջ քաշել, սաստել ֆիզիկապես և այլն/, որոնք ըստ սահմանման բռնության դրսևորում են համարվում: Ավելին նրանք կարծում են, որ նման սահմանումները դրսից են պարտադրվում մեր հասարակությանը և հակասում են մեր ազգային հոգեկերտվածքին: Շատերը նշում են, որ ավանդական կրթության և դաստիարակության մեթոդները՝ իրենց պատժամիջոցների համակարգով, շատ ավելի արդյունավետ են եղել, քան այն ինչ այսօր պահանջում են մանկավարժներից:

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, բռնության վերաբերյալ ֆոկուս-խմբերի մասնակիցների պատկերացումներում գերակշռում են դրա հոգեբանական բաղադրիչի վերաբերյալ ակնարկումները, ինչպես նաև այն շեշտադրումները, որոնց անմիջական իրագործողները իրենք մանկավարժները չեն հանդիսանում: Ֆոկուս-խմբերի մասնակիցները միտված են առավել տարածված համարել երեխաների նկատմամբ բռնության այն դրսևորումները և հանրակրթության այն ուղղությունները, որոնց անմիջական սուբյեկտը իրենք չեն: Կարելի է պնդել, որ այս իմաստով ոլորտում առկա է պատասխանատվության տեղափոխության թաքնված միտում: Ընդ որում այս միտումը գործում է ինչպես խմբային այնպես էլ անձնական նույնականացման մակարդակներում: Այդպես Երևանի մանկավարժները բարձրաձայնում են մարզերում բռնության տարածվածության երևութի մասին՝ քիչ տարածված համարելով այն

մայրաքաղաքում: Հանրակրթական դպրոցների անձնակազմը առավել տարածված է համարում բռնությունը հատուկ և գիշերօթիկ հաստատություններում՝ բացառիկ համարելով այն հանրակրթական դպրոցներում: Ֆոկուս-խմբերից 3-ում երիտասարդ մասնակիցների կողմից նշվեց, որ ֆիզիկական ուժ դեռահասների նկատմամբ ավելի շատ կիրառում են ավագ սերնդի մանկավարժները, որոնց համար ընդունելի կարող են լինել այնպիսիս գործողություններ, ինչպիսիք են ցուցափայտով, գրքով կամ այլ իրերով հարվածելը, իրեր շարտելը, ականջից քաշելը և այլն: Յուրաքանչյուր հարցվողն էլ առանձին-առանձին բացառում է բռնության դրսևորումը սեփական դպրոցի պատերից ներս, միննույն ժամանակ մտաբերելով բռնության դեպքերի օրինակներ, այդ թվում ուսուցիչների կողմից, իր քաղաքի/համայնքի այլ դպրոցներում:

Վերլուծության տեսանկյունից այս փաստը մտահոգիչ է, քանի որ գործի է դրվում մի կարծրատիպ, ըստ որի, Հայաստանում ուսուցիչների կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության կիրառման դեպքերը չնչին տարածվածություն ունեն, իսկ բացահայտված դեպքերը ավելի շուտ բացառություն են, քան օրինաչափություն, ինչն էլ անորսալի է դարձնում դպրոցում բռնության մյուս (մասնավորաբար հոգեբանական) դրսևորումների պարբերական վերհանումն ու կանխարգելումը: Հատկապես այդ վտանգը ակնառու է դառնում երեխաների նկատմամբ ուսուցիչների կողմից հոգեբանական բռնության դեպքում, որի առկայությունը ուսումնական հաստատություններում ֆոկուս-խմբերի մասնակից-մանկավարժները տեսականորեն ընդունում են, բայց իրենց գործնական աշխատանքում այն հատուկ կերպով որևէ զննության կամ մշտադիտարկման չեն ենթարկում:

Ֆիզիկական բռնության առավել տարածված սուբյեկտ են համարվել հենց իրենք դեռահասները, այսինքն, ըստ ուսուցիչների, հիմնականում ֆիզիկական բռնություն կիրառվում է հասակակիցների կողմից, մեծամասամբ արական սեռի ներկայացուցիչների միջև: Այս համատեքստում քննադատական կարծիքների տեղատարափ նկատվեց ավագ դպրոցների ինստիտուտի գործունեության առումով: Այս բարեփոխումը ֆոկուս-խմբերի մասնակիցների կողմից դիտարկվում է իբրև դեռահասների միջև ֆիզիկական և բռնության այլ ձևերի առաջացմանը և ազդեցիկ վարքաձևերի ձևավորմանը նպաստող գործոն: Նպաստող գործոնների շարքում բոլոր խմբային քննարկումներում պարբերաբար կարևորվել է ՋԼՄ-ների, մասնավորապես հայրենական արտադրության սերիալների բացասական ազդեցությունը դեռահասների մոտ ֆիզիկական ուժի կիրառման և շեղվող վարքի ընդունելի լինելու մասին կարծրատիպերի ձևավորման իմաստով:

Արդյունքների համաձայն՝ մանկավարժներն առավել հաճախ հանդես են գալիս որպես հոգեբանական բռնության սուբյեկտներ, իսկ սեռական բռնությունն առօրեական ընկալման մեջ արտահայտված չլինելով, դիտարկվում է տարբեր աղբյուրներից ստացված դեպքերի մասին պատմությունների համատեքստում:

Առավել տարածված բռնության ձևերից համարվել է նաև դավանանքի պարտադրումը, որը դիտարկվում է երկկողմանի էֆֆեկտի ձևով: Մի կողմից բոլոր քննարկումներում հատկապես մարգարին ֆոկուս-խմբերում արդիական համարվեց տարբեր տեսակի աղանդներում և աղանդավորական շարժումներում դեռահասների ընդգրկվածության միտումը: Ընդ որում, առավել հաճախ դեռահասները ստիպողաբար են դառնում աղանդավոր՝ ծնողների պարտադրանքի ներքո: Բռնության դրսևորումներ լինում են նաև աղանդավորական դառնալու ինքնուրույն որոշում կայացնելու դեպքում՝ ծնողների և աղանդավոր գավակների միջև: Ըստ ֆոկուս-խմբերի մասնակիցների՝ աղանդավոր աշակերտները չեն հաճախում շաբաթօրյա դասերին, աղոթք են կատարում դասաժամին մյուսների ներկայությամբ, ստեղծում են կոնտր-մշակութային միավորումներ դպրոցների ներսում: Երևույթի երկրորդ էֆֆեկտը կապում են «Եկեղեցու պատմություն» առարկայի շրջանակներում աշակերտներին պարտադրվող կրոնական ուսմունքի դրույթների հետ, որոնք, ըստ էության, սահմանափակում են դավանանքի ազատության խնդիրները:

Մեջբերում ֆոկուս-խմբերից կրոնական բռնության առնչությամբ՝ «Եհովայի վկայի հոսանքի տակ էր ընկել, ու ծնողները դեմ էին: Հայրը դուռը փակում էր. կսպանեմ, կմորթեմ... Նա էլ՝ այ ինձ պատուհանից կզցեմ, եթե ինձ թույլ չտաք: Այսինքն՝ երեխան ինքը կրոնափոխ էր եղել և ինքն էր ընտրել այդ ճանապարհը, և ծնողները դեմ էին:...

«...նույնիսկ ամուսինները ամուսնալուծվել էին, որովհետև հայրը դեմ էր, մայրը իր երեխային բռնի տանում էր աղանդի հավաքներին: Երեխան ասում էր՝ ես ուզում եմ հայրիկիս հետ ապրեմ, չեմ ուզում գամ էդ հավաքներին, բայց բռնի տանում էին:...

«հատկապես մեր դպրոցում շատ կան աղանդավորներ: Հենց արտաքննապես էլ դուք արդեն տեսնում եք: Սկսենք նրանից, որ իրենք հագնում են շատ արտասովոր նեղ շրջագգեստներ և այլն: Դա արդեն բռնություն է երկկողմանի, քանի որ ուսուցիչները պարտադրում են, որ էդպես մի հագնվեք: Թե՛ հանդեսների ժամանակ, թե՛ առհասարակ: ... Չեն մասնակցում, չեն գալիս դասի, որովհետև մասնկացում են կրոնական ինչ-որ համակարգի:...»

Մանկավարժական կազմի ներկայացուցիչների հետ ֆոկուս-խմբային հարցազրույցների ընթացքում նկատվել է նաև մեկ այլ միտում, որը կապված է ուսուցիչների կողմից բռնության սուբյեկտիվ արդարացման կամ դրա դրդապատճառների ուռճացման հետ: Մասնավորապես, խոսքում հաճախ օգտագործվում են դատողության այնպիսի ձևեր կամ մտքի շարադրման եղանակներ, որոնք թույլ են տալիս որոշ պարագաներում բացատրելի, ընդունելի կամ պարտադրված համարել բռնի վարքի դրսևորումները:

Մեջբերում ֆոկլու-խմբերից ուսուցիչներին արդարացնելու վերաբերյալ՝ «Այսօր աշակերտը հազար անգամ ավելի պաշտպանված է... Աշակերտը փայլուն գիտի իր իրավունքները, բայց ահավոր վատ գիտի իր պարտավորությունները... Ու իրենք չեն լռում, իրենք շատ հանգիստ կարող են նայել ուսուցչին, խփել, ինչի դեպքեր մենք տեսնում ենք շատ հաճախ you-tube-ներում...»

«Հատուկ հրահրում են... Ձդայնացնում են: ...ասենք, կարող են ուսուցչին ներքաշել և ձայնագրել էղ ամեն ինչը: Մենք էսօր էնքան մի տեսակ անպաշտպան ենք :»

Դպրոցներում բռնություն համարյա չկա, քանի որ վախենում ենք բռնություն կիրառել երեխաների նկատմամբ, քանի որ նրանք ավելի շուտ բռնություն կկիրառեն մեր նկատմամբ:


...Եթե առաջ վախ կար իրանց մեջ, մենք կարողանում էինք խիստ լինել, հիմա այդպես չի, քանի որ գիտեն, որ գնալու են տուն իրանց ծնողին ասեն, իսկ նա գալու ա մեզ ասի, որ մենք սխալ ենք: Էլ ինչ բռնություն երեխաների նկատմամբ՝ մենք ենք ավելի շուտ բռնության ենթարկված երեխաների կողմից:

Հաճախակի են համարվել նաև անչափահասներին առանց գրանցման և թույլատվության աշխատանքի պարտադրելու դեպքերը, ըստ հարցված ուսուցիչների, հատկապես ստիպում են աշխատել հենց աշակերտների ծնողները առավել ծանր սոցիալական կարգավիճակից դուրս գալու ակնկալիքով:

Սեռական բռնության հիմնախնդիրը համարվում է մեր հասարակությունում առավել նուրբ և թաքնված թեմաներից: Ինչպես նշում էր ֆոկլու խմբի մասնակիցներից մեկը, այն ընդունված է քննարկել կիսաշշուկով, իսկ բարձրաձայնողները պախարակվում և իրենք են բարոյականության նորմ խախտողներ համարվում: Դպրոցներում սեռական բռնության մասին հարցերին մասնակիցները ժխտողական պատասխաններ էին տալիս, բացառում սեռական բռնության որևէ դրսևորում սեփական դպրոցում: Սակայն առավել անկեղծ քննարկումների արդյունքում բացահայտվեցին տվյալ դպրոցին ոչ անմիջականորեն առնչվող դեռահասների նկատմամբ սեռական բռնության կոնկրետ դեպքերի պատմություններ, որոնք ներկայացված են Հավելված 4-ում մասնակիցների խոսքից ուղիղ մեջբերումների ձևով:

Բռնության մեկնաբանումների առանձնահատկությունները ամփոփված են Պատկեր 1-ում, որից կարելի է եզրահանգել, որ **անհրաժեշտություն կա իրազեկման հատուկ միջոցառումներն ուղղել բռնության դրսևորման բոլոր օղակների, ձևերի և տիրույթների վերաբերյալ անձնակազմի գիտելիքները հստակեցնելու, համակարգելու և ավելացնելու ուղղությամբ:** Ընդ որում, հատուկ վերապատրաստման կարիք ունեն ոչ թե սոցիալական մանկավարժներն ու հոգեբանները, այլ հիմնական դասվար ուսուցչական կազմը, հատկապես աշխատանքային առավել մեծ ստաժ և բարձր տարիք ունեցող մանկավարժները:

Պատկեր 1. Բռնության մեկնաբանումները՝ ֆոկուս խմբերում:



1.2. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ինչպես վերը նշվեց, ֆոկուս խմբերի մասնակիցները քննարկումների ընթացքում մատնանշում էին, որ հանրակրթական դպրոցներում մանկավարժների կողմից բռնության դրսևորումները քիչ տարածված են: Այս հանգամանքը պայմանավորված է ոչ այնքան մանկավարժների կողմից ինքնավերահսկման առկայությամբ, այլ արտաքին վերահսկողության մեխանիզմների գործառնմամբ: Ընդ որում մայրաքաղաքում համարվում էր, որ բռնությունը տարածված է մարզերում, քանի որ այնտեղ արտաքին հսկման մեխանիզմները քիչ են և դեպքերը հեշտությամբ կոծկվում են: Իսկ մարզային ֆոկուս-խմբերում առհասարակ ժխտվում էր իրենց մարզում մանկավարժների կողմից բռնության որևէ տեսակի դրսևորումը դպրոցներում: Մարզերում առհասարակ առկա է խնդրի նկատմամբ մերժողական վերաբերմունք, մանկավարժները կատեգորիկ մերժում են դեպքերի առկայությունը: Միևնույն ժամանակ քննարկումների ընթացքում պարզվում է, որ ֆիզիկական որոշ գործողություններ, ինչպիսիք են ականջ քաշելը կամ ապտակը բավականին տարածված են:

Որպես դպրոցում բռնության դրսևորումներ քննարկվեցին անկարգ աշակերտներին կարգի հրավիրելու մանկավարժների կողմից կիրառվող միջոցները: Դրանք ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Դպրոցում անկարգ աշակերտների նկատմամբ կիրառվող մեթոդների գնահատականներ

Անկարգ աշակերտների նկատմամբ կիրառվող մեթոդները դպրոցում	արդյունավետության ֆոկուս խմբային գնահատականներ /1-նվազագույն, 5-առավելագույն/			ընդունելի լինելու ֆոկուս խմբային գնահատականներ /1-նվազագույն, 5-առավելագույն/		
	Միջին մարզերով	Միջին Երևան	Միջին	Միջին մարզերով	Միջին Երևան	Միջին
Բացատրական ներկայությամբ	3	3	3	3	3	3
Բացատրական առանձնագրույցներ	4	5	4	4	5	5
Ձայնը բարձրացնելը/բղավելը	2	2	2	1	2	2
Հոգեբանական ճնշում, նսեմացնող պատիժներ /անկյուն կանգնել, ավել, մեկուսացում և այլն/	1	1	1	2	1	1
Ապտակ/հրմշտոց	2	1	1	1	1	1
Հարվածներ կամ ծեծ	1	1	1	1	1	1

Յուրաքանչյուր ֆոկուս խմբի արդյունքում փորձ է արվել ստանալ խմբային ընդհանրական գնահատական հնչեցված մեթոդների վերաբերյալ: Ինչպես երևում է աղյուսակից, ուսուցիչների կողմից ֆիզիկական բռնության դրսևորումները աշակերտների հանդեպ համարվել են միանշանակ անարդյունավետ (գնահատականը 1) և անընդունելի (գնահատականը 1): Սակայն քննարկումներում մատնանշվել են դրանց կիրառման փաստեր (տես Հավելված 4): Որպես վերահսկման կարևորագույն մեխանիզմ նշվում են դպրոցի ադմինիստրացիայի կողմից պատահական դասալսումները, դասվարի անընդհատ վերահսկողությունը, նախարարության և այլ պատկան մարմինների կողմից պարբերական ստուգիչ այցերը:

Ըստ մասնակիցների, ֆիզիկական ուժի կիրառումը երեխաների նկատմամբ բացառվում է հատկապես տեսախցիկների և վիդեոմշտադիտարկման սարքեր ունեցող դպրոցներում, մասնավոր դպրոցներում: Տեսաձայնագրումը նվազեցնում է նաև բռնության դրսևորումները հասակակիցների միջև, այդ թվում դպրոցի բակում և հարակից տարածքում: Սակայն ավագ դասարանների աշակերտների միջև ֆիզիկական բռնության դեպքերը համարվել են խիստ տարածված ինչպես Երևանում այնպես էլ մարզերում: Երևան քաղաքի ֆոկուս խմբերին մասնակցած 3 ուսուցիչների կողմից նշվել է, որ, իրենց կարծիքով, նկատվում է դրանց աճի միտում. ընդհարումներ և ֆիզիկական ուժի կիրառմամբ կռիվներ լինում են գրեթե ամեն օր, իսկ խոշոր կռիվներ, այդ թվում սառը զենքի օգտագործմամբ, ուսուցիչներից մեկի պնդմամբ. «դպրոցում և բակում՝ առնվազն ամիսը մեկ»: Այս իմաստով հարցված մասնագետները կարևորել են դպրոցի ներսում աշակերտների անվտանգության երաշխավորման խնդիրը, որը տարբեր դպրոցներում տարբեր կերպ է լուծվում՝ տեսախցիկներ, պահակակետեր, մարզային դպրոցներում կիրառվում են նաև անցաթղթեր, որոնք հաշվառվում են օրվա սկզբին և վերջում, ուստիկանի հաստիքներ:

Անարդյունավետ և անընդունելի, բայց միևնույն ժամանակ հաճախակի կիրառվող է համարվել ուսուցիչների կողմից հոգեբանական ճնշումը աշակերտների վրա, որը վերահսկել արտաքին եղանակներով հնարավոր չէ: Այս դրսևորման դեմ պայքարը հնարավոր է աշակերտների և ծնողների ակտիվության դեպքում, հատկապես օգտակար են այս իմաստով համարվել տարբեր թեժ-գիծ ծառայությունները, որոնք արագ արձագանքում են բողոքներին: Որոշ դպրոցներում ակտիվորեն գործում են ծնողական և աշակերտական խորհուրդները, սակայն վերջիններս ձևական բնույթ ունեն մարզային դպրոցներում և արագ ախտորոշման գործառույթը չեն իրականացնում:

Թեժ-գիծ ծառայությունների, ծնողական և աշակերտական խորհուրդների գործունեությունը նույնպես զսպող գործոն է դառնում այն մանկավարժների համար, ովքեր հակված են հոգեբանական բռնության ենթարկել երեխաներին: Ուշագրավ է, որ ապտակն ու հոգեբանական ճնշումներն ավելի ընդունելի/արդյունավետ են մարզերի դպրոցական կոլեկտիվների համար (գնահատականը 2), ի տարբերություն Երևանյան ֆոկուս-խմբերի մասնակիցների (գնահատականը 1): Այս հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ բռնության նշված ձևերի բացառումը մեծապես տեղի է ունենում զսպող գործոնների ազդեցության ներքո:

Ինչպես իրենք հարցվողներն են նշում, մարզային բնակավայրերում բոլորն իրար ճանաչում են, և թեժ-գիծ կամ այլ աստիճաններ բողոքելը համարվում է ամոթալի: Արդյունքում անընդունելի համարվող ապտակներն ու անարդյունավետ նսեմացնող պատիժները մանկավարժների համար որոշ դեպքերում արդյունավետ և ընդունելի են դառնում:

Մեջբերում մարզային ֆոկուս-խմբերից՝ «Քանի որ ծնողը իրավունք ունի երեխայի վրա բարձր խոսելու, նրա արարքները սաստելու, նրան կարգի հրավիրելու, ինչ-որ տեղ նման իրավունք ունի նաև ուսուցիչը»
 «...Օրինակ՝ ինչու՞ ծնողը չի կարող իր երեխայի վրա զայրանալ կամ մի հատ էլ ապտակել, բայց եթե ծնողը կարող է, ուսուցիչը ինչու՞ չի կարող:»
 Լավ հիմա եկեք սենց անենք, եթե երեխայի վրա ջղայնանալը, ականջը քաշելը բռնություն է, ուրեմն ՀՀ-ում գիտեք քանի ընտանիք կա, որ երեխա ունեն, 360 հազար ունեք աշակերտ, ուրեմն 360 000 աշակերտի ընտանիքում Հայաստանում, գոյություն ունի բռնություն:

Բացատրական առանձնագրույցները ամենաարդյունավետ և ամենաընդունելի մեթոդն են համարվել աշակերտներին կարգի հրավիրելու համար (գնահատականներ 4 և 5): Սակայն հոգեբանական ճնշում գործադրելու հնարավորությունների առումով սրանք առավել վտանգավոր են, ինչպես նաև անվերահսկելի:

Չնայած այն հանգամանքին, որ սխալ մասնագիտական մոտեցման դեպքում առանձնագրույցները կարող են հոգեբանական մեծ վնաս հասցնել երեխաներին՝ հարցմանը մասնակից մանկավարժներից ոչ մեկը չի համարում, որ դրանք նպատակահարմար է իրականացնել հոգեբան/սոց.մանկավարժի հետ խորհրդատվությունից հետո:

Առհասարակ սոցիալական մանկավարժների/ սոց.աշխատողների/ հոգեբանների ներգրավվածությունը երեխաների նկատմամբ բռնության կանխարգելմանը բավարար համարել չի կարելի: Ըստ ստացված արդյունքների՝ հաճախ նրանք չեն ընդգրկվում երեխաների հետ աշխատանքում դասվարների և ուսուցիչների կողմից, իրենց դերն ու պարտականությունները սահմանափակված և անտեսված են: Միևնույն ժամանակ միջինում յուրաքանչյուր դասարանում, ըստ հարցվողների, լինում է 2-3 մեկուսացված աշակերտ, ում կարելի է բնութագրել հոգեբանական ընկճվածության հոգեվիճակով: Նրանցից շատերի ընկճվածությունը, հատկապես մարզային բնակավայրերում, ըստ հարցված ուսուցիչների, պայմանավորված է ընտանիքի ծանր սոցիալական կացությամբ: Ինչպես նշեցին ֆոկուս-խմբի մասնակիցները, եղել են նաև դեպքեր, երբ նման երեխաների հետ հոգեբանի աշխատանքի արդյունքում պարզվել է ընտանիքում մոր և երեխաների նկատմամբ ծեծի մասին:

Միևնույն ժամանակ, ֆոկուս-խմբերի արդյունքները ցույց են տալիս, որ ուսուցիչները չունեն հատուկ ուղեցույց-հրահանգներ բռնության ենթարկված երեխաներին բացահայտելու կամ նման դեպքերում հատուկ միջոցառումներ ձեռնարկելու իմաստով: Հիմնականում նրանք արձագանքում են տարերայնորեն, չեն դիմում հատուկ մասնագետների կամ կառույցների: Այս հարցում առավել ակտիվ են սոցիալական մանկավարժներն ու հոգեբանները, որոնք իրենց մասնագիտական կարողությունների շրջանակում օգնություն են ցուցաբերում, այդ թվում հարկ եղած ժամանակ համագործակցելով ոստիկանության և այլ կառույցների հետ:

Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ նշված մասնագետների հաստիքներն անհրաժեշտ է ավելացնել բոլոր դպրոցների համար՝ իջեցնելով հստակ ուղեցույցներ և հաշվետվողականության ձևանմուշներ:

Բռնության դրսևորումները դպրոցական սպասարկող կազմի կողմից հատկապես հավանական են համարվել պատժամիջոցների բացակայության իրավիճակներում՝ գյուղական դպրոցներում, մանկատներում և այլուր: Նշվել է նաև, որ առկա է անհավասարաչափ ուշադրություն տարբեր դպրոցների նկատմամբ նախարարության և այլ վերահսկող կառույցների կողմից: Ֆոկուս-խմբերի մասնակիցների պնդմամբ՝ որոշ դպրոցներում այցերը լինում են հաճախակի (ամիսը մեկ և ավելի անգամ), մյուսներում հազվադեպ և ժամանակացույցից շեղումներով (տարին մեկ և պակաս):

Այլ չափահասների կողմից երեխաների նկատմամբ սեռական բռնության դրսևորումների առումով քննարկվել են սեռական դաստիարակության հիմնախնդիրները, ինչպես նաև դեռահաս տարիքի աղջիկների կողմից սեռական գրավչություն առաջացնող վարքի ակտիվ ցուցաբերումը:

Մայրաքաղաքի ֆոկուս-խմբերի մասնակիցները նշում են, որ աղջիկների մոտ 80% հակված է հագուստի, հատուկ հարդարանքի, սեթևեթանքի միջոցով գրավել արական սեռի ներկայացուցիչների ուշադրությունը, այդ թվում դպրոցի արական սեռի չափահաս անձնակազմի՝ ուսուցիչների, անվտանգության մասնագետների/ոստիկանների: Ընդ որում,

դեռահաս-աղջիկները նման վարքով նպատակ ունեն ընդամենը գայթակղելու տղամարդկանց և չեն ենթադրում սեռական հարաբերություններ: Բայց որպես հետևանք, ֆոկլուս-խմբերի մասնակիցները մատնանշում են, որ հատկապես մարզային ուսումնական հաստատություններում, դա բավականին հաճախ ավարտվում է անչափահաս տարիքում աղջիկներին փախցնելու կամ պարտադրված ամուսնությունների պրակտիկայով:

Մեջբերում դասախոսների հարցազրույցներից

«Էնտեղ կա, որ 9 ամյա բազայով են նստում քոլեջ, կան 10, 15, 16, 17 տարեկան տղաներ, աղջիկներ: ...Ու եղել ա դեպքեր, որ երեխան նորից լացելով հետ ա եկել քոլեջի պահակին, տնօրենին դիմել ա՝ այ էս տղան գալիս ա հետևիցս, քաշում է, պահանջում է, որ իր հետ խոսես, ձեռք է տալիս: Այդպիսի բռնություններ կոնկրետ մեր քոլեջում շատ-շատ ա: Ամիսը մի անգամ մեկ էլ պարտադիր տեսնում ենք աղջիկ են փախցրել 16 տարեկան, շատ-շատ ենք մենք էդպիսի դեպքեր տեսնում:»

Չնայած ծնողների և աշակերտների հետ տարվող աշխատանքներին՝ սեքսուալության նման դրսևորումները կանխել հնարավոր չի լինում: Որպես զսպող գործոններ են դիտարկվում համազգեստի պարտադրումը, շպարի և այլ հարդարանքի բացառումը դպրոցական կյանքից, որն էլ ծնողներն ու երեխաները հաճախ պիտակավորում են որպես բռնություն իրենց կամքի հանդեպ: Հարցմանը ընդգրկված դպրոցներից մի քանիսում հատուկ դասընթացներ են կազմակերպվել առողջ ապրելակերպի թեմայի շրջանակներում, այդ թվում դպրոցի բժշկի մասնակցությամբ, բարձրակրունկ կոշիկների, շպարի, նեղ տաբատների հետևանքները ներկայացնելու համար: Սակայն ինչպես պնդում են ուսուցիչները նման դասընթացների կարիք կա նախ և առաջ ծնողների համար, ովքեր մեծամասամբ չեն վերահսկում իրենց երեխաների արտաքին տեսքը՝ հատկապես ավագ դպրոց ուղարկելուց հետո:

Այս իմաստով, ֆոկլուս խմբերի մասնակիցները մատնանշում են սեռական կրթության հատուկ հայեցակարգի բացակայությունը, ինչպես նաև արական սեռի մանկավարժների, աշխատանքային արտագաղթի հետևանքով ընտանիքում հայրական դաստիարակության պակասը:

Ֆոկլուս-խմբերի ընթացքում բարձրաձայնվել են նաև սեռավարակների դեմ պաշտպանության և այլ հարակից թեմաներով տարբեր կազմակերպությունների կողմից դպրոցներում կազմակերպվող դասընթացների ցածր մակարդակն ու անվերահսկելիությունը: Չնայած, որ դրանք պետք է իրականացվեն միմիայն հիմնական ուսուցչի ներկայությամբ հաճախ կազմակերպիչները առանձին են հավաքում երեխաներին, և հետևանքները սովորաբար ոչ թե համակարգված գիտելիքի ձեռք բերման հետ են կապված, այլ սեռական գրգռվածության կամ կաշկանդվածության հետ:

Ամփոփելով դպրոցներում բռնության դրսևորումների վերահսկման վերաբերյալ ֆոկլուս-խմբերի արդյունքները, կարելի է նշել, որ բռնության դեմ պայքարի գլխավոր միջոցներից է աշակերտ-ծնող-մանկավարժ եռաստիճան իրազեկման համակարգի ներդրումը, որը պետք է մշակվի և ներդրվի պետական կառույցների կողմից, իրագործվի/մատուցվի տարբեր մասնագիտական խմբերի /այդ թվում ՀԿ-ների/ աջակցությամբ և մանրամասնորեն վերահսկվի տեղերում դպրոցի տնօրինության և դաս.դեկների կողմից:

**ԳԼՈՒԽ II. ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

2.1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնության տարածվածությունը չափելու նպատակով մշակված ինդիկատորները կարող են խմբավորվել 3 հիմնական տիրույթներում՝ ընտանիք, ուսումնական հաստատություններ և ընկերական շրջապատ, որոնք համեմատելի են բռնության դեպքերի առկայության հարաբերական ցուցանիշներով: **Յուրաքանչյուր ցուցանիշ⁷ կարող է տատանվել 1-ից 0 միջակայքում, որտեղ 1-ը ֆիզիկական ուժի/բռնության առավելագույն տարածվածությունն է, իսկ 0-ն նվազագույն:** Ստացված արդյունքներն՝ ըստ նվազման կարգի, համապարփակ կերպով ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Ֆիզիկական բռնության տարածվածության ցուցանիշներ

	Ֆիզիկական բռնության կիրառման դեպքեր	Ցուցանիշ
1.	Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից	0,2
2.	Հասակակից հարևանների/բակի հասակակիցների կողմից	0,18
3.	Ուսուցիչների/դասախոսների կողմից	0,07
4.	Ընտանիքում անդամների կողմից	0,05
5.	Այլ սուբյեկտների (ոստիկանություն և այլն)	0,04

Ինչպես երևում է աղյուսակից, ընդհանուր առմամբ ֆիզիկական բռնության ցուցանիշները բավականին ցածր են /գտնվում են տարածվածության նվազագույն շեմին ավելի մոտ/: Սակայն առավել մտահոգիչ հանգամանքը կայանում է նրանում, որ ֆիզիկական բռնության տարածվածության հիմնական տիրույթ հանդես են գալիս հենց ուսումնական հաստատությունները՝ դպրոցներն ու բուհերը: Ընդ որում այստեղ ֆիզիկական բռնությունը կիրառվում է 2 առաջնային սուբյեկտների կողմից՝ համադասարանցիներ (առավելագույն չափով, քանի որ ցուցանիշը ամենաբարձրն է) և ուսուցիչներ/դասախոսներ (55 հարցվողի կողմից նշվել են ուսուցիչների/դասախոսների կողմից իրենց կամ իրենց մտերիմ ընկերների նկատմամբ հաճախ/երբեմն ֆիզիկական ուժ կիրառելու դեպքեր):

Ստացված արդյունքների վերլուծությունից կարելի է նաև եզրահանգել, որ հասակակիցների միջև բռնությունն ավելի տարածված է Երևանում, այնուհետև Հյուսիս

⁷ Ցուցիշները հաշվարկված են՝ հաշվի առնելով ֆիզիկական բռնության մասին դրական պատասխանների հարաբերակցությունը տվյալ հարցին պատասխանողների ընդհանուր թվին:

կլաստերում (Լոռի և Տավուշ մարզերում) և Հարավային կլաստերում (Վայոց Ձոր և Սյունիք մարզերում): Մանկավարժների կողմից ֆիզիկական բոնության դրսևորումների իմաստով առավել բռնի է նույնպես մայրաքաղաքը, մարզերում ցուցանիշներն ավելի ցածր են և բավականին մոտ են միմյանց (տես Աղյուսակ 7, 8): Ընդհանուր առմամբ, ֆիզիկական բոնության ցուցանիշներն ավելի ցածր են մասնավոր դպրոցների աշակերտների պատասխաններում, քան պետական:

Աղյուսակ 7. Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից ֆիզիկական ուժ կիրառելու դեպքերը՝ ընտրանքային կլաստերներում

		Արդյո՞ք Ձեր շրջապատում եղե՞լ են դեպքեր, երբ Ձեր կամ Ձեր հասակակից ընկերներից մեկի հանդեպ կիրառվել է բոնություն համադաս./համակուրս-ի կողմից			Ընդամենը
		Այո, հաճախ	Այո, երբեմն	Ոչ	
Բնակավայր	Կլաստեր 1 - Երևան	2.5%	26.1%	71.4%	100.0%
	Կլաստեր 2 - Հյուսիս		18.1%	81.9%	100.0%
	Կլաստեր 3 - Հարավ		8.0%	92.0%	100.0%
Ընդամենը		1.4%	19.7%	78.9%	100.0%

Աղյուսակ 8. Ուսուցիչների/դասախոսների կողմից ֆիզիկական ուժ կիրառելու դեպքերը՝ ընտրանքային կլաստերներում

		Արդյո՞ք Ձեր շրջապատում եղե՞լ են դեպքեր, երբ Ձեր կամ Ձեր հասակակից ընկերներից մեկի հանդեպ կիրառվել է բոնություն ուսուցիչների կողմից			Ընդամենը
		Այո, հաճախ	Այո, երբեմն	Ոչ	
Բնակավայր	Կլաստեր 1 - Երևան	.9%	7.5%	91.6%	100.0%
	Կլաստեր 2 - Հյուսիս	.9%	4.3%	94.8%	100.0%
	Կլաստեր 3 - Հարավ	.4%	4.9%	94.6%	100.0%
Ընդամենը		.8%	6.3%	92.9%	100.0%

Ֆիզիկական բոնության դրսևորման առումով նվազագույն ցուցանիշները (0.05) ստացվել են ընտանիքի անդամների կողմից ֆիզիկական ուժ կիրառելու դեպքերի վերաբերյալ: Ֆիզիկական բոնության սուբյեկտների ստորակարգությունը գննելու պարագայում՝ պետք է առավել բռնի սուբյեկտ համարել հենց իրենց դեռահասներին. ֆիզիկական ուժ միմյանց հանդեպ հասակակիցները կիրառում են առավելագույն չափով, ինչպես դպրոցում/Բուհում, այդպես էլ բակում/փողոցում այլուր (տարածվածության ցուցանիշները համապատասխանաբար՝ 0,2 և 0,18):

Հետազոտության ընթացքում փորձ է կատարվել նաև տարբերակել ֆիզիկական բոնության ինտենսիվ ձևերի տարածվածությունը նշված տիրույթներում: Որպես առավել ինտենսիվ դրսևորման ձև դիտարկվել է հարվածելը/ծեծելը, որպես նվազ ինտենսիվ՝ ապտակել/հրմշտելը: Արդյունքում հարաբերական ցուցանիշները կրկին ձգտում են նվազագույն շեմին, սակայն դրանց մանրակրկիտ վերլուծությունը

բացահայտում է, որ ծեծն առավել տարածված է հասակակիցների կողմից միմյանց հանդեպ (0.02), այնուհետև ուսուցիչների կողմից (նշվել է 16 դեպք) և առավելապես զրոյին ձգտող ցուցանիշը ստացվել է ընտանիքի անդամների կողմից դեռահասներին ծեծելու վերաբերյալ (0.009): Այս տվյալներն, ըստ էության, հակասում են նախորդ գլխում ներկայացված ուսուցիչների այն կարծիքին, որ ֆիզիկական բռնությունը դպրոցներում նվազ տարածված է, քան ընտանիքներում, և որ ֆիզիկական ուժ երեխաների հանդեպ ավելի հաճախ կիրառում են ընտանիքի անդամները, քան մանկավարժները (տես Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Ֆիզիկական բռնության դրսևորումների տարածվածության ցուցանիշներ

Ֆիզիկական բռնության սուբյեկտները	Ֆիզիկական բռնության դրսևորումների ցուցանիշները	
	Ապտակել/ Հրմշտել	Հարվածել/ Ծեծել
Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից	-	0,07
Ուսուցիչների/դասախոսների կողմից	0,06	0,02
Ընտանիքում անդամների կողմից	0,04	0,009

Ընտանիքում ֆիզիկական բռնության ոչ ինտենսիվ ձևերը (հրմշտոցն ու ապտակը) հատկապես տարածված են նյութապես առավել անապահով ընտանիքներում, ընդ որում, որքան ավելի բարեկեցիկ են բնութագրել իրենց ընտանիքը հարցվողները, այդքան ավելի քիչ է նրանց հանդեպ կիրառվում նշված վարքաձևը (տես Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Ապտակի և հրմշտոցի կիրառումը ընտանիքում՝ ըստ բարեկեցության աստիճանի

		Ծնողների/ընտանիքի այլ անդամների հետ Ձեր հարաբերություններում որքա՞ն հաճախ են Ձեզ ապտակում/ հրմշտում են			Ընդամենը
		Հաճախ	Երբեմն	Երբեք	
Մանդուղքի n ^o ր աստիճանին կտեղավորեք Ձեր ընտանիքը՝ նյութական ապահովության տեսանկյունից	1		33.3%	66.7%	100.0%
	2		5.0%	95.0%	100.0%
	3	.2%	3.6%	96.2%	100.0%
	4	.3%	3.6%	96.1%	100.0%
	5		3.1%	96.9%	100.0%
Ընդամենը		.3%	3.7%	96.0%	100.0%

Այս իմաստով կապ է նկատվում նաև ապտակ/հրմշտոց կիրառելու և հարցվողների բնակության վայրի միջև: Կարելի է նկատել, որ ֆիզիկական բռնության այս ձևն առավել տարածված է Երևանում և ոչ թե մարզային կլաստերներում, սակայն գյուղ-քաղաք տեսանկյունից բաշխումները ցույց են տալիս, որ գյուղական բնակավայրերում այն մի փոքր ավելի շատ է կիրառվում, քան քաղաքներում (տես Աղյուսակ 11, 12):

Աղյուսակ 11. Ապտակ/հրմշտոցի կիրառումը ընտանիքում՝ ըստ կլաստերների

		Ծնողների/ընտանիքի այլ անդամների հետ Ձեր հարաբերություններում որքա՞ն հաճախ են Ձեզ ապտակում/ հրմշտում են			Ընդամենը
		Հաճախ	Երբեմն	Երբեք	
Բնակավայր	Կլաստեր 1 - Երևան	.5%	5.7%	93.9%	100.0%
	Կլաստեր 2 – Հյուսիս		1.7%	98.3%	100.0%
	Կլաստեր 3 – Հարավ		.9%	99.1%	100.0%
Ընդամենը		.3%	3.7%	96.0%	100.0%

Աղյուսակ 12. Ապտակ/հրմշտոցի կիրառումը ընտանիքում՝ ըստ բնակավայրի տեսակի

		Ծնողների/ընտանիքի այլ անդամների հետ Ձեր հարաբերություններում որքա՞ն հաճախ են Ձեզ ապտակում/ հրմշտում են			Ընդամենը
		Հաճախ	Երբեմն	Երբեք	
Բնակավայր	Քաղաք	.3%	4.3%	95.4%	100.0%
	Գյուղ		1.4%	98.6%	100.0%
Ընդամենը		.3%	3.7%	96.0%	100.0%

Դեռահաս-հասակակիցների կողմից միմյանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը առավել տարածված լինելով՝ նաև ստանում է դրսևորման տարբեր ձևեր: Մասնավորապես «Որքա՞ն հաճախ են Ձեր շրջապատի հասակակիցները միմյանց հանդեպ կիրառում հետևյալ վարքաձևերը...» հարցի պատասխանները թույլ են տվել բացահայտել ֆիզիկական բռնության դրսևորումներ՝ կապված միմյանց փականելու, գումար վճարել ստիպելու, իրեր առգրավելու և աշխատանք/ծառայություն մատուցելու հետ (տես Աղյուսակ 13): Չնայած, ընդհանուր առմամբ, ցուցանիշները բավականին ցածր են՝ առավել մտահոգիչ է միմյանց աշխատանքի պարտադրելու և գումար վճարելու վարքաձևերի տարածվածությունը (հավաքական տոկոսային համամասնությունը կազմում է համապատասխանաբար՝ 7,2% և 2,7%):

Աղյուսակ 13. Հասակակիցների կողմից միմյանց հանդեպ ֆիզիկական բռնության դրսևորումներ

Ֆիզիկական բռնության այլ դրսևորումներ	Հաճախ		Երբեմն		Երբեք		Ընդամենը	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
Ստիպել գումար տալ/վճարել	1	0.1	20	2.6	759	97.3	780	100
Իրեր առգրավել	4	0.5	31	4	745	95.5	780	100
Պարտադրել աշխատանք/ծառայություն կատարել	1	0.1	55	7.1	724	92.8	780	100
Փականել	0	0	5	0.6	775	99.4	780	100

2.2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱՌԻԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Բռնության ցուցանիշների հաշվարկ է կատարվել նաև հոգեբանական բռնության դրսևորման ոլորտների և սուբյեկտների համար: Արդյունքում ստացված ցուցանիշները միջինում ավելի բարձր են, քան ֆիզիկական բռնության ցուցանիշները, հատկապես աճ

է նկատվում ուսուցիչների/դասախոսների կողմից կիրառվելու իմաստով. ֆիզիկական բռնության ցուցանիշը՝ 0,07 է, իսկ հոգեբանական բռնության ցուցանիշը՝ 0,17: Կրկին ըստ ոլորտների առավել բռնի կարող է համարվել ուսումնական հաստատությունների ոլորտը, որում հոգեբանական բռնության ցուցանիշը գերազանցում է ընտանիքում և փողոցում հոգեբանական բռնության տարածվածությանը (տես Աղյուսակ 14):

Աղյուսակ 14. Հոգեբանական բռնության տարածվածության ցուցանիշներ

	Հոգեբանական բռնության կիրառման դեպքեր	Ցուցանիշ⁸
1.	Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից	0,21
2.	Հասակակից հարևանների/բակի հասակակիցների կողմից	0,06
3.	Ուսուցիչների/դասախոսների կողմից	0,17
4.	Ընտանիքում անդամների կողմից	0,14
5.	Այլ սուբյեկտների (ոստիկանություն և այլն)	0,03


Ինչպես հասակակիցների, այդպես էլ ուսուցիչների և ընտանիքի անդամների կողմից, հոգեբանական բռնության առավել շատ են ենթարկվում իգական սեռի երեխաները: Աղջիկները ավելի հաճախ են զգացել իրենց հոգեբանորեն խիստ ճնշված, նսեմացված, հուսալքված՝ համադասարանցիների, ուսուցիչների և ընտանիքի անդամների գործողությունների հետևանքով:

Ուշագրավ է նաև, որ ի տարբերություն ֆիզիկական բռնության, հոգեբանական բռնությունը ուսուցիչների կողմից գրեթե հավասարապես է տարածված ինչպես մասնավոր, այդպես էլ պետական ուսումնական հաստատություններում:


Ընտանիքում հոգեբանական բռնության դրսևորումներն հետազոտվել են առավել մանրամասնորեն՝ փորձելով վեր հանել հոգեբանական աններդաշնակության առումով առավել ռիսկային ընտանիքները: Այս նպատակով հարցվողներին տրվել էր 3 հիմնական հարց՝ ընտանիքում հոգեբանական մթնոլորտի, ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունների և ընտանեկան վիճաբանությունների ընթացքում ֆիզիկական ուժ կիրառելու մասին (տես Գծապատկեր 1, 2, 3):

⁸ Յուրաքանչյուր ցուցանիշ կարող է տատանվել 1-ից 0 միջակայքում, որտեղ 1-ը հոգեբանական բռնության առավելագույն տարածվածությունն է, իսկ 0-ն նվազագույն: Ցուցիչները հաշվարկված են՝ հաշվի առնելով հոգեբանական բռնության մասին դրական պատասխանների հարաբերակցությունը սովյալ հարցին պատասխանողների ընդհանուր թվին:


Գծապատկեր 1. Ինչպե՞ս կրնութե՞ք մթնոլորտը Ձեր ընտանիքում



Գծապատկեր 2. Ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունները



Գծապատկեր 3. Ընտանիքում ֆիզիկական ուժ կիրառելը



Հարցերի պատասխանների վիճակագրական խմբավորումը թույլ է տալիս պնդել, որ ըստ հարցվողների, հայաստանյան ընտանիքները գերազանցապես բնութագրվում են հոգեբանական լարվածության ցածր մակարդակով և հոգեբանական աններդաշնակության ռիսկերի բացակայությամբ⁹: Այդպես հարցվողների ընտանիքների 94,4%-ում արձանագրվում

⁹ Այս պատկերը կարող է մեկնաբանվել վերապահումով, քանի որ հնարավոր է, որ հարցված դեռահասների մի մասը այս հարցում բավարար անկեղծություն չի ցուցաբերել: Բայց նույնիսկ այդ պարագայում, ցուցանիշները միջինից բարձր կլինեն:

Է աններդաշնակության ռիսկի գործոնների բացակայություն, միայն մնացած 5,6% -ն ունի ռիսկի մեկ կամ ավելի գործոններ: Այս իմաստով ուշագրավ է, որ մի փոքր ավելի ռիսկային են քաղաքաբնակ ընտանիքները (տես Աղյուսակ 15): Հոգեբանական աններդաշնակության առումով ռիսկերը առավել վառ են արտահայտված ընդարձակ (ոչ նույնը) ընտանիքներում, որտեղ ծնողներն ունեն միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն:

Աղյուսակ 15. Ընտանիքում բռնության ռիսկերը՝ ըստ բնակավայրերի

Բնակավայր	Ընդամենը		
	Ռիսկի գործոնի բացակայություն	Ռիսկի մեկ կամ ավելի գործոնների առկայություն	
Քաղաք	94.0%	6.0%	100.0%
Գյուղ	95.9%	4.1%	100.0%
Ընդամենը	94.4%	5.6%	100.0%

Ընտանիքում բավականին տարածված է համարվել ծնողների կողմից գայրացած ժամանակ երեխաների վրա բարկությունը տեղափոխելը: Հարցված դեռահասների կեսից ավելին պնդում են, որ իրենք երբեմն (հարցվածների 50,3%) կամ հաճախ (հարցվածների 2,3%) հայտնվել են նման իրավիճակում (տես Աղյուսակ 16): Ընտանիքում չափազանց տարածված է երբեմն (հարցվածների 67,9%) կամ հաճախ (հարցվածների 4,2%) երեխաների վրա բղավելն ու գոռալը, նվազ տարածված են այլ ոչ-մարմնական պատիժները (հարցվածների մոտ 11%), օրինակ որևէ իրից գրկելը:

Աղյուսակ 16. Ընտանիքի անդամների կողմից երեխաների հանդեպ հոգեբանական բռնության դրսևորումներ

Հոգեբանական բռնության դրսևորումներ	Հաճախ		Երբեմն		Երբեք		Ընդամենը	
	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%
Զայրացած/լարված լինելով՝ տեղափոխում են երեխայի վրա բարկությունը	18	2,3	392	50,3	370	47,4	780	100
Բարկանում/բղավում են	33	4,2	530	67,9	217	27,8	780	100
Այլ ոչ-մարմնական պատիժներ են կիրառում	6	0,8	84	10,8	690	88,5	780	100

Հայտնի է, որ հոգեբանական բռնության ձևերից է համարվում նաև ազատության սահմանափակումը և գործողությունների չափից ավելի վերահսկումը մի շարք ուղղություններով: Բռնության նման դրսևորումների չափումը ստանալու նպատակով հարցվողներին տրվել էր հարց այն մասին, թե որքանով են իրենց ծնողները/ընտանիքի այլ անդամները վերահսկում իրենց կյանքի տարբեր կողմերը: Արդյունքները համադրված են Աղյուսակ 17-ում, որտեղից երևում է, որ ըստ երեխաների մեծամասնության իրենց անձնական կյանքը վերահսկվում է չափի մեջ: Երկու ծայրահեղ բևեռները (չափից ավելի վերահսկողությունն ու անվերահսկելիությունը) բավականին մոտ ցուցանիշներ ունեն: Ընդ

որում, անվերահսկելի է հատկապես երեխաների արտաքին տեսքը և շփումները ընկերների հետ:

Աղյուսակ 17. Որքանով են ծնողները վերահսկում երեխաների կյանքը.

Վերահսկում են	Զափից ավելի են վերահսկում		Զափի մեջ են վերահսկում		Առհասարակ չեն վերահսկում		Ընդամենը	
	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%
Արտաքին տեսքը /հագուստ, սանրվածք և այլն/	56	7.2	639	81.9	85	10.9	780	100
Ազատ տեղաշարժ	51	6.5	655	84	74	9.5	769	100
Շփումներ ընկերների հետ	36	4.6	572	73.3	172	22.1	780	100
Դասապատրաստումը	156	20	499	64	125	16	780	100

Ուշագրավ է, որ արտաքին տեսքը չափից ավելի վերահսկելու մասին ավելի շատ նշում են արական, քան իգական սեռի հարցվողները, իսկ ազատ տեղաշարժը սահամանափակելու մասին՝ ավելի շատ իգական սեռի հարցվողները:

Ինչպես հայտնի է, ծնողների կողմից առհասարակ չվերահսկվող դեռահասները նույնպես ռիսկի խումբ են համարվում տարբեր տեսակի շեղվող վարքաձևերի դրսևորման տեսանկյունից: Հարցման մասնակցած դեռահասների այն խումբը, ովքեր առհասարակ չեն վերահսկվում ծնողների և ընտանիքի այլ անդամների կողմից առավել մանրամասն ուսումնասիրվել է սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների իմաստով: Պարզվում է, որ անվերահսկելիների խումբը բացարձակ մեծամասնությամբ քաղաքային բնակիչներից է, ավելի կոնկրետ Երևան քաղաքի բնակիչներից: Առավելապես այն ներկայացված է արական սեռի հարցվողներով, ովքեր ունեն միջին և միջինից բարձր բարեկեցության աստիճան: Անվերահսկելիները չնչին տոկոսաչափ են կազմում գյուղական բնակչության ծայրահեղ աղքատ ներկայացուցիչ-հարցվողների շրջանում: Ընդ որում, հյուսիսային մարզերում անվերահսկելիների խումբը գրեթե 2 անգամ մեծ է հարավային մարզի հետ համեմատությամբ, բայց մոտ 8 անգամ փոքր է մայրաքաղաքի համեմատությամբ: Այսինքն, քաղաքային մշակույթը իր գերծանրաբեռնվածությամբ առավել ազատություն է տալիս դեռահասներին, ինչպես արտաքինի, այնպես էլ ազատ տեղաշարժվելու, ընկերների հետ շփվելու և այլ ուղղություններով:


Շրջապատի հասակակիցների կողմից հոգեբանական բռնությունը դրսևորվում է միմյանց ծաղրելու /մեկուսացնելու/ նվաստացնելու և վախացնելու ձևով: Ինչպես երևում է Աղյուսակ 18-ից՝ ցուցանիշները զգալիորեն բարձր են, քան ֆիզիկական բռնության ձևերի պարագայում: Երեխաների գրեթե կեսը նշում են, որ իրենց շրջապատի հասակակիցները միմյանց երբեմն կամ հաճախ ծաղրում/մեկուսացնում և նվաստացնում են (հավաքական տոկոսային համամասնությունը կազմում է՝ 47.2%), մոտ 12%-ն էլ նշում են միմյանց վախեցնելու մասին:

Աղյուսակ 18. Հասակակիցների կողմից միմյանց հանդեպ հոգեբանական բռնության դրսևորումներ

Հոգեբանական դրսևորումներ	բռնության	Հաճախ		Երբեմն		Երբեք		Ընդամենը	
		թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
Ծաղրել, նվաստացնել	մեկուսացնել,	40	5.1	328	42.1	412	52.8	780	100
Վախացնել		2	0.3	88	11.3	690	88.5	780	100

Այս իմաստով, օգտակար է նաև վերլուծել հասակակից շրջապատի առանձնահատկությունները և հարաբերությունների ընդհանուր մթնոլորտը: Երեխաները հիմնականում շփվում են իրենց հասակակիցների հետ, նաև իրենցից տարիքով մեծերի, գրեթե չունեն ընկերներ իրենցից փոքր տարիքային խմբում (տես Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Ովքե՞ր են Զեր ընկերները



Առավել ջերմ են բնութագրվել հարաբերությունները բակի հասակակիցների և ուսուցիչների հետ, քան համադասարանցիների/համակուրսեցիների հետ (տես Աղյուսակ 19), ինչը կրկին անգամ վկայում է դպրոցական առօրյաում տարաձայնությունների առաջացման առավել մեծ ներուժի մասին:

Աղյուսակ 19. Ընկերական և ուսումնական միջավայրում հարաբերությունների բնութագիրը

Հարաբերությունները	Հիմնականում ջերմ		Նայած ժամանակ		Հիմնականում լարված		Ընդամենը	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
Համադասարանցիների/ համակուրսեցիների հետ	620	79.5	152	19.5	8	1	780	100
Հասակակից հարևանների/բակի հասակակիցների հետ	615	78.8	148	19	6	0.8	769	100
Հիմնական ուսուցիչ/դասախոսների հետ	628	80.5	135	17.3	17	2.2	780	100

2.3. ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՑԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Սեռական բռնության վերաբերյալ հիմնական հարցերը տրվել են ներդիր թերթիկի ձևով՝ միայն ուսանող-հարցվողներին, քանի որ առաջացնում էին ոչ ցանկալի հետևանքներ դպրոցական տարիքի երեխաների հետ փորձնական հարցազրույցների ժամանակ: Սակայն համադրական ցուցանիշների հաշվարկը համեմատելի է նախորդ հաշվարկված ցուցանիշների հետ, քանի որ հաշվի է առնում համապատասխան թվային փոփոխությունները: Այսպիսով իրենց հասակակիցների հանդեպ սեռական բռնության կամ սեռական բնույթի ոտնձգությունների մասին ստացված պատասխաններից ձևավորված ցուցանիշները ներկայացված են նախորդ բաժիններում քննարկված ոլորտների համար Աղյուսակ 20-ում:

Ստացված բոլոր ցուցանիշները ձգտում են զրոյի, բացառությամբ հասակակիցների կողմից (70 հարցվողներից 16-ը լսել են հասակակիցների կողմից սեռական բռնության դեպքերի մասին) և այլ չափահասների կողմից (70 հարցվողներից 12-ը լսել են այլ չափահասների կողմից սեռական բռնության դեպքերի մասին) ցուցանիշների:

Աղյուսակ 20. Սեռական բռնության տարածվածության ցուցանիշներ

	Սեռական բռնության կիրառման դեպքեր	Ցուցանիշ ¹⁰
1.	Ընտանիքի անդամի/մոտ ազգականի կողմից	0,04
2.	Ուսուցիչների/դասախոսների կողմից	0,01
3.	Հասակակիցների կողմից	0,23
4.	Այլ չափահաս անձանց կողմից	0,17

Ցուցանիշներն անշուշտ կարող են հիմք հանդիսանալ Հայաստանում երեխաների հանդեպ սեռական բռնության նվազագույն տարածվածության մասին եզրահանգելու համար, սակայն միևնույն ժամանակ հաջորդ հարցերից պարզ է դառնում, որ այս ցուցանիշը վերաբերվում է սեռական բռնության ակնհայտ կամ բացահայտ դրսևորումներին: Մինչդեռ նկատվում է միտում տեղեկատվությունը սքողելու կամ թաքցնելու, այսինքն ցուցանիշը հաշվի չի առնում սեռական բռնության թաքուն պահված կամ լատենտ դրսևորումները:

Դեպքերի մասին լսած հարցվողների ժողովրդագրական բնութագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ իրենց հասակակիցների հանդեպ սեռական բռնության դեպքերի մասին լսել են ավելի շատ աղջիկները, քան տղաները: Ուշագրավ է, որ եթե ընտանիքի անդամների, հասակակիցների և այլ չափահասների կողմից սեռական բռնության մասին աղջիկներից դրական պատասխաններ ստացվել են մի փոքր ավելի շատ,

¹⁰ Յուրաքանչյուր ցուցանիշ կարող է տատանվել 1-ից 0 միջակայքում, որտեղ 1-ը սեռական բռնության առավելագույն տարածվածությունն է, իսկ 0-ն նվազագույն: Ցուցիչները հաշվարկված են՝ հաշվի առնելով սեռական բռնության մասին դրական պատասխանների հարաբերակցությունը տվյալ հարցին պատասխանողների ընդհանուր թվին:

քան տղաներից, ապա ուսուցուցիչների/դասախոսների կողմից սեռական բռնության դեպքերի մասին նշել են միայն արական սեռի հարցվողները:

Բազմակի ընտրությամբ այն հարցին, թե որտեղից են տեղեկացել այդ դեպքերի մասին, հարցվողների հնչեցրած պատասխանները հիմնականում կուտակվել են «ընկերներից», «ԶԼՄ-ներից» և «ինտերնետից» տարբերակների միջև: Այս իմաստով հատկապես կարևոր է, որ անձնական փորձի/ականատես դառնալու/կամ սեփական անձի դեմ ուղղված դեպքեր առհասարակ չեն բացահայտվել: Ստացվում է, որ սեռական բռնության մասին տեղեկատվական գլխավոր աղբյուրը արտաքին է դեռահասների նկատմամբ և հանդես է գալիս ԶԼՄ/ինտերնետ տեղեկատվական հոսքերի միջոցով:


Բազմակի ընտրությամբ հարց է տրվել նաև պարզելու համար, թե ո՞ւմ կղիմեն հարցվողները օգնության համար սեռական բռնության վտանգ պարունակող իրավիճակում: Օգնությունը հիմնականում ակնկալվում է ծնողներից (պատասխանների 33.6%), ուստիկանությունից (պատասխանների 20.6%) և ընկերներից (պատասխանների 19.6%):

Աղյուսակ 21. Եթե հանկարծ նկատեք, որ հայտնվել էք սեռական բռնության վտանգ պարունակող իրավիճակում, ու՞մ կղիմեք օգնության համար:

	Պատասխ. Թիվը	Պատասխան. Տոկոսը
Ինքնուրույն կփորձեմ կարգավորել	23	21.5%
Ծնողներիս	36	33.6%
Այլ բարեկամներիս	2	1.9%
Ընկերներիս	21	19.6%
Ուստիկանություն	22	20.6%
Մարդու իրավունք. պաշտպանի գրասենյակ	2	1.9%
Հասարակական կազմակերպություն	1	.9%
Ընդամենը	107	100.0%


Բավականին վտանգավոր է այն հանգամանքը, որ 21.5% դեպքերում դեռահասները նախընտրում են ինքնուրույն կարգավորել իրավիճակը: Միննույն ժամանակ առավել ավելացնում է վտանգը այն հանգամանքը, որ հաջորդ հարցին պատասխան տված ուսանողների մոտ 1/3-ը սեռական բնույթի գործողությունների զոհ կամ ականատես դառնալու դեպքում կնախընտրեն թաքցնել դեպքի մանրամասները, քանի որ կարող են վարկաբեկվել կամ հայտնվել ամոթալի իրավիճակում (տես Գծապատկեր 5): Սեռային բաշխումն էլ թույլ է տալիս պնդել, որ աղջիկները ավելի շատ են հակված բարձրաձայնել դեպքերի մասին, քան տղաները, որոնցից գրեթե կեսը (արական սեռի ուսանող-հարցվողների 45,2%) նշում են, որ կթաքցնեն դեպքի մանրամասները:

Գծապատկեր 5. Սեռական բռնության ակնատես/զոհ դառնալու հետ կապված գործողություններ



Սեռական բռնության կանխարգելման և աճի միտումները կարգավորելու տեսանկյունից հասկապես կարևորվում է երեխաների իրազեկվածությունը հատուկ աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների և պատասխանատու մարմինների վերաբերյալ: Այս իմաստով, հետազոտության արդյունքները նույնպես խիստ մտահոգող են, քանի որ հարցված 70 ուսանողներից ընդամենը 3-ն էին նշել, որ գիտեն Հայաստանում բռնության ենթարկված չափահասներին աջակցություն ցուցաբերող կազմակերպություն (տես Գծապատկեր 6): Այս ցուցանիշը շատ ավելի ցածր կարող էր լինել դպրոցականների շրջանում, եթե հաշվի առնենք այն փաստը, որ հարցվողները ոլորտին առնչվող մասնագիտական կրթություն են ստանում (մանկավարժներ, սոցիալական աշխատողներ և այլն) և իրենց ուսման ընթացքում անդրադառնում են բռնության հիմնախնդրին որպես ապագա մասնագետներ:

Գծապատկեր 6. Բռնության ենթարկված անչափահասներին աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների վերաբերյալ իրազեկվածություն



Ամփոփելով սեռական բռնության վերաբերյալ իրազեկվածության և տարածվածության միտումները, կարելի է նշել իրազեկվածության ցածր մակարդակի և երեխաների նկատմամբ սեռական բռնության բացահայտ ձևերի տարածվածության ցածր ցուցանիշների մասին:

2.4. ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԻՉԸ

Երեխաների նկատմամբ բռնության համադրական ցուցիչը ձևավորվել է հարցաթերթում նախապես առաջադրված մի քանի խումբ փոփոխականների մեծությունների համադրման ճանապարհով: Այդ խմբերը համապատասխանում էին ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության զոհ դառնալու/լինելու վերաբերյալ հարցերում առկա չափման ինդիկատորներին: Յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին գործոն: Բռնության համադրական ցուցիչում օգտագործված փոփոխականները և բռնության գործոն պարունակող արժեքները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 22. Բռնության գործոններ

Փոփոխական ¹¹	Փոփոխականի նկարագրություն	Բռնության գործոն պարունակող արժեքներ
B4	Արդյո՞ք Ձեր շրջապատում/բնակավայրում եղե՞լ են դեպքեր, երբ Ձեր կամ Ձեր հասակակից մտերիմ ընկերներից մեկի հանդեպ կիրառվել է բռնություն/ֆիզիկական ուժ...	<p><u>Այո, հաճախ+Այո, երբեմն</u></p> <ul style="list-style-type: none"> • Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից • Հասակակից հարևանների/բակի հասակակիցների կողմից • Ուսուցիչների/դասախոսների կողմից • Այլ սուբյեկտների կողմից
B5	Եղե՞լ են դեպքեր, որ հասակակիցների/ ուսուցիչների/ ընտանիքի անդամների գործողությունների հետևանքով, Ձեզ զգացել էք հոգեբանորեն խիստ ճնշված, նսեմացված, հուսալքված:	<p><u>Այո, հաճախ+Այո, երբեմն</u></p> <ul style="list-style-type: none"> • Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից • Հասակակից հարևանների/բակի հասակակիցների կողմից • Ուսուցիչների/դասախոսների կողմից • Ընտանիքի անդամների կողմից • Այլ սուբյեկտների կողմից
G2	Երբե՞տ լսե՞լ էք Ձեր հասակակիցների հանդեպ սեռական բռնության կամ սեռական բնույթի ոտնձգությունների մասին...	<p><u>Այո, հաճախ+Այո, երբեմն</u></p> <ul style="list-style-type: none"> • Ընտանիքի անդամ/մոտ ազգականի կողմից • Ուսուցիչների/դասախոսների կողմից • Տնօրենի/ղեկանի, այլ ղեկավար կազմի կողմից • Հասակակիցների կողմից • Այլ չափահաս անձանց կողմից

Արդյունքում ստացվում է, որ բռնության համադրական ցուցիչը կազմում է մոտ 54%, այսինքն հարցվողների 46 % է, որ զերծ է ուսումնասիրությամբ նախատեսված որևէ բռնության գործոնից: Պետք է ասել, որ այդ ցուցանիշը բավականին հուսադրող է,

¹¹ Փոփոխականի համարը հապատասխանում է հարցաթերթում օգտագործված հայերեն Բ և Գ կոդով հարցերին, տես Հավելված 1:

հատկապես եթե հաշվի առնենք, որ միաժամանակ 4 և ավելի գործոնների ազդեցությամբ խմբերը չափազանց փոքր են: Ամենամեծն է դեռահասների այն խումբը, որոնց համար բացահայտվել է միաժամանակ բռնության 1 կամ 2 գործոնի ազդեցություն (տես Աղյուսակ 23): Աշակերտների մոտ 3 և ավելի գործոնի ազդեցության տակ գտնվողների խումբը շատ ավելի մեծ է, քան ուսանողների մոտ՝ 17,9%-ը 5,7%-ի դիմաց: Սա թույլ է տալիս պնդել, որ աշակերտները բռնության ենթարկվելու ավելի շատ ռիսկեր ունեն, քան ուսանողները:

Աղյուսակ 23. Բռնության գործոնների ցուցանիշներ

Աշակերտներ	Հաճախականություն	Տոկոսաչափ
Ռիսկի որևէ գործոն չկա	327	46.0
Ազդում է 1 ռիսկի գործոն	158	22.2
Ազդում է 2 ռիսկի գործոն	99	13.9
Ազդում է 3 ռիսկի գործոն	61	8.6
Ազդում է 4 ռիսկի գործոն	46	6.5
Ազդում է 5 ռիսկի գործոն	8	1.1
Ազդում է 6 ռիսկի գործոն	8	1.1
Ազդում է 7 ռիսկի գործոն	4	.6
Ընդամենը	711	100.0
Ուսանողներ	Հաճախականություն	Տոկոսաչափ
Ռիսկի որևէ գործոն չկա	32	46.4
Ազդում է 1 ռիսկի գործոն	21	30.4
Ազդում է 2 ռիսկի գործոն	12	17.4
Ազդում է 3 ռիսկի գործոն	2	2.9
Ազդում է 4 ռիսկի գործոն	1	1.4
Ազդում է 5 ռիսկի գործոն	1	1.4
Ընդամենը	69	100.0


Հետազոտության արդյունքների մշակումը թույլ է տվել նաև վերլուծել ուսումնասիրված յուրաքանչյուր բռնության փոփոխականի արտահայտվածության աստիճանը: Արդյունքում պարզվում է, որ գործակիցները գրեթե հավասար են. առավել արտահայտված է հոգեբանական բռնությունը, իսկ ֆիզիկական և սեռական բռնության արտահայտվածության ցուցանիշները հավասար են:

Աղյուսակ 24. Բռնության գործակիցները՝ ըստ բռնության ձևերի

Բռնության փոփոխականները	Ռիսկի գործակից /0-ից 1 միջակայքում/
Ֆիզիկական բռնություն (B4)	0,33
Հոգեբանական բռնություն (B5)	0,39
Սեռական բռնություն (G2)	0,33

Բռնության բոլոր ձևերի հիմնական սուբյեկտներ են հենց իրենք դեռահասները, քանի որ տվյալների համաձայն հասակակիցների կողմից բռնության դրսևորումները առավել տարածվածն են: Սա նշանակալի է, որ բռնության վերահսկումն ու կանխարգելումը պետք է նախ և առաջ ուղղված լինի դեռահասների խմբի պատկերացումների, իրազեկման և աշխարհընկալման փոփոխությունների վրա: Չնայած, որ մանկավարժները իրենք էլ են բարձրաձայնում խնդրի արդիականության մասին, ընդհանուր առմամբ, կայացած և ազդեցիկ մեխանիզմներ այս ուղղությամբ ներդրված չեն: Ավելին, միջամտության մասին հարցին տրված պատասխանների 15%-ը արձանագրում է, որ բռնի իրավիճակներում ոչ ոք սովորաբար չի միջամտում: Առավել ակտիվ միջամտում են ընկերները (պատասխանների 44.6%), ինչը կարող է բերել կոնֆլիկտների ընդլայնման և բռնության աճի: Այնուհետև միջամտող կողմերից են ուսուցիչներն ու ծնողները (համապատ. պատասխանների 19.7% և 11.3%):

Գծապատկեր 7. Հասակակիցների միջև բռնության իրավիճակում միջամտողները



Ուսուցիչների/դասախոսների կողմից երեխաների նկատմամբ բռնության կիրառման դեպքերի մասին տեղեկատվության աղբյուրները դիտարկելու ժամանակ պարզ է դառնում, որ տեղեկատվական կենտրոնական ազենտը հեռուստատեսությունը, այլ ՁԼՄ-ներն ու ինտերնետն են, որոնց հասնում է իրազեկման աղբյուրների մասին պատասխանների առյուծի բաժինը (պատասխանների 66,2%): Կարևոր է այն փաստը, որ ըստ առաջնահերթության հաջորդ աղբյուրներն են սեփական անձնական փորձը և մտերիմ ընկերների/բարեկամների պատմությունները: Սա նշանակում է, որ հարցվողների շուրջ 47.3%-ի համար ուսուցիչների/դասախոսների կողմից երեխաների հանդեպ բռնությունը այս կամ այն չափով իրենց կենսափորձի մի մասն է կազմել:

Աղյուսակ 25. Որտեղի՞ց եք տեղեկացել ուսուցիչների/դասախոսների կողմից Ձեր հասակակիցների նկատմամբ բռնության կիրառման դեպքերի մասին

Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխաններ		Դիտարկման միավորների տոկոսը
	թիվը	տոկոսը	
Անձնական փորձից/ինքս եմ տեսել	47	8.6%	14.7%
Ծնողներից	10	1.8%	3.1%
Մտերիմ ընկերներից/բարեկամներից	104	19.0%	32.6%
Անձանոթներից	10	1.8%	3.1%
Ուսուցիչներից/դասախոսներից	12	2.2%	3.8%
Հեռուստատեսությունից, այլ ՁԼՄ	176	32.2%	55.2%
Ինտերնետից	185	33.9%	58.0%
Գրականությունից/դասընթացից	1	.2%	.3%
Այլ	1	.2%	.3%
Ընդամենը	546	100.0%	171.2%

**ԳԼՈՒԽ III. ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ**

**3.1. ԴԵՌԱՀԱՄԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Համաձայն հարցման արդյունքների՝ դեռահասների շրջանում ինտերնետի սպառումը Հայաստանում բավականին բարձր ցուցանիշներ ունի: Հարցվողների միայն 3 %-ն է նշել, որ առհասարակ ինտերնետից չի օգտվում, մնացած 97% այս կամ այն հաճախականությամբ ինտերնետի սպառողներ են: Ոչ ինտենսիվ օգտվողների խումբը նույնպես շատ փոքր է. հարցվողների 3.1% նշում է, որ օգտագործում է ինտերնետը ամիսը մի քանի անգամ: Առավել ակտիվ սպառողների խումբը ամենամեծն է. հարցվողների 80.1% ինտերնետից օգտվում են ամեն օր (տես Աղյուսակ 26):

Աղյուսակ 26. Որքա՞ն հաճախ եք օգտվում ինտերնետից:

	Թիվը	Տոկոսը	Կուտակային տոկոսը
Ամեն օր	625	80.1	80.1
Շաբաթը մի քանի անգամ	119	15.3	95.4
Ամիսը մի քանի անգամ	12	1.5	96.9
Չեմ օգտվում առհասարակ	24	3.1	100.0
Ընդամենը	780	100.0	

Տղաների մեջ ամեն օր օգտվողների մասնաբաժինը մոտ 8%-ով ավելի մեծ է, քան աղջիկ-հարցվողների մեջ: Երևանում ինտենսիվ սպառողների համամասնությունը ավելի մեծ է, քան մարզերում, իսկ հյուսիսային կլաստերում՝ ավելի մեծ է, քան հարավային մարզերում (տես Աղյուսակ 27):

Աղյուսակ 27. Ինտերնետից օգտվելու հաճախականությունը՝ ըստ տարածքների

		Որքա՞ն հաճախ եք օգտվում ինտերնետից:				Ընդամենը
		Ամեն օր	Շաբաթը մի քանի անգամ	Ամիսը մի քանի անգամ	Չեմ օգտվում առհասարակ	
Բնակավայր	Կլաստեր 1 - Երևան	83.6%	12.7%	.7%	3.0%	100.0%
	Կլաստեր 2 – Հյուսիս	77.6%	18.1%	1.7%	2.6%	100.0%
	Կլաստեր 3 – Հարավ	74.6%	18.8%	3.1%	3.6%	100.0%
Ընդամենը		80.1%	15.3%	1.5%	3.1%	100.0%


Օգտագործման ինտենսիվությունը պարզելու համար հաշվարկվել է նաև օրվա ընթացքում համացանցում գտնվելու ժամանակահատվածը: Ինտերնետից օգտվողների մեջ բավականին մեծ է չափազանց երկար համացանցում գտնվողների թիվը. 4-6 և 6-ից ավելի ժամ են ինտերնետում անցկացնում սպառող դեռահասների համապատասխանաբար 9.8% և 7.8%: Այս խումբը կարող է համարվել համակարգչային կախվածություն ունեցողների պոտենցիալ խումբ: Ինտերնետ սպառող դեռահասների մեծամասնությունը (82.4%) համացանցում են անցկացնում 4 ժամից պակաս:

Աղյուսակ 28. Օրվա ընթացքում միջինում քանի՞ ժամ եք գտնվում ցանցում:

Տևողություն	Թիվը	Տոկոսը	Կուտակային տոկոսը
մինչև 30ր	146	19.3	19.3
30 ր – 2 ժամ	307	40.6	59.9
2-4 ժամ	170	22.5	82.4
4-6 ժամ	74	9.8	92.2
6 և ավելի ժամ	59	7.8	100.0
Ընդամենը	756	100.0	

Սպառման անվտանգության տեսանկյունից կարևոր է նաև, թե ինչպիսի միջոց են օգտագործում երեխաները ինտերնետին միանալու համար: Առավել խոցելի են համարվում երեխայի կողմից առանց հատուկ վերահսկողության օգտագործվող անձնական համակարգչային սարքավորումները: Տվյալները ցույց են տալիս, որ պատասխանների կեսից ավելին ընկնում է նման սարքերի օգտագործմանը (անձնական օգտագործման պլանշետ/լեքթոփ/նեթբուք, անձնական հեռախոս և ոչ շարժական տնային համակարգիչ, որից օգտվում է միայն տվյալ դեռահասը՝ տես Գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Ինտերնետին միանալիս սովորաբար ինչպիսի՞ միջոց եք օգտագործում (տոկոսը պատասխաններից).



Շեղանկությունը թույլ է տվել նաև բացահայտել, թե հիմնականում ինչ նպատակներով են դեռահասները օգտվում ինտերնետից: Բազմակի ընտրությամբ հարցին տրված պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս համացանցի օգտագործման հետևյալ

առաջնահերթ ուղղությունները. նամակագրություն/շփում ծանոթների և բարեկամների հետ՝ 34,8%, տեղեկատվության լրատվության ձեռք բերում՝ 25,9%, խաղեր/զվարճանք՝ 16,1%, գրականության ընթերցում՝ 13%: Անվտանգության տեսանկյունից խոցելի կարող է համարվել հատկապես նոր մարդկանց հետ ծանոթանալու/շփվելու նպատակով համացանցից օգտվող դեռահասների թիվը (պատասխաններից 9,2%):

Աղյուսակ 29. Ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտվում ինտերնետից:

	Պատասխաններից		Դիտարկման միավորներ
	Թիվը	Տոկոսը	
Նամակագրություն/շփում ծանոթներիս/բարեկամներիս հետ	652	34.8%	86.2%
Ծանոթություն/շփում նոր մարդկանց հետ	173	9.2%	22.9%
Տեղեկատվության, լրատվության ձեռք բերում	485	25.9%	64.2%
Գրականության ընթերցանություն, ուսում	243	13.0%	32.1%
Խաղեր/Զվարճանք	301	16.1%	39.8%
Առևտուր	16	.9%	2.1%
Այլ	5	.3%	.7%
Ընդամենը	1875	100.0%	248.0%

3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն հետազոտության արդյունքների՝ ինտերնետը շփման համար օգտագործող հարցվողների բացարձակ մեծամասնությունը 96,3% գրանցված են որևէ սոցիալական ցանցում: Հարցվողների ընդհանուր թվից դա կազմում է 88%, ինչը կարող է համարվել շատ բարձր ցուցանիշ: Ընդ որում, գրանցվածներից գրեթե կեսը (46,5%) ունի 2-3 անձնական գրանցահամար/account տարբեր ցանցերում:

Աղյուսակ 30. Արդյոք գրանցված եք որևէ սոցիալական ցանցում:

	Թիվը	Տոկոսը հարցվողներից	Տոկոսը օգտվողներից
Այո	693	88.8	96.3
Ոչ	27	3.5	3.8
Ընդամենը	720	92.3	100.0
Զօգտագործողներ	60	7.7	
Ընդամենը	780	100.0	

Սոցիալական ցանցերում անվտանգ հաղորդակցության տեսանկյանից կարևոր է, որ օգտատեր-դեռահասների ճնշող մեծամասնությունը՝ մոտ 94%, նշել են, որ անձնապես ճանաչում են իրական կյանքում համացանցի իրենց ընկերներից բոլորին կամ մեծամասնությանը: Միայն 6 %-ն է իրական կյանքում ճանաչում իր համացանցի ընկերներից կեսից պակասին:

Աղյուսակ 31. Ձեր համացանցի ընկերներից, ո՞ր մասի հետ եք ծանոթ անձնապես իրական կյանքում:

	Թիվը	Տոկոսը հարցվողներից	Տոկոսը օգտվողներից
Բոլորի	405	51.9	58.4
Մեծամասնության	245	31.4	35.4
Կեսի	40	5.1	5.8
Մի քանիսի, մյուսներին երկար ժամանակ է ճանաչում եմ ցանցից	2	.3	.3
Ոչ ոքի, բոլորին ճանաչում եմ ցանցից	1	.1	.1
Ընդամենը	693	88.8	100.0
Չօգտվողներ	87	11.2	
Ընդամենը	780	100.0	

Անվտանգության առումով թիրախի տակ է նաև օգտատեր-դեռահասների այն 7,2%-ը, որոնք հակված են հանդիպել համացանցում ձեռք բերված նոր ընկերների հետ՝ ընդ որում առանց նրանց մասին բավարար տեղեկություններ ունենալու:

Աղյուսակ 32. Որքանո՞վ է հավանական, որ հանդիպում նշանակեք/հանդիպեք համացանցում ձեռք բերված նոր ընկերոջ/ուհու հետ:

	Թիվը	Տոկոսը հարցվողներից	Տոկոսը օգտվողներից	Կուտակային տոկոս
Շատ հավանական է, նոր մարդկանց հետ սիրում եմ ծանոթանալ	50	6.4	7.2	7.2
Հավանական է՝ միայն նրա մասին բավարար տեղեկություններ ունենալու դեպքում	184	23.6	26.6	33.8
Գրեթե անհավանական է, ես նախընտրում եմ իրական ընկերների հետ շփվել	237	30.4	34.2	68.1
Անհավանական է, երբեք չեմ ծանոթանա իրական կյանքում	221	28.3	31.9	100.0
Ընդամենը	692	88.7	100.0	
Դժվարանում եմ պատասխանել	1	.1		
Չօգտվողներ	87	11.2		
Ընդամենը	88	11.3		
Ընդամենը	780	100.0		

Ըստ սեռի հարցվողների բաշխումները՝ թույլ են տալիս պնդել, որ ռիսկի տակ գտնվում են նախ և առաջ տղաները, որոնք մի կողմից առավել հաճախ և երկարատև են գտնում համացանցում, փնտրում են ծանոթություններ և արկածախնդրորեն պատրաստ են հանդիպումների:

Հանդիպման պատրաստ դեռահասները հատկապես շատ են արական սեռի հարցվողների թվում (տես Աղյուսակ 33): Եթե պոտենցիալ հանդիպողները տղաների

մեջ կազմում են 11,5%, ապա աղջիկների մեջ ընդամենը 2,7%: Առհասարակ երբեք չծանոթացողների խումբը հատկապես մեծ է իգական սեռի հարցվողների մեջ՝ 46,4%, համեմատության համար նշենք, որ տղաների մեջ այդ նույն խումբը կազմում է ընդամենը 18%:

Աղյուսակ 33. Որքանո՞վ է հավանական, որ հանդիպում նշանակեք/հանդիպեք համացանցում ձեռք բերված նոր ընկերոջ/ուհու հետ՝ բաշխում ըստ սեռի:

Սեռը					Ընդամենը
	Շատ հավանական է. նոր մարդկանց հետ սիրում եմ ծանոթանալ	Հավանական է՝ միայն նրա մասին բավարար տեղեկություններ ունենալու դեպքում	Գրեթե անհավանական է. ես նախընտրում եմ իրական ընկերների հետ շփվել	Անհավանական է. երբեք չեմ ծանոթանա իրական կյանքում	
Արական	11.5%	37.9%	32.3%	18.3%	100.0%
Իգական	2.7%	14.6%	36.3%	46.4%	100.0%
Ընդամենը	7.2%	26.6%	34.2%	31.9%	100.0%

Այս իմաստով՝ հատկապես արկածախնդիր են երևանցիները՝ նրանց 9,1% պատրաստ է անծանոթի հետ հանդիպման, իսկ առավել զգուշավոր են հարավային մարզերի բնակիչները՝ նրանցից միայն 3,5% է շատ հավանական համարում նման հանդիպումը:

Վտանգի տակ են գտնվում նաև դեռահասների այն խմբերը, որոնք անձամբ առնչվել են անծանոթների կողմից համացանցում տարբեր տեսակի առաջարկությունների հետ: Այդպես առավել վտանգավոր կարող է համարվել իրական կյանքում հանդիպելու առաջարկությունը, որը, ըստ ստացված արդյունքների, առավել տարածված է. նման առաջարկություն ստացել են օգտատեր դեռահասների մոտ 30%: Անչափահասները ստացել են նաև աշխատանքի առաջարկություններ (6.1%), իսկ 14 հոգի ստացել են սեռական բնույթի առաջարկություններ:

Բոլոր տիպի առաջարկությունները ստացողները կրկին հատկապես շատ են տղաների մեջ: Հատկանշական է, որ սեռական բնույթի առաջարկություններ ստացողները արական սեռի հարցվողների մեջ կազմել են 3,5%, իգական սեռի հարցվողներից՝ զրոյին ձգտող 0,3% ցուցանիշի դիմաց: Ուշագրվավ է նաև, որ եթե հանդիպման, տեսանյութ փոխանակելու և սեռական բնույթի առաջարկություններ ստացածները հատկապես շատ են Երևանցիների մեջ, ապա աշխատանքի առաջարկություն հյուսիսային մարզերի դեռահասներն ու Երևանցիները ստացել են գրեթե հավասար չափով՝ մոտ 7%:

Աղյուսակ 34. Համացանցում անձանություններից առաջարկություն ստացողների բաշխումը՝ ըստ բնակավայրերի

Բնակավայր		Կլաստեր 1. Երևան	Կլաստեր 2. Հյուսիս	Կլաստեր 3. Հարավ	Ընդամենը
Հանդիպել իրական կյանքում	Այո	41.5%	19.5%	12.5%	29.9%
	Ոչ	58.5%	80.5%	87.5%	70.1%
Ընդամենը կլաստերում		100.0%	100.0%	100.0%	100.0%
Փոխանակել նկար/տեսանյութ	Այո	31.4%	9.7%	10.2%	22.1%
	Ոչ	68.6%	90.3%	89.8%	77.9%
Ընդամենը					
Աշխատանքի առաջարկություն	Այո	7.3%	7.1%	3.2%	6.1%
	Ոչ	92.7%	92.9%	96.8%	93.9%
Ընդամենը կլաստերում					
Սեռական բնույթի առաջարկություններ	Այո	2.1%	.9%	1.9%	1.9%
	Ոչ	97.9%	99.1%	98.1%	98.1%
Ընդամենը կլաստերում					

Նույն հարցը տրվել էր նաև հասակակից ընկերների վերաբերյալ, որում ճշգրտվել է՝ արդյոք առաջարկություններն ընդունվել են, թե ոչ: Պարզվում է, որ սեռական բնույթի առաջարկություն ստացած և ընդունած ընկերներ ունեն 8 հարցվողներ:

Աղյուսակ 35. Անձանությունների կողմից համացանցում առաջարկություններ

Անձանությունների կողմից համացանցում առաջարկություններ	Ունեն ընկերներ, որոնք ստացել և ընդունել են առաջարկություն	
	Ընդունողների թիվը	Տոկոսը օգտատերերից
Հանդիպել իրական կյանքում	83	14.1
Փոխանակել նկար/տեսանյութ	83	14.1
Աշխատանքի առաջարկություն	27	4.6
Սեռական բնույթի առաջարկություններ	8	1.4

Անվտանգության առումով խոցելի կարող է համարվել նաև օգտատերերի այն խումբը, ովքեր հանրության համար լիովին բաց են պահում իրենց անձնական տվյալները: Այդ խումբը կազմում է դեռահաս-օգտատերերի մոտ մեկ քառորդ մասը կամ բոլոր հարցվողների մոտ 22%: Առավել մանրամասն անձնական այնպիսի տվյալների բաց լինելու մասին, ինչպիսիք են տարիքը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը և այլն, ներկայացված է Աղյուսակ 36-ում:

Աղյուսակ 36. Անձնական տվյալները հանրության համար բաց պահողների համասնությունները:

Հանրության համար բաց են պահում տվյալները՝	Թիվը	Տոկոսը հարցվածներից	Տոկոսը օգտատերերից
Տարիք	356	45.6	51.4
Հեռախոսահամար	76	9.7	11.0
Ֆինանսական դրություն	11	1.4	1.6
գտնվելու վայրը	283	36.3	40.8
Ֆոտո և տեսաձայնագրություններ	298	38.2	43.0
Ապրումներ	104	13.3	15.0
Նախասիրություններ	93	11.9	13.4

Գոյություն ունի նաև դեռասինների մի խումբ, որը սոցիալական ցանցերում հանդես չի գալիս իրական տվյալների տակ: Մի կողմից այս հանգամանքը կարող է իրենց պաշտպանել կիբերհանցագործություններից, մյուս կողմից հնարավոր է, որ նրանք, ովքեր հանդես են գալիս կեղծ անունների (օգտատերերի 2.5%), տարիքի (օգտատերերի 4%) և բնակավայրի (օգտատերերի 8.9%) տակ, ներքաշվեն տարբեր խաբեությունների մեջ որպես դերակատարներ: Շատ են նաև նրանք, ովքեր թաքցնում են իրենց իրական հեռախոսահամարը, նախասիրությունները, բնակության վայրը և լուսանկարը:

Աղյուսակ 37. Արդյո՞ք օգտագործում եք Ձեր իրական անձնական տվյալները սոցիալական ցանցերում, փոստում, ֆորումներում և այլուր գրանցվելիս. Ոչ

Սոցիալական ցանցում չեն օգտագործում իրենց իրական՝	Թիվը	Տոկոսը հարցվածներից	Տոկոսը օգտատերերից
Անուն Ազգանունը	17	2.2	2.5
Տարիքը	28	3.6	4.0
Բնակության վայրը	62	7.9	8.9
Լուսանկարը	42	5.4	6.1
Հեռախոսահամարը	193	24.7	27.8
Նախասիրությունները	151	19.4	21.8

Ինտերնետ անվտանգության բնագավառում գրագիտության պակասի մասին են վկայում տվյալները համացանցի օգտագործման ընթացքում անվտանգության կանոնների պահպանության մասով: Պարզվում է, որ մի շարք սկզբունքներ խախտվում են դեռահաս սպառողների բավականին մեծ խմբի կողմից: Այդպես՝ օգտատերերի շուրջ 30% չունի անտիվիրուսային հզոր ծրագիր, գրեթե կեսն օգտագործում է միևնույն գաղտնաբառը տարբեր ծառայություններից օգտվելու ժամանակ, մոտ 17%-ն էլ օգտվում են տարիքային սահմանափակումներ ունեցող կայքերից :

Աղյուսակ 38. Ինտերնետի սպառման անվտանգության կանոնների խախտում

Ինտերնետի սպառման անվտանգության չափումներ	Թիվը	Տոկոսը հարցվածներից	Տոկոսը օգտատերերից
Իմ համակարգիչն օժտված չէ հզոր ժամանակակից անտիվիրուսային ծրագրով:	214	27.4	28.5
Հարմարության համար ես օգտագործում եմ նույն գաղտնաբառը տարբեր ծառայություններից օգտվելու ժամանակ:	349	44.7	46.2
Երբեմն այցելում եմ տարիքային սահմանափակումներ ունեցող կայքեր/օգտվում ծառայություններից	124	15.9	16.4
Կիսվում/փոխանակում եմ անձնական կարևոր նկարներ/տեսագրություններ, որոնք կարող են վարկաբեկել ինձ կամ որևէ մեկին:	42	5.4	6.1

3.3. ՌԻՍԿԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Հայաստանում երեխաների նկատմամբ կիբերհանցագործությունների ռիսկերի ընդհանուր գնահատականը ստանալու համար ձևավորվել և հաշվառվել է ռիսկի համադրական ցուցիչը, որի հիմքում դրվել են 6 հիմնական փոփոխական գործոնները, որոնք պայմանավորում են տվյալ հարցվողի պատասխաններից կախված՝ կիբերհանցագործության պոտենցիալ զոհ դառնալու ռիսկայնությունը: Ռիսկի ցուցիչը հաշվարկվել է ստորև ներկայացվող բանաձևի միջոցով, որում D-երը փոփոխականների մեծություններն են, իսկ հայտարարում ռիսկի գործոնների արժեքներն են (տես Աղյուսակ 39):

$$\sum RISK = \frac{D3}{4} + \frac{D4}{1} + \frac{D8}{2} + \frac{D9}{1} + \frac{D10}{7} + \frac{D12}{4}$$

Աղյուսակ 39. Ռիսկի գործոնների նկարագրություն.

Փոփոխական ¹²	Փոփոխականի նկարագրություն	Ռիսկի գործոն պարունակող արժեքներ
D3	Ինտերնետին միանալիս սովորաբար ինչպիսի՞ միջոց եք օգտագործում:	<ul style="list-style-type: none"> Ոչ շարժական տնային համակարգիչ, որից օգտվում եք միայն դուք Անձնական պլանշետ, լեփթոփ կամ նեթբուք Անձնական հեռախոս Ոչ շարժական հանրային օգտագործման համակարգիչ ինտերնետ-կաֆեում և այլն
D4	Ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտվում ինտերնետից:	<ul style="list-style-type: none"> Ծանոթություն/շփում նոր մարդկանց հետ
D8	Ձեր համացանցի ընկերներից, ո՞ր մասի հետ եք ծանոթ անձնապես իրական կյանքում:	<ul style="list-style-type: none"> Մի քանիսի, մյուսներին երկար ժամանակ է ճանաչում եմ ցանցից Ոչ ոքի, բոլորին ճանաչում եմ ցանցից
D9	Որքանո՞վ է հավանական, որ հանդիպում նշանակեք/ հանդիպեք համացանցում ձեռք բերված նոր ընկերոջ/ուհու հետ:	<ul style="list-style-type: none"> Շատ հավանական է. նոր մարդկանց հետ սիրում եմ ծանոթանալ
D10	Ձեր մասին հետևյալ անձնական տվյալները համացանցում լիովին բաց են հանրության համար.	<ul style="list-style-type: none"> Տարիքը Հեռախոսահամարը Ֆինանսական դրությունը Գտնվելու վայրը Ֆոտո, տեսա և ձայնագրություններ Ապրումները Նախասիրությունները, պլանները

¹² Փոփոխականի համարը համապատասխանում է հարցաթերթում օգտագործված հայերեն Դ կոդով հարցերին, տես Հավելված 1:

D12	Համացանցում երբևէ ստացել էք իրական կյանքում անձանոթ որևէ մեկից հետևյալ առաջարկությունները.	<ul style="list-style-type: none"> • Հանդիպել իրական կյանքում • Փոխանակել նկար/տեսանյութ • Աշխատանքի առաջարկություն • Սեռական բնույթի առաջարկություններ
-----	--	---

Արդյունքում ստացվում է, որ կիբերհանցագործության ռիսկայնության համադրական ցուցիչը կազմում է մոտ 79%, այսինքն հարցվողների միայն 12,5 % է, որ զերծ է ուսումնասիրությամբ նախատեսված որևէ ռիսկային գործոնից, ևս 8,8 % պատասխաններից հնարավոր չէ գնահատել ռիսկի ենթարկված լինելու չափը, քանի որ հետազոտության պահին նրանք հայտարարել են համացանցից չօգտվելու մասին:

Միջինում մեկ անձի վրա ազդում է կիբերհանցագործության զոհ դառնալու 3 ռիսկի գործոն, ինչը բավականին շատ է (տես Աղյուսակ 40): Մեծ է նաև այն դեռահասների խումբը, ովքեր մաքսիմալ վտանգի տակ են գտնվում, քանի որ նրանց վրա ազդում է միանգամից 7-ից ավելի ռիսկի գործոններ՝ մոտ 12,5 %:

Աղյուսակ 40. Կիբեր-հանցագործության ռիսկերը

	Հաճախականություն	Տոկոսաչափ
Ռիսկի որևէ գործոն չկա	89	12,5
Ազդում է 1-3 ռիսկի գործոն	312	43,9
Ազդում է 4-6 ռիսկի գործոն	222	31,2
Ազդում է 7-9 ռիսկի գործոն	73	10,3
Ազդում է 10-12 ռիսկի գործոն	15	2,1
Ընդամենը	711	100,0

Հետազոտության արդյունքների մշակումը թույլ է տվել նաև վերլուծել ուսումնասիրված յուրաքանչյուր ռիսկի փոփոխականի արտահայտվածության աստիճանը:

Արդյունքում պարզվում է, որ առավել արտահայտված են օբյեկտիվ կամ երեխայի նկատմամբ արտաքին ռիսկի գործոնները, որոնց վերահսկողությունը շատ ավելի հեշտ է իրագործել, քան սուբյեկտիվ գործոններինը: Այսպես, համացանցին միանալու միջոցների և անձնական տվյալների անվտանգության գործոնները առավել խոցելի վիճակում են: Համապատասխան իրազեկման և ինտերնետի անվտանգ սպառման գրագիտության բարձրացման դեպքում ռիսկերը կարող են կտրուկ նվազել (տես Աղյուսակ 41):

Աղյուսակ 41. Կիբերհանցագործությունների ռիսկային ուղղությունները

Ռիսկի փոփոխականները	Ռիսկի գործակից /0-ից 1 միջակայքում/
Ինտերնետին միանալու միջոցները (D3)	0,51
Համացանցի օգտագործման նպատակները (D4)	0,22
Իրական կյանքում անձանոթ լինելը (D8)	0,004
Անձանոթի հետ հանդիպելը (D9)	0,07
Անձնական տվյալների բաց լինելը (D10)	0,58
Համացանցում առաջարկություն ստանալը (D12)	0,39

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտության արդյունքները, կարող ենք առանձնացնել հետևյալը.

- Հանրակրթական դպրոցների հիմնական ուսուցչական կազմը, հատկապես մարզային դպրոցներից, չունի հատուկ գիտելիքներ դեռահասների նկատմամբ բռնության և դրա կանխարգելման ոլորտում: Նրանց կողմից օգտագործվող սահմանումների հիմքում չկա հստակ համակարգվածություն, տիպաբանական հիմքեր կամ մասնագիտական տերմինաբանություն: Նրանց ընկալումներում բռնությունը սերտաճում է մի շարք հարակից հասկացությունների հետ ինչպիսիք են թրաֆիքինգը, քարոզչությունը, աշակերտների ուսումնական գերձանրաբեռնվածությունը և այլն: Որպես հետևանք նվազում է հատուկ մանկավարժական հմտությունների կիրառմամբ բռնության դեպքերի բացահայտումը և վերահսկումը:
- Ոլորտում առկա է պատասխանատվության տեղափոխության թաքնված միտում: Ֆոկուս խմբերի մասնակիցները միտված են առավել տարածված համարել դեռահասների նկատմամբ բռնության այն դրսևորումները և հանրակրթության այն ուղղությունները, որոնց անմիջական սուբյեկտը իրենք չեն հանդիսանում: Ընդ որում՝ այս միտումը գործում է ինչպես խմբային, այնպես էլ անձնական նույնականացման մակարդակներում (Երևանում գտնում են, որ բռնություն կիրառվում է մարզերում; հիմնական դպրոցներում գտնում են, որ բռնություն կա ավագ դպրոցներում; հանրակրթարաններում խոսում են հատուկ դպրոցներում երևույթի տարածվածության մասին):
- Ուսուցիչները չունեն հատուկ ուղեցույց-հրահանգներ բռնության ենթարկված երեխաներին բացահայտելու կամ նման դեպքերում հատուկ միջոցառումներ ձեռնարկելու իմաստով: Հիմնականում նրանք արձագանքում են տարերայնորեն, չեն դիմում հատուկ մասնագետների կամ կառույցների: Այս հարցում առավել ակտիվ են սոցիալական մանկավարժներն ու հոգեբանները, որոնք իրենց մասնագիտական կարողությունների շրջանակում օգնություն են ցուցաբերում՝ այդ թվում հարկ եղած ժամանակ համագործակցելով ոստիկանության և այլ կառույցների հետ: Սակայն, նրանք նվազագույն չափով են ներգրավվում երեխաների հետ աշխատանքներում դասվար ուսուցիչների կողմից, ովքեր սովորաբար փորձում են ինքնուրույն վերահսկել իրավիճակը:
- Երեխաների նկատմամբ բռնության համադրական ցուցիչը կազմում է մոտ 54%, այսինքն հարցվողների 46 % է, որ զերծ է ուսումնասիրությամբ նախատեսված բռնության որևէ ռիսկի գործոնից: Պետք է ասել, որ այդ ցուցանիշը բավականին հուսադրող է, հատկապես եթե հաշվի առնենք, որ միաժամանակ 4 և ավելի գործոնների ազդեցությամբ խմբերը չափազանց փոքր են: Ամենամեծն է դեռահասների այն խումբը, որոնց համար բացահայտվել է միաժամանակ

բոնության մինչև 2 գործոնի ազդեցություն: Աշակերտները բոնության ենթարկվելու ավելի շատ ռիսկեր ունեն, քան ուսանողները:

- Ըստ ստացված ցուցանիշների, առավել արտահայտված է հոգեբանական բոնությունը, իսկ ֆիզիկական և սեռական բոնության արտահայտվածության ցուցանիշները հավասար են: Բոնության բոլոր ձևերի հիմնական սուբյեկտներ են հենց իրենք դեռահասները, քանի որ, տվյալների համաձայն, հասակակիցների կողմից բոնության դրսևորումներն առավել տարածվածն են:
- Որպես ֆիզիկական բոնության տարածվածության հիմնական տիրույթ հանդես են գալիս ուսումնական հաստատությունները՝ դպրոցներն ու բուհերը: Ընդ որում՝ այստեղ ֆիզիկական բոնությունը կիրառվում է 2 առաջնային սուբյեկտների կողմից՝ համադասարանցիներ (առավելագույն չափով, քանի որ ցուցանիշը ամենաբարձրն է) և ուսուցիչներ/դասախոսներ: Հասակակիցների միջև բոնությունն ավելի տարածված է Երևանում, այնուհետև Հյուսիս կլաստերում (Լոռի և Տավուշ մարզերում) և Հարավային կլաստերում (Վայոց Ձոր և Սյունիք մարզերում): Մանկավարժների կողմից երեխաների նկատմամբ ֆիզիկական բոնության դրսևորումների իմաստով առավել բոնի է նույնպես մայրաքաղաքը: Մասնավոր դպրոցների աշակերտների պատասխանների հիման վրա ստացված ֆիզիկական բոնության ցուցանիշներն ավելի ցածր են, քան պետական հաստատություններում սովորողներինը: Ֆիզիկական բոնության դրսևորման առումով նվազագույն ցուցանիշները ստացվել են ընտանիքի անդամների կողմից ֆիզիկական ուժ կիրառելու դեպքերի վերաբերյալ:
- Հոգեբանական բոնության իմաստով կրկին առավել բոնի կարող է համարվել ուսումնական հաստատությունների ոլորտը, որում հոգեբանական բոնության ցուցանիշը գերազանցում է ընտանիքում և փողոցում հոգեբանական բոնության տարածվածությանը: Ինչպես հասակակիցների, այդպես էլ ուսուցիչների և ընտանիքի անդամների կողմից, հոգեբանական բոնության առավել շատ են ենթարկվում իզական սեռի երեխաները: Ի տարբերություն ֆիզիկական բոնության, հոգեբանական բոնությունը ուսուցիչների կողմից գրեթե հավասարապես է տարածված ինչպես պետական, այդպես էլ մասնավոր ուսումնական հաստատություններում:
- Հոգեբանական աններդաշնակության առումով ռիսկերը առավել վառ են արտահայտված քաղաքաբնակ ընդարձակ (ոչ նուկլեար) ընտանիքներում, որտեղ ծնողներն ունեն միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն: Ծնողների կողմից առհասարակ չվերահսկվող դեռահասները նույնպես ռիսկի խումբ են համարվում տարբեր տեսակի շեղվող վարքաձևերի դրսևորման տեսանկյունից: Պարզվել է, որ արտաքին տեսքի, ազատ տեղաշարժվելու, ընկերների հետ շփվելու և այլ ուղղություններով անվերահսկելիների խումբը բացարձակ մեծամասնությամբ քաղաքային բնակիչներից է, ավելի կոնկրետ Երևան քաղաքի բնակիչներից: Առավելապես այն ներկայացված է արական սեռի հարցվողներով, ովքեր ունեն միջին և միջինից բարձր բարեկեցության աստիճան:

- Սեռական բռնության բոլոր ցուցանիշները ձգտում են զրոյի, բացառությամբ հասակակիցների կողմից (70 հարցվողներից 16-ը լսել են հասակակիցների կողմից սեռական բռնության դեպքերի մասին) և այլ չափահասների կողմից (70 հարցվողներից 12-ը լսել են այլ չափահասների կողմից սեռական բռնության դեպքերի մասին) ցուցանիշների: Ընտանիքի անդամների, հասակակիցների և այլ չափահասների կողմից սեռական բռնության մասին աղջիկները նշել են ավելի շատ, քան տղաները, իսկ ուսուցիչների/դասախոսների կողմից սեռական բռնության դեպքերի մասին նշել են միայն արական սեռի հարցվողները: Սեռական բռնության մասին տեղեկատվական գլխավոր աղբյուրը արտաքին է դեռահասների նկատմամբ և հանդես է գալիս ԶԼՄ/ինտերնետ տեղեկատվական հոսքերի միջոցով:
- Ուսանողների մոտ 1/3-ը սեռական բնույթի գործողությունների գոհ կամ ականատես դառնալու դեպքում կնախընտրեն թաքցնել դեպքի մանրամասները, քանի որ կարող են վարկաբեկվել կամ հայտնվել ամոթալի իրավիճակում: Երեխաների իրազեկվածությունը հատուկ աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների և պատասխանատու մարմինների վերաբերյալ նույնպես անբավարար է. հարցված 70 ուսանողներից ընդամենը 3-ն են նշել նման կազմակերպություն:
- Հարցված դեռահասների ընդհանուր թվից 88% գրանցված են որևէ սոցիալական ցանցում, ինչը կարող է համարվել շատ բարձր ցուցանիշ: Կիբերհանցագործության ռիսկայնության համադրական ցուցիչը բավականին բարձր է: Այն կազմում է մոտ 79%, այսինքն հարցվողների միայն 12,5 % է, որ զերծ է ուսումնասիրությամբ նախատեսված որևէ ռիսկային գործոնից, ևս 8,8 % պատասխաններից հնարավոր չէ գնահատել ռիսկի ենթարկված լինելու չափը, քանի որ հետազոտության պահին նրանք հայտարարել են համացանցից չօգտվելու մասին:
- Միջինում մեկ անձի վրա ազդում է կիբերհանցագործության գոհ դառնալու 3 ռիսկի գործոն, ինչը բավականին շատ է: Մեծ է նաև այն դեռահասների խումբը, ովքեր մաքսիմալ վտանգի տակ են գտնվում, քանի որ նրանց վրա ազդում է մի անգամից 7-ից ավելի ռիսկի գործոններ՝ մոտ 12,5 %: Առավել արտահայտված են օբյեկտիվ կամ երեխայի նկատմամբ արտաքին ռիսկի գործոնները, ինչպիսիք են համացանցին միանալու միջոցների և անձնական տվյալների անվտանգությունը, որոնց վերահսկողությունը շատ ավելի հեշտ է իրագործել, քան սուբյեկտիվ գործոններինը:
- Կիբերհանցագործությունների ռիսկի տակ գտնվում են նախ և առաջ տղաները, որոնք, համաձայն հետազոտության արդյունքների, մի կողմից առավել հաճախ և երկարատև են գտնում համացանցում, իսկ մյուս կողմից՝ փնտրում են ծանոթություններ և արկածախնդրորեն պատրաստ են հանդիպումների: Ռիսկային խումբը մեծ է հատկապես Երևանում, այնուհետև հյուսիսային մարզերում և հարավում:
- Ինտերնետ անվտանգության բնագավառում նկատվում է գրագիտության պակաս, որի մասին են վկայում տվյալները համացանցի օգտագործման ընթացքում

անվտանգության կանոնների պահպանության մասով: Պարզվում է, որ օգտատերերի շուրջ 30% չունի անտիվիրուսային հզոր ծրագիր, գրեթե կեսն օգտագործում է մինևս գաղտնաբառը տարբեր ծառայություններից օգտվելու ժամանակ, մոտ 17%-ն էլ օգտվում են տարիքային սահմանափակումներ ունեցող կայքերից:

Հիմնվելով ստացված տվյալների վրա՝ մշակվել են հետևյալ կիրառական բնույթի առաջարկություններ.

- Կազմակերպել եռամսյակային իրազեկման արշավներ բռնության դրսևորման բոլոր օղակների, ձևերի և տիրույթների վերաբերյալ, հատուկ միջոցառումներ կոնֆլիկտների լուծման հմտությունների փոխանցման ուղղությամբ՝ ուսումնական հաստատությունների հիմնական անձնակազմի, ծնողների և աշակերտների գիտելիքները հստակեցնելու, համակարգելու և ավելացնելու նպատակով, այդ թվում մանկավարժների, ծնողների և աշակերտների համատեղ աշխատանքային թիմերով: Հատուկ վերապատրաստման կարիք ունեն ոչ թե սոցիալական մանկավարժներն ու հոգեբանները, այլ հիմնական դասվար ուսուցչական կազմը, հատկապես աշխատանքային առավել մեծ ստաժ և բարձր տարիք ունեցող մանկավարժները: Բռնության վերահսկումն ու կանխարգելումը պետք է, նախ և առաջ, ուղղված լինի երևանաբանակ արական սեռի աշակերտական խմբերի պատկերացումների, գիտելիքի և աշխարհընկալման փոփոխությունների վրա:
- Հզորացնել հետադարձ կապը վերահսկող մարմինների հետ, որոշ դեպքերում նաև շրջանցելով միջանկյալ դպրոցական ադմինիստրատիվ օղակը, խրախուսելով չմիջնորդավորված տեղեկատվության շրջանառություն հատկապես մարզային համայնքներում /օրինակ, անանուն դպրոցական հարցումների, թեժ-գիծ ծառայությունների ավելացման, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցության միջոցով/:
- Մշակել և իջեցնել հատուկ ուղեցույցներ դասվարների, սոցմանկավարժների և հոգեբանների համար բռնության ենթարկված և բռնության հակված երեխաներին բացահայտելու և կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելու մասին, ինչպես նաև ստեղծել հաշվետվողականության հատուկ ձևանմուշներ հատկապես հոգեբանական ընկճվածության դեպքերը մշտադիտարկելու և մասնագիտական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:
- Ավելացնել/ստեղծել հատուկ մասնագետների՝ սոցիալական աշխատողների, սոցիալական մանկավարժների և հոգեբանների հաստիքներ բոլոր դպրոցներում, հատկապես մարզային համայնքներում՝ իջեցնելով մոնիթորինգի հստակ հաշվետվողականության ձևանմուշներ: Հզորացնել նշված մասնագետների լիազորությունների շրջանակը ուսումնական հաստատություններում:
- Ներդնել աշակերտ-ծնող-մանկավարժ եռաստիճան իրազեկման համակարգ ինտերնետի անվտանգ սպառման գրագիտության բարձրացման համար, որը պետք է

մշակվի և ներդրվի պետական կառույցների կողմից, իրագործվի/մատուցվի տարբեր մասնագիտական խմբերի, այդ թվում ՀԿ-ների և դպրոցի SS մասնագետի, աջակցությամբ և մանրամասնորեն վերահսկվի տեղերում դպրոցի տնօրինության և դասաղեկների կողմից:

- Ավելացնել դպրոցներում արտաքին վերահսկողության տեխնիկական միջոցները, մասնավորապես տեսախցիկները, անտիվիրուսային ծրագրերի փաթեթները, ծրագրավորող ադմինիստրատորների կողմից ինտերնետի անվտանգ օգտագործման միջոցառումները:
- Լուսաբանել և տարածել բացահայտվող խախտումների, բռնության դեպքերի, կիրերհանցագործությունների և **կոնկրետ պատիժների** մասին լրատվությունը ՁԼՄ-ների և ինտերնետի միջոցով:
- Հետագա հետազոտություններն անհրաժեշտաբար պետք է կենտրոնացնել հատուկ, գիշերօթիկ դպրոցների, մանկատների և այլ նմանատիպ հաստատությունների ուղղությամբ, ինչպես նաև, հիմք ընդունելով ստացված արդյունքները, կատարել հատուկ դեպքերի ուսումնասիրություններ օգտագործելով որակական հետազոտական մեթոդաբանություն:

Հավելված 1. Հետազոտության գործիքներ

ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բարև ձեզ, Իմ անունն է _____:

Ես ներկայացնում եմ «ՄԵԴԻԱ-ՄՈՂԵԼ» ընկերության հետազոտական թիմը, որը

ՀՈՒՅՄ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԿ գրասենյակի հետ համագործակցությամբ

իրականացնում է հայ դեռահասների շրջանում բռնության և կիբեր-հանցագործությունների

դրսերումների հետազոտություն:

Դուք բոլորդ ընդգրկված եք այս հետազոտությունում՝ որպես խմբային հարցազրույցի մասնակիցներ և

առանցքային տեղեկատուներ: Ձեր ակտիվ մասնակցությունը, անկեղծ և մանրամասն պատասխանները

խիստ կարևոր են մեզ համար: Հետազոտությունն անանուն է և ստացված տվյալները կօգտագործվեն

միայն ընդհանրացված տեսքով:

Նախապես շնորհակալություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կլաստերը/Մարզը

1. Տավուշ

2. Վայոց Ձոր

3. Երևան

2. Մասնակիցների ընդհանուր թիվը _____

3. Մասնակիցների թիվը՝ ըստ սեռի
արական _____ իգական _____

4. Մասնակիցների թիվը՝ ըստ մասնագիտացման

1. Դասվար ուսուցիչ _____

2. Այլ ուսուցիչ _____

3. Մոցիալական մանկավարժ _____

4. Մոցիալական աշխատող _____

5. Հոգեբան _____

6. Բժիշկ/բուժ.քույր _____

7. Անվտանգության մասնագետ/ոստիկան _____

8. Մարզպետարանի/քաղաքապետարանի պատասխանատու _____

5. Քննարկման ընդհանուր տևողությունը _____ րոպե

Ա. ԲՈՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ, ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Այսօր մենք քննարկելու ենք դեռահասների նկատմամբ “բռնություն” և “կիբեր-հանցագործություն” հասկացություններն ու դրանց առնչվող հիմնախնդիրները:

Փորձենք սահմանել հասկացությունը:

1. Ի՞նչ եք հասկանում բռնություն ասելով: Բռնության ինչպիսի՞ դրսերումներ/տեսակներ գոյություն ունեն: Դրանցից որո՞նք են առավել տարածված Հայաստանում: Իսկ Ձեր մարզում մ/համայնքում:

ՓՐՈՍՓԹԵՐ ՄՈՂԵՐԱՏՈՐԻՆ՝

- Ֆիզիկական բնություն**
- Հոգեբանական բնություն**
- Մեռական բնություն**

2. Ո՞ր միջավայրում է առավել տարածված բնությունը և որ ձևերն են գերակշռում: Ում կողմից է հատկապես բնություն կիրառվում դեռահասների նկատմամբ:
 - o Ընտանիք
 - o Դպրոց/ուսումնական հաստատություններ
 - o Հասակակիցներ/ընկերներ
3. Ձեր բնակավայրում դեռահասների նկատմամբ բնության ինչպիսի՞ դեպքեր են հայտնի դարձել ձեզ վերջին 5 տարվա կտրվածքով: **ՔՆՆԱՐԿԵԼ ԴԵՊՔԵՐ՝ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ, ԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՅԼՆ: ՃՇՏԵԼ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ:**

ԲԼՈԿԻ ՆՊԱՏԱԿ՝ Օգտագործել ֆլիփ-չարթ՝ ասոցիատիվ հասկացության շարք ստեղծել:

ԳՐԱՌՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ.

Բնության դրսևորումները/ձևերը	Բնության սուբյե կտներ

Բ. ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ/ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

1. Ինչպիսի՞ մեթոդներ եք կիրառում դպրոցներում՝ անկարգ աշակերտների նկատմամբ:
2. Ո՞վ և ինչպե՞ս է վերահսկում ուսուցիչների կողմից այդ մեթոդների կիրառումը Ձեր դպրոցում:
3. Ես թվարկեմ միջոցներ, քննարկենք՝ դրանցից որո՞նք եք ընդունելի համարում խիստ բացասական արարք կատարած աշակերտին կարգի հրավիրելու համար. Որո՞նք են առավել արդյունավետ.

ՍՏԱՆԱԼ ԳՆԱՀԱՏՈՒՄ 5 ԲԱԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿՆԵՐՈՎ:

	5- ամենաընդունելի, 1- անընդունելի	5-ամենաարդյունավետ, 1 անարդյունավետ
Բացատրական գրույցներ բոլորի ներկայությամբ		
Բացատրական առանձնագրույցներ		

Ձայնը բարձրացնել/բղավել		
Հոգեբանական ճնշում/ նսեմացնող պատիժներ /անկյուն կանգնել, ավլել, մեկուսացում և այլն/		
Ապտակ/ հրմշտոց		
Հարվածներ կամ ծեծ		

ՔՆՆԱՐԿԵԼ ԴԵՊՔԵՐ:

4. Ինչպիսի՞ հոգեբանական ռեակցիաներ եք նկատում երեխաների մոտ նման մեթոդներ կիրառելիս (հատկապես նսեմացնող պատիժների դեպքում, որքան տարածված են վախի, ըկճվածության, հիասթափության և այլ զգացողությունները): Նմանատիպ հոգեբանական ռեակցիաներին ինչպե՞ս եք արձագանքում: Ինչպե՞ս եք վարվում, եթե նկատում եք հոգեբանական լարվածություն, ընկճվածություն, ճնշվածություն երեխաների մոտ:
5. Եղե՞լ են աշակերտների կամ նրանց ծնողների կողմից բողոքներ դաբոցում անարդարացի պատիժների, բռնության կիրառման դեպքերի կամ հոգեբանական ճնշման առումով: **ՔՆՆԱՐԿԵԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ:**
6. Ո՞ր դեպքերում ֆիզիկական պատիժները կարող են արդարացված համարվել:
7. Մարմնական պատժատեսակներից/բռնության ձևերից որո՞նք կարող են կիրառվել ընտանիքում, բայց չեն կարող կիրառվել դպրոցում:
8. Արդյո՞ք դպրոցը որևէ կերպ վերահսկում է աշակերտների ընտանիքում տիրող մթնոլորտը/ հնարավոր բռնության դրսևորումները: Ինչու՞: Ինչպե՞ս:
9. Ինչպե՞ս կարելի է բացահայտել բռնության ենթարկված երեխային: Ինչպիսի՞ ազդանշաններ են վկայում երեխայի հանդեպ հնարավոր բռնության գործադրման մասին:
10. Ինչպե՞ս եք արձագանքում, երբ համադասարանցիների կամ դպրոցի դեռահաս աշակերտների միջև ֆիզիկական բռնության կիրառմամբ վիճաբանություններ են լինում: Որքա՞ն հաճախ են: Մոտավորապես քանի երեխա/կամ երեխաների որ մասն է ենթարկված ճնշումների/խոշտանգումների կամ մեկուսացված է Ձեր դպրոցում:
11. Ինչպիսի՞ լծակներ ունի դպրոցը նման բռնի կոնֆլիկտներին միջամտելու առումով: Ինչպե՞ս են պատժում նման աշակերտներին:
12. Որքա՞ն հաճախ եք նկատում սեռական գրավչություն հրահրող վարք աղջիկների շրջանում: Աղջիկների ո՞ր մասն է/քանիսն են հագուստի,

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

հարդարման, պահվածքի միջոցով ցուցադրում իրենց սեքսուալությունը/հասանելիությունը:

13. Լսե՞լ եք Ձեր բնակավայրում անչափահասների հանդեպ սեռական բնույթի ոտնձգությունների կամ սեռական բռնության որևէ դեպքի մասին: **ՔՆՆԱՐԿԵԼ ԴԵՊՔԵՐ՝ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ, ԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՅԼՆ: ՃՇՏԵԼ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ:**

Գ.ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՏԱՆԳԸ

1. Ի՞նչ եք լսել կիրքեր-հանցագործությունների մասին: Լսե՞լ եք որևէ նմանատիպ դեպքերի մասին Ձեր մարզում/համայնքում:
ՔՆՆԱՐԿԵԼ ԴԵՊՔԵՐ: ՃՇՏԵԼ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ:
2. Ունի՞ արդյոք համակարգիչներ և համացանց Ձեր դպրոցը: Ինչպե՞ս է երաշխավորվում անվտանգությունը համացանցում:
ՓՐՈՐԲԵՐ ՄՈՂԵՐԱՏՈՐԻՆ՝
 - Կայքերի տարիքային և այլ սահմանափակումներ
 - Ադմին վերահսկողություն
 - Անտիվիրուսային ծրագրեր
 - այլ
3. Հիմնականում ինչ նպատակով են աշակերտները օգտագործում ինտերնետը: Արդյոք տեղեկացված են համացանցում հնարավոր վտանգներից:
4. Ի՞նչ է անում դպրոցը այս խնդիրները վերահսկելու առումով:

Դ.ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Քննարկվե՞լ են արդյոք բռնության կամ կիրքեր-հանցագործությանն առնչվող հարցեր դպրոցում:
 1. Կոլեկտիվի ներսում
 2. Աշակերտների հետ
 3. Ծնողների հետԵ՞րբ: Ինչպե՞ս:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵԼ ԼՊԱՏԱԿԸ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՎ ԱՅԼՆ:

2. Կա՞ն արդյոք որևէ մշակված դասընթացներ կամ թեմատիկ պարապունքներ աշակերտների համար, վերապատրաստումներ ուսուցիչների համար, որոնց ժամանակ անդրադարձ է կատարվում սեռական բռնության/կիրքեր-հանցագործություններին: **ԵԹԵ ԱՅՈ, ԱՊԱ ՊԱՐԶԵԼ.**
 - a. Կառուցվածքը
 - b. Նպատակը

- c. Նախաձեռնողներին
- d. Վերահսկումը

ԵԹԵ ՈՉ, ԱՊԱ ՊԱՐՁԵԼ ԻՆՉՈՒ՞Ց.

- 3. Կա արդյո՞ք իրազեկման անհրաժեշտություն: Ու՞մ է պետք իրազեկել առաջին հերթին՝ անձնակազմ, աշակերտներ, ծնողներ: Ինչու՞:
- 4. Ինչպիսի՞ իրազեկման ծրագրերի կարիք կա:

Եկեք ամփոփենք քննարկումը՝ ինչպիսի կոնկրետ գործոններ կան, որոնք նպաստում են բռնության և կիրեր-հանցագործությունների տարածմանը հայ դեռահասների շրջանում:

**ԲԼՈՎԻՆՊՍՍԱԿ՝ Օգտագործել ֆլիփ-չարթ՝ ուղեղների գրոհ:
ԳՐԱՌՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ.**

Դեռահասների շրջանում բռնության և կիրեր-հանցագործությունների տարածմանը նպատող գործոններ	Առաջարկվող միջոցառումներ/ռիսկերի վերահսկում	Իրագործող խմբեր/պատասխանատուներ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ն օ

Հարգելի Հարցվող,

«ՄԵՂԻԱ-ՄՈՂԵԼ» ընկերության հետազոտական թիմը ՀՈՒՅՍ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԿ գրասենյակի հետ համագործակցությամբ իրականացնում է հայ դեռահասների շրջանում բռնության և կիրքեր-հանցագործությունների դրսևորումների հետազոտություն:

Ձեր դպրոցը/ԲՈՒՀ-ը ընդգրկվել է հետազոտության ընտրանքային ցանկում: Պատահական ընտրանքի սկզբունքով Դուք ընտրվել եք՝ որպես հարցվող:

Հետազոտությունն անանուն է. Ձեր անունը և հասցեն չեն նշվելու:

Տեղեկատվությունը ընդհանրացվելու է և կներկայացվի ամփոփ վերլուծության տեսքով:

Ձեզանից ակնկալում ենք անկեղծ պատասխաններ հարցազրուցավարի հարցերին:

Ձեր հավաստի պատասխանները խիստ կարևոր են մեզ համար:

1. Հարցազրուցավարի կողմը _____

2. Ամսաթիվ /օր.ամիս.տարի, օր՝ 12.05.2013/ _____

3. Բնակավայրի կողմը _____

4. Ուսումնական հաստատության կարգավիճակը

1. մասնավոր /ոչ պետական
2. պետական

5. Ուսումնական հաստատության տիպը

1. ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) ՆՇԵԼ ԹԻՎԸ/ԱՆՎԱՆ _____
2. հիմնական դպրոց (1-9-րդ դասարաններ) ՆՇԵԼ ԹԻՎԸ/ԱՆՎԱՆ _____
3. միջնակարգ դպրոց (1-12-րդ դասարաններ) ՆՇԵԼ ԹԻՎԸ/ԱՆՎԱՆ _____
4. վարժարան (5-12-րդ դասարաններ) ՆՇԵԼ ԹԻՎԸ/ԱՆՎԱՆ _____
5. ԲՈՒՀ ՆՇԵԼ ԲՈՒՀ-ը _____

6. Դասարանը/կուրսը

1. IX
2. X
3. XI
4. XII
5. I կուրս

7. Հարցվողի տարիքը/գրել լրացած տարիների թիվը/ _____

8. Հարցվողի սեռը

1. Արական
2. Իգական

9. Հարցազրույցի սկիզբ /ժժ:րր/ _____

«Դժվարանում եմ պատասխանել» տարբերակի դեպքում նշել 99:

Ա. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Մի քանի հարց ունեն Ձեր ընտանիքի մասին: Ընտանիք ասելով՝ ես հասկանում եմ Ձեզ հետ միևնույն հարկի տակ բնակվող և համատեղ տնտեսություն վարող Ձեր ազգականներին:

Ա1. Քանի՞ հոգուց է բաղկացած Ձեր ընտանիքը: /ՆՇԵԼ ԹԻՎԸ/ _____


Ա2. Ովքե՞ր են հիմա ապրում Ձեր ընտանիքում՝ չհաշվելով աշխատանքի, ուսման, զին.ծառայության և այլ նպատակներով երկարաժամկետ (1տարուց ավելի) բացակայողներին.

1. Մայր
2. Հայր
3. Քույր/եղբայր
4. Պապ/տատ
5. Հորեղբայր/քեռի
6. Հորաքույր/մորաքույր
7. Այլ ազգականներ /նշել/ _____

Ա3. Ինչպիսի՞ կրթություն ունեն Ձեր ծնողները: **ԵԹԵ ՄԱՅՐ ԿԱՍ ՀԱՅՐ ՉՈՒՆԻ ՀԱՐՑՆԵԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՄԱՍԻՆ:**

Կրթություն	Մայր/այլ իգական սեռի խնամակալ	Հայր/այլ արական սեռի խնամակալ
1. Տարրական	1	1
2. Միջնակարգ	2	2
3. Միջին մասնագիտական/արհեստագործական	3	3
4. Բարձրագույն	4	4
5. ԻԳԱԿԱՆ ՄԵՌԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՉՈՒՆԻ	5	
6. ԱՐԱԿԱՆ ՄԵՌԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՉՈՒՆԻ		5

Ա4. Սանդուղքի ո՞ր աստիճանին կտեղավորեք Ձեր ընտանիքը՝ նյութական ապահովության տեսանկյունից, եթե առաջին աստիճանը ցույց է տալիս ամենացածր բարեկեցությունը, իսկ 5-րդը՝ ամենաբարձր: **ՑՈՒՅՑ ՏԱԼ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՐՑՎՈՂԻՆ:**



Ա5. Ինչպե՞ս կրնութե՞ք մթնոլորտը Ձեր ընտանիքում.

1. Շատ ջերմ և հանգիստ
3. Հիմնականում ջերմ և հանգիստ
5. Ոչ այնքան ջերմ և հանգիստ
7. Հիմնականում անհանգիստ

Ա6. Արդյո՞ք ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունները լարված են.

1. Ոչ, ընդհանրապես լարված չեն
3. Երբեմն առաջանում է լարվածություն
5. Այո, շատ լարված են

Ա7. Երբևէ եղե՞լ են դեպքեր, երբ ընտանիքի անդամների միջև վիճաբանության ընթացքում կիրառվել է բռնություն կամ ֆիզիկական ուժ միմյանց հանդեպ:

1. Ոչ, ընդհանրապես նման դեպքեր տեղի չեն ունեցել
3. Այո, նման դեպք մեկ կամ մի քանի անգամ տեղի է ունեցել
5. Այո, եղել են շատ հաճախ

Ա8. Որքանո՞վ են Ձեր ծնողները/ընտանիքի այլ անդամները վերահսկում Ձեր...

	Չափից ավելի են վերահսկում	Չափի մեջ են վերահսկում	Առհասարակ չեն վերահսկում
1. արտաքին տեսքը /հագուստ, սանրվածք և այլն/	1	3	5
2. ազատ տեղաշարժը /օր՝ ժամանցը/	1	3	5
3. շփումները ընկերների հետ	1	3	5
4. ինտերնետից օգտվելը	1	3	5
5. հեռուստացույց դիտելը	1	3	5
6. դասապատրաստումը	1	3	5

Ա9. Որքա՞ն հաճախ է լինում, որ ծնողները կամ ընտանիքի մյուս անդամները զայրացած/լարված/նյարդայնացած լինելով՝ անտեղի Ձեր վրա են տեղափոխում իրենց բարկությունը:

1. Հաճախ
3. Երբեմն
5. Երբեք

Ա10. Ծնողների/ընտանիքի այլ անդամների հետ Ձեր հարաբերություններում որքա՞ն հաճախ են տեղի ունենում հետևյալ իրավիճակները.

	Հաճախ	Երբեմն	Երբեք	ԼՐԱՑՆԵԼ ՄԻԱՑՆ, ԵԹԵ ՆՇՎԵԼ Է ՀԱՃԱՆ ԿԱՍ ԵՐԲԵՄՆ Նման գործողությունները. 1. Հիմնականում արդարացված են, քանի որ ես մեղավոր եմ 2. Հիմնականում չարդարացված են. չնայած ես ունեմ մեղքի բաժին 3. Առհասարակ չարդարացված են, քանի որ ես մեղավոր չեմ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Ձեր վրա բարկանում/բղավում են	1	3	5	1	2	3
2. Ձեզ ապտակում/հրմշտում են	1	3	5	1	2	3
3. Ձեզ հարվածում կամ ծեծում են	1	3	5	1	2	3
4. այլ (ոչ-մարմնական) պատիժներ են կիրառում /ՆՇԵԼ/	1	3	5	1	2	3

Ա11. Որքան՞ով եք ընդունելի համարում Ձեր հասակակից անչափահասին պատժելու ստորև թվարկված միջոցները, եթե պատկերացնենք, որ նա որևէ անընդունելի/խիստ բացասական արարք է կատարել.

	Լիովին ընդունելի է	Որոշ դեպքերում ընդունելի է	Անընդունելի է
1. Բարկանալ/բղավել/գոռալ	1	3	5
2. Ապտակել/ թեթև հրմշտել	1	3	5
3. Հարվածել/ծեծել	1	3	5
4. Փականել սենյակում/տանը	1	3	5
5. Տանից վռնդել	1	3	5
6. Զրկել ինչ-որ իրից, զբաղմունքից, այլ բաներից	1	3	5

Բ. ԸՆԿԵՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Բ1. Ովքե՞ր են հիմնականում Ձեր ընկերները.

1. Հասակակիցներ
2. Ինձանից տարիքով մեծեր
3. Ինձանից տարիքով փոքրեր

Բ2. Ինչպե՞ս կբնութագրեք Ձեր հարաբերությունները...

	Հիմնականում ջերմ	Նայած ժամանակ	Հիմնականում լարված
1. Համադասարանցիների/համակուրսեցիների հետ	1	3	5
2. Հասակակից հարևանների/բակի հասակակիցների հետ	1	3	5
3. Հիմնական ուսուցիչ/դասախոսների հետ	1	3	5

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Բ3. Եթե Ձեր առօրյա կյանքում առաջանան խնդրահարույց/կասկածելի իրավիճակներ, ու՞մ կողմից խորհրդի/օգնության համար առաջին հերթին, իսկ երկրորդ հերթին. /ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՉԿԱՐԴԱԼ/

Կղիմի օգնության համար	Առաջին հերթին	Երկրորդ հերթին
1. Ծնողներին	1	1
2. Քրոջս/եղբորս	2	2
3. Այլ ազգականների	3	3
4. Ընկերներին	4	4
5. Ուսուցիչներին/դասախոսներին	5	5
6. Այլ /նշել/	6	6
7. Ոչ ոքի	7	

Բ4. Արդյո՞ք Ձեր շրջապատում/բնակավայրում եղե՞լ են դեպքեր, երբ Ձեր կամ Ձեր հասակակից մտերիմ ընկերներից մեկի հանդեպ կիրառվել է բռնություն/ֆիզիկական ուժ...

	Այո, հաճախ	Այո, երբեմն	Ոչ
1. Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից	1	2	3
2. Հասակակից հարևանների/բակի հասակակիցների կողմից	1	2	3
3. Ուսուցիչների/դասախոսների կողմից	1	2	3
4. Այլ սուբյեկտների կողմից /ՆՇԵԼ/	1	2	3

Բ5. Եղե՞լ են դեպքեր, որ հասակակիցների/ ուսուցիչների/ ընտանիքի անդամների գործողությունների հետևանքով, Ձեզ զգացել էք հոգեբանորեն խիստ ճնշված, նսեմացված, հուսալքված:

	Այո, հաճախ	Այո, երբեմն	Ոչ
1. Համադասարանցիների/համակուրսեցիների կողմից	1	2	3
2. Հասակակից հարևանների/բակի հասակակիցների կողմից	1	2	3
3. Ուսուցիչների/դասախոսների կողմից	1	2	3
4. Ընտանիքի անդամների կողմից	1	2	3
5. Այլ սուբյեկտների կողմից /ՆՇԵԼ/	1	2	3

Բ6. Երբե՞տ լսե՞լ էք ուսուցիչների/դասախոսների կողմից Ձեր հասակակիցների նկատմամբ բռնության կիրառման դեպքերի մասին:

1. Այո
3. Ոչ /ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ Բ8/

Բ7. Որտեղի՞ց էք տեղեկացել այդ դեպքի/երի մասին.

ԴՆԵԼ ԲՈՒՈՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ/

1. Անձնական փորձից/ինքնա եմ տեսել
2. Ծնողներից
3. Մտերիմ ընկերներից/բարեկամներից
4. Անձանոթներից
5. Ուսուցիչներից/դասախոսներից
6. Հեռուստատեսությունից, այլ ՁԼՄ
7. Ինտերնետից
8. Գրականությունից/դասընթացից
9. Այլ

/նշել/ _____

Բ8. Որքա՞ն հաճախ են կիրառվում ստորև թվարկված պատժամիջոցները Ձեր դասարանում/կուրսում անկարգ աշակերտներին/ուսանողներին պատժելու համար.

	Հաճախ	Երբեմն	Երբեք	ԼՐԱՑՆԵԼ ՄԻԱՑՆ, ԵԹԵ ՆՇՎԵԼ Է ՀԱՃԱՆ ԿԱՍ ԵՐԲԵՄՆ Նման գործողությունները. 1. Հիմնականում արդարացված են, քանի որ ես մեղավոր եմ 2. Հիմնականում չարդարացված են. չնայած ես ունեմ մեղքի բաժին 3. Առհասարակ չարդարացված են, քանի որ ես մեղավոր չեմ
1. Բացատրական զրույցներ բոլորի ներկայությամբ	1	2	3	1 2 3
2. Բացատրական առանձնազրույցներ	1	2	3	1 2 3
3. Գոռոց, վիրավորական խոսք	1	2	3	1 2 3
4. Ապտակ/ հրմշտոց	1	2	3	1 2 3
5. Հարվածներ կամ ծեծ	1	2	3	1 2 3
6. Նսեմացնող պատիժներ /անկյուն կանգնել, ավլել, մեկուսացում և այլն/	1	2	3	1 2 3
7. այլ (ոչ-մարմնական) պատիժներ ՆՇԵԼ	1	2	3	1 2 3

Բ9. Երբ անարդարացի պատիժներ են կիրառվում դպրոցում կամ Բուհ-ում, ու՞մ էք դիմում աջակցության համար: **ԴՆԵԼ ԲՈՒՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ/**

1. Ոչ ոքի չեմ դիմում
2. Ծնողներին/այլ ազգականների
3. Ընկերներին
4. Դպրոցի հոգեբանին/սոց.մանկավարժին
5. Դաս.ղեկին

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- 6. Այլ ուսուցիչներին/դասախոսներին
- 7. Տնօրինությանը/ադմինիստրացիա
- 8. Ուսանողական խորհրդին
- 9. Այլ վերադաս մարմինների /նախարարություն, մարզպետարան/քաղաքապետարան և այլն/
- 10. /ԶԿԱՐԴԱԼ/ Անարդարացի պատիժներ առհասարակ չեն կիրառվում
- 11. Այլ /նշել/

Բ10. Որքա՞ն հաճախ են Ձեր շրջապատի հասակակիցները միմյանց հանդեպ կիրառում հետևյալ վարքաձևերը.

	Հաճախ	Երբեմն	Երբեք
1. Ծաղրում, մեկուսացնում, նվաստացնում	1	3	5
2. Ստիպում գումար տալ/վճարել	1	3	5
3. Առգրավում իրեր	1	3	5
4. Պարտադրում կատարել որևէ աշխատանք/ծառայություն	1	3	5
5. Պարտադրում սեռական բնույթի գործողությունների	1	3	5
6. Ծեծում	1	3	5
7. Վախացնում	1	3	5
8. Փականում	1	3	5

ԵԹԵ ԲՈԼՈՐ ՍՅՈՒՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ Է ԵՐԲԵՔ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑՆԵԼ ԲԼՈՎ Դ, ԻՍԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑՆԵԼ ԲԼՈՎ Գ:

Բ11. Ովքե՞ր են սովորաբար միջամտում նման իրավիճակներում:

ՂՇԵԼ ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ 3 ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ/

- 1. Ոչ ոք
- 2. Ծնողներ
- 3. Այլ ազգականներ
- 4. Ընկերներ
- 5. Ուսուցիչներ/դասախոսներ
- 6. Տնօրինություն/ադմինիստրացիա
- 7. Այլ վերադաս մարմիններ /նախարարություն, մարզպետարան/քաղաքապետարան և այլն/
- 8. /ՏԱՐԲԵՐԱԿԸ ԶԿԱՐԴԱԼ/ Անձանոթ մարդիկ, ովքեր նկատում են իրավիճակը
- 9. Այլ /նշել/ _____

ՈՒՍԱՆՈՂ ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՆԵԼ ՆԵՐԴԻՐ ԹԵՐԹԻՎ ԲԼՈՎ:

ԱՇԽԱԿԵՐՏ ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑՆԵԼ ԲԼՈԿ Դ:

Դ. ԻՆՏԵՐՆԵՏԻ ՍՊԱՌՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Դ1. Որքա՞ն հաճախ եք օգտվում ինտերնետից:

1. Ամեն օր
3. Շաբաթը մի քանի անգամ
5. Ամիսը մի քանի անգամ
7. Տարին մի քանի անգամ
9. Չեմ օգտվում առհասարակ /ԱՎԱՐՏԵԼ ՀԱՐՑՈՒՄԸ, ՎԵՐՁԻՆ ԷՋՈՒՄ ԳՐԵԼ

ԱՎԱՐՏԻ ԺԱՄԸ/

Դ2. Օրվա ընթացքում միջինում քանի՞ ժամ եք գտնվում ցանցում:

1. մինչև 30ր
3. 30 ր – 2 ժամ
5. 2-4 ժամ
7. 4-6 ժամ
9. 6 և ավելի ժամ

Դ3. Ինտերնետին միանալիս սովորաբար ինչպիսի՞ միջոց եք օգտագործում.

/ՆՇԵՔ ԲՈԼՈՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ/

1. Ոչ շարժական տնային համակարգիչ, որից օգտվում են ընտանիքի մյուս անդամները
2. Ոչ շարժական տնային համակարգիչ, որից օգտվում եք միայն դուք
3. Անձնական պլանշետ, լեփթոփ կամ նեթբուք
4. Անձնական հեռախոս
5. Ոչ շարժական համակարգիչ դպրոցում/Բուհում
6. Ոչ շարժական հանրային օգտագործման համակարգիչ ինտերնետ-կաֆեում և այլն
7. Այլ _____

Դ4. Ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտվում ինտերնետից:

/ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԲԵՐԱԿ/

1. Նամակագրություն/շփում ծանոթներիս/բարեկամներիս հետ
2. Ծանոթություն/շփում նոր մարդկանց հետ
3. Տեղեկատվության, լրատվության ձեռք բերում
4. Գրականության ընթերցանություն, ուսում
5. Խաղեր/Զվարճանք
6. Առևտուր
7. Այլ _____

Դ5. Եթե օգտվում եք ինտերնետից շփման համար, ապա ինչպիսի՞ ծառայություններ եք օգտագործում: ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ/

1. Էլեկտրոնային փոստ /e.mail/
2. Սոցիալական ցանց
3. Անձնական բլոգ
4. Օգտագործում եմ վիդեո հաղորդակցություն/video-chat, SKYPE և նմանատիպ այլ ծրագիր
5. Այլ
6. Շփման համար առհասարակ չեմ օգտվում /ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ Դ12/

Դ6. Արդյոք գրանցված եք որևէ սոցիալական ցանցում

1. Այո
3. Ոչ /ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ Դ12/

Դ7. Քանի՞ անձնական գրանցահամար/account ունեք սոցիալական ցանցերում:

1. 1
3. 2-3
5. 4-5
7. 6 և ավելի

Դ8. Ձեր համացանցի ընկերներից, ո՞ր մասի հետ եք ծանոթ անձնապես իրական կյանքում.

1. Բոլորի
3. Մեծամասնության
5. Կեսի
7. Մի քանիսի, մյուսներին երկար ժամանակ է ճանաչում եմ ցանցից
9. Ոչ ոքի, բոլորին ճանաչում եմ ցանցից

Դ9. Որքանո՞վ է հավանական, որ հանդիպում նշանակեք/հանդիպեք համացանցում ձեռք բերված նոր ընկերոջ/ուհու հետ:

1. Շատ հավանական է. նոր մարդկանց հետ սիրում եմ ծանոթանալ
3. Հավանական է՝ միայն նրա մասին բավարար տեղեկություններ ունենալու դեպքում
5. Գրեթե անհավանական է. ես նախընտրում եմ իրական ընկերներիս հետ շփվել
7. Անհավանական է. երբեք չեմ ծանոթանա իրական կյանքում

Դ10. Ձեր մասին հետևյալ անձնական տվյալները համացանցում

	Բաց են հանրության համար	Բաց են միայն Ձեր ընկերների համար	Լրիվ փակ են	Նման տվյալ չեն տեղադրում ցանցում /ԶԿԱՐԴԱԼ/
1.Տարիքը	1	3	5	7
2.Հեռախոսահամարը	1	3	5	7
3.Ֆինանսական դրությունը	1	3	5	7
4.Գտնվելու վայրը	1	3	5	7
5.Ֆոտո, տեսա և ձայնագրություններ	1	3	5	7
6.Ապրումները	1	3	5	7
7.Նախասիրությունները, պլանները	1	3	5	7

Դ11. Արդյո՞ք օգտագործում եք Ձեր իրական անձնական տվյալները սոցիալական ցանցերում, փոստում, ֆորումներում և այլուր գրանցվելիս.

	Այո, մշտապես	Այո, բայց ոչ միշտ	Ոչ	Նման տվյալ չեն տեղադրում ցանցում /ԶԿԱՐԴԱԼ/
1.Անուն Ազգանուն	1	3	5	7
2.Տարիք	1	3	5	7
3.Բնակության վայր	1	3	5	7
4.Նկար	1	3	5	7
5.Հեռախոսահամար	1	3	5	7
6.Նախասիրություններ	1	3	5	7

Դ12. Համացանցում երբևէ ստացե՞լ եք իրական կյանքում անձանոթ որևէ մեկից հետևյալ առաջարկությունները.

	Այո	Ոչ
1.Հանդիպել իրական կյանքում	1	3
2.Փոխանակել նկար/տեսանյութ	1	3
3.Աշխատանքի առաջարկություն	1	3
4.Սեռական բնույթի առաջարկություններ	1	3

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Դ13. Իսկ Ձեր հասակակից ընկերներից որևէ մեկը ստացել է նման առաջարկություններ.

Եթե ստացել է, ապա արդյոք ընդունել է

	Այո ստացել է և ընդունել է	Այո ստացել է, բայց չի ընդունել	Ոչ, չի ստացել
1. Հանդիպել իրական կյանքում	1	3	5
2. Փոխանակել նկար/տեսանյութ	1	3	5
3. Աշխատանքի առաջարկություն	1	3	5
4. Սեռական բնույթի առաջարկություններ	1	3	5

Դ14. Համաձայն եք, արդյոք, հետևյալ դատողությունների հետ

	Այո	Ոչ
1. Իմ համակարգիչն օժտված է հզոր ժամանակակից անտիվիրուսային ծրագրով	1	3
2. Հարմարության համար ես օգտագործում եմ նույն գաղտնաբառը տարբեր ծառայություններից օգտվելու ժամանակ:	1	3
3. Երբեմն այցելում եմ տարիքային սահմանափակումներ ունեցող կայքեր/օգտվում ծառայություններից	1	3
4. Կիսվում/փոխանակում եմ անձնական կարևոր նկաներ/տեսագրություններ, որոնք կարող են վարկաբեկել ինձ կամ որևէ մեկին	1	3

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

10. Հարցազրույցի ավարտը /ժժ:րր/ _____

11. Հարցազրուցավարի դիտարկումներ _____

ՆԵՐԴԻՐ ԹԵՐԹԻԿ ՄԻԱՅՆ ՈՒՍԱՆՈՂ ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գ. ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՍԵՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ1. Իսկ դպրոցում սովորելու տարիներին որքա՞ն հաճախ էին կիրառվում ստորև թվարկված պատժամիջոցները աշակերտներին պատժելու համար:

	Հաճախ	Երբեմն	Երբեք
1. Բացատրական զրույցներ բոլորի ներկայությամբ	1	2	3
2. Բացատրական առանձնազրույցներ	1	2	3
3. Գոռոց, վիրավորական խոսք	1	2	3
4. Ապտակ/ հրմշտոց	1	2	3
5. Հարվածներ կամ ծեծ	1	2	3
6. Նսեմացնող պատիժներ /անկյուն կանգնել, ավլել, մեկուսացում և այլն/	1	2	3
7. Այլ (ոչ-մարմնական) պատիժներ ՆՇԵԼ	1	2	3

Գ2. Երբևէ լսե՞լ եք Ձեր հասակակիցների հանդեպ սեռական բռնության կամ սեռական բնույթի ոտնձգությունների մասին...

	Այո	Ոչ	ԼՐԱՑՆԵԼ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՏՈՂԵՐԸ ՈՐՏԵՂ ՆՇՎԱԾ Է ԱՅՈՒ: Եթե այո, ապա որտեղի՞ց եք տեղեկացել այդ դեպքերի մասին. /ՆՇԵԼ ԲՈՒՈՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ/ 1. Անձնական փորձից/ներկա եմ եղել, ինձ է ուղղված եղել/ 2. Ծնողներից 3. Դպրոցից/Բուհից 4. Այլ ընկերներից 5. Բարեկամներից 6. Ուսուցիչ/դասախոսներից 7. ՁԼՄ-ներից 8. Ինտերնետից 9. Այլ
1. Ընտանիքի անդամի/մոտ ազգականի կողմից	1	3	1 2 3 4 5 6 7 8 9 /ԱՅԼԸ ԳՐԵԼ/
2. Ուսուցիչների/դասախոսների կողմից	1	3	1 2 3 4 5 6 7 8 9 /ԱՅԼԸ ԳՐԵԼ/
3. Տնօրենի/ղեկանի, այլ ղեկավար կազմի կողմից	1	3	1 2 3 4 5 6 7 8 9 /ԱՅԼԸ ԳՐԵԼ/
4. Հասակակիցների կողմից	1	3	1 2 3 4 5 6 7 8 9 /ԱՅԼԸ ԳՐԵԼ/
5. Այլ չափահաս անձանց կողմից	1	3	1 2 3 4 5 6 7 8 9 /ԱՅԼԸ ԳՐԵԼ/

Գ3. Եթե այո, ապա ի՞նչ եք զգացել այդ պահին:

1. Վախ
2. Նյարդային ոզեվորվածություն
3. Նսեմացում
4. Հուսահատություն
5. Լքվածություն
6. Բարկություն
7. Հիասթափություն
8. Ոչինչ
9. Այլ ՆՇԵԼ/ _____

Գ4. Եթե հանկարծ նկատեք, որ հայտնվել եք սեռական բռնության վտանգ պարունակող իրավիճակում, ու՞մ կղիմեք օգնության համար: ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԲԵՐԱԿ/

1. Ինքնուրույն կփորձեմ կարգավորել
2. Ծնողներիս
3. Այլ բարեկամներիս
4. Ընկերներիս
5. Ուսուցիչներիս/դասախոսներիս
6. Ոստիկանություն
7. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
8. Հասարակական կազմակերպություն
9. /ԶԿԱՐԴԱԼ/ Ցանկացած պատահած մարդու, ով գտնվում է մոտակայքում
10. Այլ /նշել/ _____

Գ5. Եթե ականատես կամ զոհ լինեք սեռական բնույթի գործողությունների, կնախընտրե՞ք.

1. Բարձրաձայնել բռնության դեպքի մասին, քանի որ կարևոր է պատժել մեղավորներին
3. Թաքցնել դեպքի մանրամասները, քանի որ կարող եք վարկաբեկվել կամ հայտնվել անոթալի դրության մեջ:

Գ6. Արդյոք, գիտե՞ք Հայաստանում որևէ կազմակերպություն, որը հատուկ աջակցություն է ցուցաբերում բռնության ենթարկված անչափահասներին:

1. Այո /ԵԹԵ ԱՅՈ, ՆՇԵԼ ՈՐԸ/ _____
3. Ոչ

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԼՐԱՑՆԵԼ ԲԼՈԿ Դ-ից:

Հավելված 2. Բռնության դեպքերի մասին մեջբերումներ ֆոկլուս-խմբային հարցազրույցներից

Դեպք 1. ք. Երևան, դպրոցի սոց. մանկավարժ-հոգեբան երեխայի նկատմամբ սեռական բռնությանը առնչվող անձնական պատմություն:

«Մի տարի առաջ, մի երեխա բերեցին մեր դպրոց: Երեխան ծանր դեպրեսիվ վիճակում էր՝ ներառական կրթության մեջ ընդգրկեցին: Կադինյանի կենտրոնից ուղղորդել էին մեզ մոտ: 9-րդ դասարան էին բերել, ու երեխան դպրոց չէր գալիս: Ես պարբերաբար այցելում էի իրանց տուն դեպրեսիվ վիճակից դուրս բերելու համար և այլն, բայց էնտեղ բացահայտեցի, որ երեխայի մոտ ոչ թե դեպրեսիա է, այլ ...սեռական բռնություն է տեղի ունեցել իրանց նախորդ դպրոցում...: Հարցը բարձրացրեցի տնօրինությանը... Երկու երեխա էին, ինքը տղա երեխա էր, ուներ նաև քույր: Ամուսնալուծված ծնողներ ունեին. մաման թեթևաբարո մի կին էր, լիքը պատմություն կար էդտեղ: Բարձրացրեցի մինչև տեսուչին, ոստիկանությանը: Իրենք ասեցին, որ երկու անգամ ևս սոցիալական այց պիտի կատարվի հոգեբանի և սոց. մանկավարժի կողմից, հետո նոր տեսուչը գա: Այդ ժամանակ մայրը ինձ զանգում ու ասում է, որ երեխան տանից դուրս է եկել ու չեմ կարող գտնել...: Երեխու համարով զանգում եմ, կես ժամ հետո ինձ զանգեր են գալիս անձանոթ տղաների կողմից, արդեն էն կարգի, որ ես անհանգստացած զանգում եմ ոստիկանություն: Ու երբ արդեն տեսուչի հետ զնում ենք իրենց տուն, երեխային հայտնաբերում ենք տանը: Մաման ասում է, որ գիշերը ժամը 12-ին ինչ-որ մեքենայով երեխան եկել, կանգնել էր: Քանի որ իմ մոտ արդեն ֆիքսված էր 4-5 համար ու դիմել էի ոստիկանություն, որպեսզի պարզեն համարների տերերին, պարզվեց, որ 2 համարը քննչական աշխատողներն են ու ... որ իրենք ինչ-որ համացանցի միջոցով գտել են դեռահասության տարիքի երեխաների, որոնց օգտագործում են սեռական նպատակով: Այսինքն՝ ինձ ահաբեկողները 2 հոգի դատախազության աշխատողներ էին...: Եվ էստեղ լիքը բաներ բացահայտվեց... օգտագործվում էր, ի դեպ, նույն տարբերակով նաև իր քույրը: Հետո պարզվեց, որ ... սեռական բռնության երեխան ենթարկվել է Կիլիկիայի մոտ գտնվող ինչ-որ գիշերօթիկ դպրոցում ուսուցչի կողմից, որտեղից երեխան փախել է ու փախնելուց հետո բերել էին մեր դպրոց: Հիմա ես չեմ կարող կանգնել բարձրաձայն ասել, երբ որ իմ ձեռքին չկա փաստ...»

Դեպք 2. Տիգրիկական և հոգեբանական բռնության կիրառում:

«Ուսուցիչը երեխայի մահացած հորն էր վիրավորել, էդ երեխան աթոռը վերցրել, խփել էր ուսուցչին: Նիկոլ Աղբալյանի դպրոցում: Ուսուցիչը պատիժ չստացավ...Հետո էդ երեխային տեղափոխեցին մեր դպրոց, ես դասավանդել եմ, շատ նորմալ երեխա էր:» ք. Երևան, հիմնական դպրոցի ավագ դասարանների իգական սեռի ուսուցիչ. «Մեր դպրոցում եղավ մի դեպք, տղամարդ ուսուցիչ ունեիքն, բացարձակ ինտելեկտի տեր

մարդ, հրաշալի մասնագետ, պատմության ուսուցիչ էր, եւ էդ ուսուցիչը մի քիչ շուտ էր բորբոքվում: Էդ մարդը սիրում էր, որ իր մոտ նստեն նորմալ եւ համբերությունը չէր հերիքում: Երեխաները իրենց պահել էին շատ անշնորհք: Դա իր մոտ արձանագրված է, քանի որ նկարել են... Նա համբերությունից դուրս եկած՝ բզեզ էր, ու դա ֆետիշացրին, you-tube գցեցին: Մարդը եկավ դիմում գրեց, ազատ արձակվեց աշխատանքից, հիմա մահացել է:» ք. Երևան, հիմնական դպրոցի ավագ դասարանների իգական սեռի ուսուցիչ «Դեռահասության տարիքում՝ 8-րդ դասարան... ուրեմն իմ դասղեկական դասարանում տարիներ առաջ, ունեի մի տղա-աշակերտ, որը հաճախ դպրոց էր գալիս կապտուկներով: Ու ամեն անգամ տարբեր ուսուցիչներ իր հետ զրույցի ընթացքում չէինք կարողանում պարզել, ինչն ա էտ երեխայի կապտուկների պատճառը: Բայց ունեինք համադասարանցի-հարևան, որն ասում էր, որ իրենց տնից հաճախակի ձայներ են գալիս: Մայրը ծեծում է երեխային, ստիպում է, որ դպրոց չգնա՝ գնա Մալաթիայի տոնավաճառ, գումար հավաքի: Հաճախ ես գնում էի նրանց դուռը թակում, չէին բացում: Մի անգամ ակնատես եղա՝ ինչու. որ դուռը բացեց՝ իմ առաջ մայրն էր, մի քանի իր նման կանայք, աղջիկներ ու մի քանի տղամարդիկ: Ներքնաշորերը հենենց դռան մուտքից արդեն թափված, ու երեխան տանը: Իմ համար արդեն ակնհայտ եղավ, որ մայրը իր գլուխն ազատելու համար երեխային ծեծում է սիստեմատիկաբար, ուղարկում Մալաթիայի տոնավաճառ գումար հավաքելու, դպրոց չգնա, որ շուտ տուն չգա: ... Ուրեմն երևի թե մի 5 տարի առաջ էր. տնօրենի հետ քննարկեցինք, հետո հասանք նրան, որ անչափահասների գործով տեսուչը հրավիրվեց դպրոց: Էտ երեխան կտրուկ չէր ասում, որ մայրը ծեծում է, ես իրեն արդեն ասում էի, գիտեմ որ մայրդ է ծեծում... Էս կապտուկները մորդ արածն են, որովհետև դպրոցի ուսուցիչներն էլ փաստեցին, որ էտ երեխային առանց լողանալու, առանց հագուստի ուղարկում էր դպրոց: Նույնիսկ ունեցել ենք դեպքեր, որ դպրոցում ենք լողացրել էտ երեխային: Մայրը ընդհանրապես չէր խնամում ու ֆիզիկական բռնության էր ենթարկում: Մի խոսքով ուստիկանը՝ տեսուչը էտ երեխային մեկուսացրեց ու տեղափոխեց գիշերօթիկ դպրոց, որ գոնե շաբաթվա ընթացքում մեկ-երկու օր առնչվի մոր հետ... անուշադիր լինեինք էտ երեխեն կկործանվեր անպայման:» Բ. Երևան, դպրոցի իգական սեռի դասվար ուսուցիչ :

Դեպք 3. ԶԼՄ-ներից պատմություններ

«...եւ, օրինակ հիշում եմ էն մազերը կտրելու դեպքը: Հա, վերջին 2 տարվա ընթացքում էր: Եթե չեմ սխալվում 89 դպրոցում, Մալաթիա-Սեբաստիայում էր եղել էդ դեպքը: Քիմիայի ուսուցչուհին հենց դասարանում 2 անգամ ասել էր կկտրես «չոլկա»-դ, աղջիկ-երեխա էր, չէր լսել: Ուսուցիչը ինքը բերել էր մկրատը, հենց դասարանում մազերը հիմքից կտրել էր: Դասարանում նկարել էին, գցել էին you-tube, էդ ուսուցչին խարանեցին... Ուսուցչին կարծեմ, եթե չեմ սխալվում, մի որոշ ժամանակով ազատեցին, հետո քանի որ շատ հարգված ուսուցիչ էր տարիների, նորից հետ կանչվեց:» ք.Երևան, դասվար ուսուցիչ, ստաժը 16 տարի:

«...Հայտնի է էս վերջին դեպքը երեխայի հետ կապված 71 դպրոցի՝ 114-ի անմիջապես դիմացի: Հոգեբանորեն խոշտանգում էին, դասդեկն էլ ասել էր՝ խելացի երեխա է, թող կոփվի...» ք. Երևան, դպրոցի սոց. մանկավարժ, ստաժը 2 տարի:

«114-ում էլ դեպք եղել էր Դրամատիկական թատրոնում էս վերջերս: Շատ լավ գիտեմ դասդեկին, որ եղտեղ նստած ա եղել: Հա, երեխաները շատ վատ են պահել, համարյա թե խափանել էին ներկայացումը, որից հետո դերասանները դուրս են եկել ու սկսել են ծնողներին հայհոյել: Ծեծել էին իրար, ինչպես ավարտվեց այդպես էլ չիմացանք:»

«Խանջյան փողոցի 3-րդ ավագ դպրոցը: Մահվան դեպք եղավ նույնիսկ մեր ընկերոջ երեխան էր, հա: Իրար մեջ երեխաները, անընդհատ: Այնտեղից ամեն շաբաթ կարելի ա լսել ծեծ, ջարդ: Մեկը դարձավ հաշմանդամ:» ք. Երևան, հիմնական դպրոցի դասվար ուսուցիչ, ստաժը 10 տարի:

Դեպք 4. Աշխատանքի պարտադրում, ք. Երևան դպրոցի իգական սեռի ուսուցիչ, ստաժը 7 տարի

«Մի քանի օր առաջ նորից դպրոցներին հայտարարություններ եկան վարչական շրջաններից Փարոսով գրանցված երեխաներին ճամբար տանելու համար: Ու սոցիալապես անապահով երեխաներին էս ինքս եմ տեսել, երբ գնացել էի հետազոտությունների հերթական անգամ, ինչպես են օգտագործում: Անգամ աղջիկ-երեխաներին վաճառում են: Այսինքն՝ էդ ամեն ինչը կա, ուղղակի էդ ամեն ինչը, քանի որ լիքը գումարներ են աշխատում, չի բարձրաձայնվում:»

ԵՐԵՒԱՅԻՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Լիլիթ Երեմյան

Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնությունը չափազանց լուրջ, բայց միևնույն ժամանակ համեմատաբար չճանաչված խնդիր է, որը պետք է արժանանա պետական կառավարման (ներառյալ՝ իրավապահ մարմինների) և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ընդհանուր առմամբ ամբողջ հասարակության մեծ ուշադրությանը: Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ:¹³ Երեխաների հանդեպ բռնության ֆիզիկական և հոգեբանական հետևանքները կարող են լինել կարճատև՝ անմիջական վնաս պատճառելով երեխայի առողջությանն ու բարեկեցությանը իր ձևավորման տարիների ընթացքում կամ երկարատև՝ հետապնդելով բռնության գոհին ամբողջ կյանքի ընթացքում: Երեխայի հանդեպ իրականացված բռնությունը կարող է հանգեցնել ճակատագրական հետևանքների:

Որպես կանոն երեխայի նկատմամբ բռնություն իրականացնելու վտանգը գալիս է նրա հետ առավել շատ անմիջական շփում ունեցող անձանցից: Հաճախ այդպիսիք են ընտանիքի անդամները, մանկավարժները, դաստիարակչական կամ բուժական հաստատությունների աշխատակիցները, գործատուները, երեխայի խնամքի կամ դաստիարակության համար պատասխանատու անձիք կամ երեխայի անմիջական շրջապատում գտնվող այլ անձիք (օրինակ, բարեկամները, ընկերները, հարևանները), ինչպես նաև, օրինակ, իրավապահ մարմինների կամ քրեակատարողական հիմնարկների ծառայողները:¹⁴

Երեխաների նկատմամբ իրականացվող բռնության առավել տարածված ձևերն են ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, հոգեբանական բռնությունը, երեխայի շահագործումը, երեխայի անտեսումը:¹⁵ Երեխայի հանդեպ բռնության հիմնախնդրով զբաղվողների շրջանում չափազանց կարևորվում է երեխայի հանդեպ բռնության հասկացության, ինչպես նաև դրա ձևերի սահմանման անհրաժեշտությունը: Երեխայի նկատմամբ բռնության դեմ պայքարի իրականացման հարցում ակտիվ դերակատարում ունեցող բոլոր ոլորտների ներկայացուցիչների համար միասնական սահմանումների առկայությունը կարող է հեշտացնել երեխայի նկատմամբ բռնության դեպքերի իդենտիֆիկացիան, բացահայտումը, պատշաճ վիճակագրության վարումը և հիմնական միտումների վերլուծությունը: Արդյունքում հնարավոր կլինի ավելի արդյունավետ դարձնել երեխաների բռնության դեմ պայքարի շրջանակներում տարաբնույթ, այդ թվում և կանխարգելիչ միջոցառումների ծրագրումն ու իրականացումը: Տարբեր աղբյուրներում ուսումնասիրված սահմանումներից թերևս ամենաընթարձակը

¹³ Տես, օրինակ, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1989) Հոդ.1; ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին (29.05.1996 թ.) Հոդ.1: Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածում սահմանված կարգավորման համաձայն որոշ իրավական իրավիճակներում նշված սահմանումից բացառություն են համարվում այն դեպքերը, երբ 18 տարին չլրացած անձը օրենքով սահմանված կարգով ձեռք է բերում գործունակություն կամ ճանաչվում է գործունակ ավելի վաղ տարիքում:

¹⁴ WHO/HSC/PVI, “Report of the Consultation of Child Abuse Prevention” (Geneva 1999) 13

¹⁵ *Ibid.*, pp. 15-16; Т.Я. Сарафанова, Е.И. Цымбал, “Жестокое обращение с детьми и его последствия”/Жестокое обращение с детьми: сущность, причины, социально-правовая защита (М. 1993)

համաշխարհային կազմակերպության սահմանումն է, ըստ որի երեխայի հանդեպ բռնություն կամ վատ վերաբերմունք են կազմում երեխայի հանդեպ ցանկացած ձևով արտահայտված բռնություն կամ երեխայի նկատմամբ անփույթ վերաբերմունք (երեխայի անտեսում), որի արդյունքում պատճառվել է կամ կարող է պատճառվել վնաս երեխայի առողջությանը, բնականոն զարգացմանը, արժանապատվությանը կամ կյանքին՝ վերջինիս և անհրավաչափ արարքն իրականացնող անձի միջև պատասխանատվության, վստահության կամ իշխանության հարաբերությունների համատեքստում:¹⁶

Երեխայի հանդեպ *ֆիզիկական բռնություն* է որակվում այնպիսի արարքը, որի արդյունքում երեխային պատճառվում է կամ կարող է պատճառվել ֆիզիկական վնաս:¹⁷

Երեխայի հանդեպ *հոգեբանական բռնություն* է համարվում այնպիսի արարքը, որը պատճառել է կամ մեծ հավանականություն կա, որ կպատճառեր վնաս երեխայի ֆիզիկական, հոգեբանական, մտավոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը:¹⁸

Երեխայի հանդեպ *սեռական բռնություն* է երեխայի նկատմամբ ապօրինի սեռական գործողություն կատարելը:¹⁹

Երեխայի հանցավոր *շահագործում* է հանդիսանում երեխայի թրաֆիքինգը կամ նրան շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը:

Երեխայի նկատմամբ անփույթ վերաբերմունք (երեխայի անտեսում) է համարվում երեխայի բնականոն զարգացման և կենսաապահովման համար անհրաժեշտ հիմնական պայմանների կամ պահանջների չապահովելը, որը պատճառում է կամ մեծ հավանականություն կա որ կպատճառի վնաս երեխայի առողջությանը, ֆիզիկական, հոգեբանական կամ մտավոր զարգացմանը:²⁰

Հարկ է նշել, որ երեխայի հանդեպ բռնության առանձին ձևերի դասակարգումը թեև կիրառական առումով շատ կարևոր է և անհրաժեշտ, տեսական առումով այն կրում է պայմանական բնույթ, քանի որ բռնության ձևերը հաճախ համակցվում են: Այսպես, օրինակ, երեխայի հանդեպ ֆիզիկական կամ սեռական բռնությունը, որպես կանոն, հանգեցնում են նաև հոգեբանական խնդիրների, կամ, օրինակ, կարելի է վիճաբանել, որ սեռական բռնությունը հոգեբանական կամ ֆիզիկական-հոգեբանական բռնության առանձին ենթատեսակ է:

Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարն առավել արդյունավետ կարող է լինել միայն միջինստիտուցիոնալ մոտեցման պարագայում, երբ ներգրավված են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ բժիշկներ, հոգեբաններ, իրավաբաններ, գիտակրթական և դաստիարակչական հիմնարկների աշխատակիցներ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք: Այս համատեքստում մշտապես կարևորվել է երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի մեջ ներգրավված անձանց կողմից տվյալ ոլորտի իրավական դաշտի իմացությունը:²¹

Բռնությունից երեխաների իրավական պաշտպանության առանձին օրենք ՀՀ-ում առկա չէ: Հայաստանի Հանրապետությունում երեխաների բռնությունից իրավական պաշտպանությանը

¹⁶ WHO/HSC/PVI Report, *supra* n. 2, p. 15

¹⁷ *Ibid.*

¹⁸ *Ibid.*

¹⁹ *Ibid.*

²⁰ *Ibid.*

²¹ Ronald Nufrio, “A School Administrator's Guide to Child Abuse and Neglect” (Vol.7, ASE 1977) 25, 26

վերաբերող իրավական կարգավորումները սահմանված են ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, ՀՀ օրենսգրքերի և այլ օրենքների, ինչպես նաև այլ իրավական ակտերի տարբեր նորմերում:

ՀՀ Սահմանադրություն

ՀՀ սահմանադրությունն ամրագրում է մարդու արժանապատվությունը հարգելու երաշխիքը (Հոդ.14), խտրականության արգելքը (Հոդ.14.1), կյանքի իրավունքը (Հոդ.15), անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (Հոդ.16), խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը (Հոդ.17) և մի շարք այլ իրավունքներ և ազատություններ, արգելքներ ու սահմանափակումներ, որոնք հանդիսանում են մարդուն, այդ թվում երեխաներին, բռնությունից պաշտպանելու սահմանադրական երաշխիքներ:

ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 4-րդ մասը երաշխավորում է երեխայի պաշտպանությունը տնտեսական շահագործումից: Նշված հոդվածում մասնավորապես սահմանված է. մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:²² Հարկ է նշել, որ երեխաների աշխատանքի իրավունքը կարգավորող դրույթները առավել մանրամասն սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Աշխատանքային գործունակությունը ՀՀ-ում անձի մոտ, որպես կանոն, ծագում է 16 տարեկան դառնալու պահից:²² 14-16 տարեկան անձիք կարող են ժամանակավոր աշխատանքային պայմանագրով աշխատել միայն ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնության դեպքում: Ընդ որում նրանք կարող են ընդգրկվել միայն այնպիսի ժամանակավոր աշխատանքներում, որոնք չեն վնասում իրենց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը կամ բարոյականությանը:²³

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածով նախատեսված ծնողների պարտականությունը հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար, երեխային անտեսումից պաշտպանելու սահմանադրական երաշխիք է:

Սահմանադրական դրույթներն առավել հանգամանալից լուծումներ են ստացել ՀՀ տարբեր օերնքներում: Երեխայի նկատմամբ բռնության տարբեր դրսևորումների համար պատասխանատվությունը սահմանվում է ՀՀ քրեական օրենսգրքով (այսուհետ՝ ՔՕ), Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով (այսուհետ՝ ՎԻՎՕ) և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ քաղ.օր.):

Օրենքներ և այլ իրավական ակտեր

Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՀՀ օրենսգրքերում տեղ գտած կարգավորումները կարելի է պայմանականորեն բաժանել նյութաիրավական նորմերի և դատավարական բնույթի նորմերի:

²² ՀՀ ՍՕ, հոդ. 15 մաս 2

²³ ՀՀ ՍՕ, հոդ. 17 (2)-(4)

Նյութաիրավական դրույթներ

Երեխային իր հանդեպ ֆիզիկական, հոգեկան, սեռական բռնությունից, երեխային շահագործելուց, ինչպես նաև ծնողի կողմից երեխայի անտեսումից պաշտպանելուն ուղղված բազմաթիվ կարևորագույն դրույթներ տեղ են գտել ՔՕ-ում:²⁴ Հենց ՔՕ-ով է նախատեսված երեխայի նկատմամբ բռնության լուրջ դրսևորումների համար առավել խիստ պատժատեսակներ:

Անչափահասների իրավունքների պաշտպանությանն ուղղված ՔՕ իրավանորմերը կարելի է պայմանականորեն բաժանել երեք կատեգորիայի՝

- հողվածներ, որոնցում նկարագրված արարքները (հանցագործությունները) կարող են կատարվել ինչպես երեխայի, այնպես էլ չափահասի նկատմամբ,
- հողվածի առանձին մասով կամ մասի կետով սահմանված որակյալ հանցակազմեր, որոնցով քրեորեն հետապնդելի արարքը ծանրացնող հանգամանք է համարվում այն անչափահասի նկատմամբ կատարելը,
- հատուկ քրեաիրավական նորմեր, որոնք սահմանում են քրեական պատասխանատվություն բացառապես անչափահասների նկատմամբ կատարված հանցավոր արարքների համար:

Երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնության ձևերից առավել տարածում ունեցող հանցագործություն է ծեծը կամ ծեծին հավասարագոր այլ բռնի գործողություններ կատարելը, որը նախատեսված է ՔՕ-ի 118-րդ հոդվածով: Նշված քրեորեն հետապնդելի արարքները հաճախ կատարվում են ընտանիքում, ուսումնական կամ դաստիարակչական հաստատությունում՝ երեխայի և անիրավաչափ արարքն իրականացնող անձի միջև պատասխանատվության, վստահության կամ իշխանության հարաբերությունների համատեքստում: ՔՕ-ի իմաստով ծեծը անձին բազմաթիվ (երեք և ավելի) հարվածներ հասցնելն է, եթե դրա արդյունքում առողջությանը վնաս չի պատճառվել:²⁵ Ծեծին հավասարագոր այլ բռնի գործողություններ կարող են համարվել, օրինակ, մարմնի մասերի ուժեղ սեղմելը, ձեռքերը ոլորելը, մազերը քաշելը կամ պոկելը, որևէ առարկայով հարվածելը կամ նմանատիպ այլ բռնի գործողություն կատարելը, եթե դա գուցե չի ֆիզիկական ցավ պատճառելով, սակայն առողջությանը վնաս չի պատճառվել: ՔՕ-ով ծեծը կամ այլ բռնի գործողություններ կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում մեկ կամ երկու հարվածը չի կարող որակվել որպես ծեծ կամ այլ բռնի գործողություն, սակայն կախված փաստական հանգամանքներից կարող է գնահատվել որպես խուլիգանություն (ՔՕ Հոդ. 258) կամ վիրավորանք (քաղ.օր. հհ. 19 և 1087.1): Այսպես, եթե երեխային հասցվում է մեկ կամ երկու հարված, որը տազնապ է առաջացնում ներկաների իրավունքների ու շահերի պաշտպանվածության կապակցությամբ, սպառնալիք է ստեղծում հիմնարկի կամ կազմակերպության նորմալ գործունեությանը,²⁶ ապա այդ արարքը կարող է որակվել որպես խուլիգանություն: Այլ փաստական հանգամանքների պարագայում

²⁴ Պետք է նշել, որ ՔՕ Գլուխ 20-ը ամբողջությամբ վերաբերում է երեխայի և ընտանիքի շահերի դեմ ուղղված հանցագործություններին:

²⁵ Խմբ. Գ.Ս. Ղազինյան, ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս (ԵՊՀ հրատ. 2009) էջ 163

²⁶ *Ibid.*, էջ 635

արարքը (օրինակ, ապտակը կամ թեթև հարվածը) հնարավոր է, որ գնահատվի որպես վիրավորանք, որի համար նախատեսված է պատասխանատվություն քաղ.օր.-ի 1087.1 հոդվածի 7-րդ մասով, որի համաձայն անձը կարող է դատական կարգով պահանջել հրապարակայնորեն ներողություն խնդրել կամ վճարել նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով (մինչև 1 մլն. դրամ) փոխհատուցում: Ամեն դեպքում, եթե արարքն իր մեջ չի պարունակում հանցագործության նշաններ, սակայն կատարվել է որևէ կազմակերպության կամ հիմնարկի աշխատակցի կողմից իր մասնագիտական պարտականություններն իրականացնելու շրջանակներում, ապա այդ աշխատակիցը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատումը:

Ծեծի կամ այլ բռնի գործողության արդյունքում անձի առողջությանը վնաս պատճառվելու դեպքում արարքը որակվում է ըստ առողջությանը պատճառված վնասի աստիճանի կամ մեղքի ձևի (դիտավորություն կամ անզգուշություն): Օրինակ, բռնի գործողությունների արդյունքում տուժողի մարմնին կապտուկներ կամ քերծվածքներ կամ նմանատիպ այլ վնաս դիտավորությամբ հասցնելը կդիտարկվի որպես առողջությանը թեթև վնասի պատճառում, որի համար նախատեսված է պատիժ ՔՕ 117-րդ հոդվածով: Եթե, օրինակ, որոշակի իրավիճակում երեխայի առողջությանը անզգուշությամբ միջին ծանրության կամ ծանր վնաս է պատճառվում, ապա մեղավոր անձը ենթակա է քրեական պատասխանատվության համապատասխանաբար ՔՕ 121-րդ կամ 120-րդ հոդվածով: Անձի առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնասը դիտավորությամբ պատճառելու համար ՔՕ 113-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված է զգալիորեն ավելի խիստ պատասխանատվություն:

Առողջությանը միջին ծանրության վնասի օրինակներ կարող են դիտարկվել ոսկորների մանր փակ կոտրվածքները, մատի կորուստը, հոդախախտը, կակազելը և այլն, այսինքն՝ այնպիսի արարք, որի կատարման արդյունքում առողջությանը լուրջ, սակայն կյանքի համար ոչ վտանգավոր, վնաս է հասցվում:²⁷ Առողջությանը պատճառված ծանր վնաս է գնահատվում կյանքի համար վտանգավոր վնասը կամ տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստը կամ դեմքի անջնջելի այլանդակումը, կամ արարքի հետևանքով տուժողի մոտ հոգեկան հիվանդության առաջացումը կամ ՔՕ 112-րդ հոդվածով նախատեսված այլ ծանր հետևանքները:

Կարծում ենք, որ քրեական քաղաքականության տեսանկյունից քննարկման է արժանի վերոնշյալ հոդվածների շրջանակում հանցագործության սուբյեկտով և տուժողի տարիքային առանձնահատկություններով պայմանավորված անչափահաս տուժողի պաշտպանության լրացուցիչ մեխանիզմների սահմանումը:

Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքում հարկ ենք համարում առանձնացնել ՀՀ ՔՕ 119-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը՝ խոշտանգումը: Խոշտանգումը ցանկացած այնպիսի գործողությունն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք: Որպես կանոն, արարքը խոշտանգում որակելու համար ուժեղ ցավի կամ տառապանքի պատճառումը պետք է լինի բազմակի կամ կրի երկարատև բնույթ: Երեխայի խոշտանգման օրինակներ կարող են հանդիսանալ ուտելիքից, ջրից կամ քնից երկարատև զրկումը, մտրակելը, բազմաթիվ մանր վնասվածքներ պատճառելը, երեխայի ներկայությամբ հարազատի (օր.՝ մայր, հայր, քույր, եղբայր) նկատմամբ առանձին դաժանությամբ բռնություն

²⁷ *Ibid.*, էջ 155

գործադրելը և այլն: Անչափահասի նկատմամբ իրականացված խոշտանգման համար ՔՕ-ով նախատեսվում է պատիժ 3-7 տարի ազատազրկման տեսքով, ինչը հավասարազոր է առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու համար նախատեսված պատժին: Անչափահասի խոշտանգումը կարելի է բնութագրել որպես երեխայի նկատմամբ ֆիզիկական և/կամ հոգեբանական բռնություն:

Առանձին ուշադրության են արժանի երեխային սեռական բռնությունից պաշտպանելուն ուղղված ՔՕ իրավանորմերը: ՔՕ 18-րդ գլխով նախատեսված են սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները: Այսպես, ՔՕ 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անչափահասի նկատմամբ կատարված բռնաբարությունը, ինչպես նաև 139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անչափահասի նկատմամբ կատարված սեքսուալ բնույթի բռնի գործողությունները պատժվում են ազատազրկմամբ 4-10 տարի ժամկետով: Նույն հոդվածների 3-րդ մասերով որպես արարքի առանձնապես վտանգավոր տեսակ է սահմանված այն անչափահասի նկատմամբ հատուկ սուբյեկտի (ծնողի, մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն) կողմից կատարելը կամ այն 14 տարին չլրացած անձի նկատմամբ կատարելը, որը պատժվում է ազատազրկմամբ՝ 8-15 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՔՕ պատասխանատվություն է սահմանում նաև շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելուն հարկադրելու համար: Նշված արարքը ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կատարելը պատժվում է 5-12 տարի ժամկետով ազատազրկմամբ:

ՔՕ 141-րդ և 142-րդ հոդվածներով նախատեսված է քրեական պատասխանատվություն անչափահասի նկատմամբ իրականացվող տարբեր սեռական ոտնձգությունների համար: Դրանք են՝

- սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ,
- 18 տարին չլրացած անձի կողմից ակնհայտ 16 տարին չլրացած անձի նկատմամբ կամ 16 տարին չլրացած անձի կողմից 14 տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբար գործողություններ կատարելը (օրինակ, երեխայի ներկայությամբ սեռական օրգանները ցուցադրելը, երեխայի սեռական օրգանները մերկացնելը կամ դրանց անպարկեշտ ձևով ձեռք տալը, երեխայի ներկայությամբ մեկ այլ անձի հետ սեռական հարաբերություն ունենալը, պոռնկագրական նյութեր երեխային ցուցադրելը և այլն):

Երկու հոդվածների 3-րդ մասերով որպես արարքի առավել վտանգավոր տեսակ սահմանված է այն կատարելը 18 տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն: Նշված հոդվածների 3-րդ մասերի 2-րդ կետերի համաձայն որպես առանձին ծանր հանցակազմ է նախատեսված նաև հանցավոր արարքը համապատասխանաբար 14 և 12 տարին չլրացած անձանց նկատմամբ կատարելը:

Վերոնշյալ հանցագործությունները հանդիսանում են սեռական բռնության դրսևորումներ,

սակայն դրանց արդյունքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասցված բացասական հոգեբանական հետևանքները գրեթե անխուսափելի են:

ՔՕ ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների շարքում ներառված հողված 166-ով նախատեսված է պատասխանատվություն երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար: Ինչպես և վերը նշված սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված որոշ հողվածներում, այստեղ էլ հանցավոր արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխային դաստիարակելու կամ խնամելու պարտականություն առաջացնում է ավելի խիստ պատասխանատվություն: Երեխայի հանդեպ այս հանցագործությունը կարելի է համարել որպես երեխայի հանդեպ հոգեբանական և սեռական և/կամ ֆիզիկական բռնություն: Նշված կարգավորման հետ սերտորեն փոխկապակցված է և լրացուցիչ երաշխիքներից մեկն է հանդիսանում ՀՀ ՔՕ 263-րդ հողվածով նախատեսված պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելու արգելքը:²⁸

Կարծում ենք, որ հատկապես ՀՀ ՔՕ 166-րդ և 263-րդ հողվածներով առաջարկված կարգավորումները ունեն կատարելագործման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով մասնավորապես Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրության և կիրեռահանցագործությունների մասին կոնվենցիայով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները:

ՔՕ 132-րդ հողվածով որպես առանձին հանցակազմեր նախատեսված են երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը: Անչափահասի թրաֆիքինգը շահագործման նպատակով երեխային հավաքագրելն է, տեղափոխելը, թաքցնելը կամ ստանալը: Երեխայի շահագործումը ենթադրում է երեխային շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ պահելը: Արարքների սահմանումից բխում է, որ թրաֆիքինգը հետապնդում է շահագործման նպատակ, իսկ շահագործումը իրական վիճակ է, երբ երեխան իր կամքին հակառակ կամ անտեսմամբ շահագործվում է կամ չի կարող այդ վիճակից հրաժարվել: Ընդ որում, <<թրաֆիքինգի կամ շահագործման իմաստով զոհի շահագործման ենթարկվելու համաձայնությունն առջինն է, եթե նրա նկատմամբ ցանկացած փուլում կիրառվել է թրաֆիքինգի կամ շահագործման միջոց>>:²⁹ Նշված արարքները պարունակում են միաժամանակ ֆիզիկական և հոգեբանական և/կամ սեռական բռնության տարրեր:

Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելը (Հոդ.123 մաս 3 կետ 2), վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելը (Հոդ.124 մաս 2 կետ 2), անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձի ենթարկելը (Հոդ.127 մաս

²⁸ Տես, մասնավորապես՝ սույն հողվածի 2-րդ մասը, որով սահմանված է համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիայի ներկայացնելու կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիայի պահպանելու արգելքը:

²⁹ Երեմյան Ա. et al, ՀՀ-ում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները (Եր.

2 կետ 3), մարդուն առևանգելը (Հոդ. 131 մաս 2 կետ 4), շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը (Հոդ.132.3 մաս 2 կետ 1), մարդուն ազատությունից ապօրինի զրկելը (Հոդ. 133 մաս 2 կետ 4), պատանդ վերցնելը կամ պատանդ պահելը (Հոդ. 218 մաս 2 կետ 4), պտոնկությամբ զբաղվելուն նպաստելը (Հոդ. 262 մաս 2 կետ 6), թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը (Հոդ. 272 մաս 2 կետ 1), վարձկանությունը (Հոդ. 395 մաս 2 կետ 2) ՔՕ-ով սահմանված հողվածներ են, որոնց առանձին մասով կամ մասի կետով սահմանված է համապատասխան արարքը անչափահասի նկատմամբ կատարելը որպես որակյալ հանցակազմ: Այլ կերպ՝ վերը թվարկված հանցագործությունների դեպքում արարքի առավել վտանգավոր տեսակ է համարվում այն անչափահասի նկատմամբ կատարելը՝ սահմանելով ավելի խիստ պատիժ:

Բացառապես անչափահասի նկատմամբ կատարված հանցավոր արարքի համար քրեական պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերի թվին են պատկանում՝

- երեխայի հանդեպ մահվան ելքով ֆիզիկական բռնության դրսևորում հանդիսացող մոր կողմից նորածին երեխայի սպանությունը (Հոդ. 106):
- միաժամանակ հոգեբանական և ֆիզիկական բռնություն հանդիսացող անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը (Հոդ. 165), երեխային պարբերաբար ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (Հոդ. 166.1), ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը (Հոդ. 167), խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը (Հոդ. 168), ինչպես նաև
- երեխայի հանցավոր անտեսում գնահատվող երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (Հոդ. 170), երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (Հոդ. 171), ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը (Հոդ. 173): Ընդ որում նշված երեք հանցագործությունների դիսպոզիցիայով սահմանված է հատուկ սուբյեկտ, այլ կերպ՝ քրեորեն հետապնդելի լինելու համար տվյալ հողվածներով նախատեսված արարքները պետք է կատարվեն ծնողի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը: Հարկ է նշել, որ երեխայի անտեսման վերոգրյալ դեպքերը կարող են զուգորդվել երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական բռնությամբ կամ առաջացնել նրա համար ֆիզիկական կամ հոգեբանական բացասական հետևանքներ:

Ինչ վերաբերում է ՎԻՎՕ-ին, ապա դրանով նախատեսված բացառապես անչափահասների նկատմամբ իրականացվող հիմնական վարչական զանցանքներն են անչափահասին հարբած վիճակի հասցնելը (ՎԻՎՕ Հոդ. 177) և երեխայի անտեսման ձև հանդիսացող՝ ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից անչափահասի դաստիարակության և ուսուցման պարտականությունները չարամտորեն չկատարելը, անչափահասի կողմից առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ օգտագործել և այլ իրավախախտումներ կատարել թույլատրելը (ՎԻՎՕ Հոդ. 178): Երկու դեպքում էլ ՎԻՎՕ սահմանում է որոշակի չափի տուգանք:

Հարկ է նշել, որ երեխայի նկատմամբ ցանկացած ձևի բռնության արգելքը ուղղակիորեն սահմանված է նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի (այսուհետ՝ ԸՕ) 53-րդ հոդվածով: Այսպես ԸՕ՝

հաստատելով երեխաների իրավունքների պաշտպանության առաջնային նշանակությունը ՀՀ համար ³⁰ և կրկին արձանագրելով երեխայի հիմնական իրավունքներն ու ազատությունները, 53-րդ հոդվածով սահմանում է երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությանն ու բարոյական զարգացմանը վնաս պատճառելու արգելքը, ինչպես նաև երեխային դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, երեխային վիրավորելու կամ շահագործելու միջոցով դաստիարակելու արգելքը:

ԸՕ 43-րդ հոդվածի համաձայն երեխայի հանդեպ բռնության, ինչպես նաև երեխայի անտեսման դեպքերում երեխան իրավունք ունի ինքնուրույն դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ստանալու համար: Եթե երեխայի կյանքին կամ առողջությանը սպառնալու դեպքի կամ նրա իրավունքների և շահերի խախտման մասին հայտնի է դարձել որևէ պաշտոնատար անձին կամ այլ քաղաքացու, ապա վերջինս պետք է այդ դեպքի մասին տեղեկացնի երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին, իսկ խնամակալության և հոգաբարձության մարմինը նման տեղեկություն ստանալուց անմիջապես հետո պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանության համար: Այս առումով պետք է ասել, որ որոշ երկրներում հանգամանակից սահմանված է կոնկրետ անձանց շրջանակի համար երեխայի հանդեպ բռնության մասին համապատասխան լիազոր մարմինն տեղեկացնելու պարտականությունը:³¹

Երեխայի կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգի պարագայում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավունք ունի վերցնելու երեխային ծնողից կամ այն անձից, ում խնամքին հանձնված է երեխան: Նման դեպքերում խնամակալության և հոգաբարձության մարմինը հայց է ներկայացնում դատարան ծնողին ծնողական իրավունքից զրկելու կամ նրա ծնողական իրավունքը սահմանափակելու վերաբերյալ:³² ՀՀ ԸՕ մանրամասն սահմանում է երեխայի շահերի պաշտպանության նպատակով ծնողին ծնողական իրավունքից զրկելու կամ նրա ծնողական իրավունքների սահմանափակելու, ինչպես նաև ծնողական իրավունքների վերականգնելու սպառնիչ հիմքերը, պայմանները և կարգը:³³ Որևէ պատճառով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինի վրա:³⁴ ՀՀ ԸՕ կարգավորվում է երեխային տեղավորելու նախապատվելի ձև համարվող երեխայի որդեգրման գործընթացը, սահմանելով այդ

³⁰ ՀՀ ԸՕ, Հոդ. 1

³¹ Ավելի մանրամասն տեղեկությունների համար տես, մասնավորապես՝ Children’s Bureau/ACYF/ACF/HHS, *Mandatory Reporters of Child Abuse and Neglect* (Nov. 2013); Children and Young Persons (Care and Protection) Act 1998 No. 157, Chapter 3 part 2; HM Government, *A Guide to inter-agency working to safeguard and promote the welfare of children. “Working Together to Safeguard Children”* (2013) paras. 9 and 10. Նմանատիպ կարգավորումներով կարող է սահմանվել այն անձանց շրջանակը, ովքեր պարտավոր են տեղեկանք ներկայացնել երեխայի նկատմամբ բռնության իրենց հայտնի դարձած դեպքի վերաբերյալ (որպես կանոն, այդպիսիք են բժշկական կամ ուսումնադաստիարակչական հիմնարկների աշխատակիցները, երիտասարդների հարցերով զբաղվող սոցիալական աշխատողները և այլք), բռնության այն դրսևորումները, որոնց վերաբերյալ համապատասխան լիազոր մարմինն տեղեկացնելը պարտադիր է, տեղեկությունները հայտնելու ժամկետները, ձևը և կարգը (ներառյալ՝ հայտնողի անունի կոնֆիդենցիալության երաշխիքը), երեխայի բռնության վերաբերյալ տեղեկանքին ներկայացվող պահանջները և/կամ նման դեպքի վերաբերյալ հայտնելու պարտականություն ունեցող անձի կողմից իր պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար սահմանված պատասխանատվությունը:

³² ՀՀ ԸՕ, Հոդ. 58

³³ ՀՀ ԸՕ, Հոդ. 59-63

³⁴ ՀՀ ԸՕ, Հոդ. 109: Այս հոդվածի համաձայն խնամակալության և հոգաբարձության մարմինները իրականացնում են գործունեություն առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բացահայտման, հաշվառման և տեղավորելու ուղղությամբ:

թվում որդեգրման ենթակա երեխաներին և առկա սահմանափակումները, որդեգրելու իրավունք ունեցող անձանց, որդեգրման կարգը և պայմանները:³⁵ Օրենսգիրքի որոշ դրույթներ վերաբերում են նաև երեխային խնամակալության կամ հոգաբարձության սահմանման պայմաններին, կարգին և սահմանափակումներին, հոգաբարձուին և խնամակալին ներկայացվող պահանջներին, ինչպես նաև դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում պետության լրիվ խնամքի տակ գտնվող երեխաների իրավունքներին, դաստիարակության համար երեխային ընտանիք հանձնելու պայմաններին, խնամատար ծնողներին ներկայացվող պահանջներին, խնամատար ընտանիքում դաստիարակության հանձնված երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, և այլն:³⁶

ԸՕ-ով նախատեսված դրույթներն իրենց բնույթով և կարգավորման առարկայով նպատակ ունեն սահմանելու օրենսդրական երաշխիքներ նվազագույնին հասցնելու համար երեխայի հանդեպ բռության իրականացումը:

Երեխայի իրավունքների և հատուկ իրավական պաշտպանության վերաբերյալ դրույթներ սահմանվում են նաև Երեխայի իրավունքների մասին 1996 թ. ՀՀ օրենքով, Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին 2002թ. ՀՀ օրենքով, Կրթության մասին 1999 թ. ՀՀ օրենքով, Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2012թ. որոշմամբ (27.12.2012 թ. N 1694-Ն) և այլ օրենքներով ու իրավական ակտերով: Նշված բոլոր իրավական ակտերում արժարժվում են համապատասխան բնագավառում կամ իրավիճակում երեխայի իրավունքներն ու դրանց պաշտպանության մեխանիզմները:

Հատկապես կարևորվում է երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի, որպես հենց երեխաների իրավունքները սահմանող հատուկ նորմատիվ իրավական ակտի, համառոտ ուսումնասիրությունը: Նշված օրենքով ոչ միայն ևս մեկ անգամ սահմանվում են երեխայի իրավունքները, այլև՝ պետության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և անձանց պարտականությունները, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները: Օրենքով, մասնավորապես, կրկին հաստատվում է պետության և հասարակության երեխայի հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո գտնվելու հանգամանքը, պետության կողմից երեխայի ապրելու և զարգանալու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պարտականությունը, համապատասխան պետական մարմինների կողմից երեխայի անվճար կամ արտոնյալ պայմաններով առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքի ապահովման պարտականությունը, ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ պայմանների երեխայի իրավունքը և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, ինչպես նաև լիազորված պետական մարմինների կողմից դրանք ապահովելու պարտականությունը:³⁷ Բնությունից երեխայի պաշտպանության իրավունքը

³⁵ Տես, մասնավորապես՝ ՀՀ ԸՕ, Հոդվածներ 112, 115-122

³⁶ Տես, մասնավորապես՝ ՀՀ ԸՕ, Հոդվածներ 134-140

³⁷ Տես համապատասխանաբար՝ հոդվածներ 1, 5, 7, 8, 13:

առանձին սահմանվում է Օրենքի 9-րդ հոդվածով, որի համաձայն յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, հոգեբանական և այլ տեսակի բնությունից պաշտպանության իրավունք: Երեխային բնության ենթարկելը արգելվում է, իսկ երեխայի իրավունքներն ու ազատությունները խախտողը պետք է կրի պատասխանատվություն: Երեխայի պաշտպանությունը շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց կամ ցանկացած այլ բնությունից իրականացնում են համապատասխան պետական մարմինները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:³⁸ Օրենքով սահմանվում են աշխատանքի իրավունքն ու սահմանափակումները՝ նախատեսելով երեխային շահագործումից պաշտպանելուն ուղղված, ինչպես նաև երեխայի բնականոն բարոյական, ֆիզիկական և հոգևոր զարգացմանը պոտենցիալ վնաս հասցնող գործունեության մեջ երախայի ներգրավելու արգելմանն ուղղված երաշխիքներ, ինչպես նաև երեխայի անվտանգության իրավունքը:³⁹

Եվս մեկ անգամ հաստատելով բոլորի կողմից (ներառյալ ծնողներին և երեխայի դաստիարակության կամ խնամքի համար պատասխանատու այլ անձանց) երեխայի պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը, և հաշվի առնելով ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի հանդեպ բնության գործադրման ռիսկը, Օրենքի 22-րդ հոդվածով, մասնավորապես, նախատեսված է ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերությունները փոխադարձ հարգանքի հիման վրա իրականացվելու պարտականությունը:

Օրենքով հատուկ կարգավորման է արժանանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ֆիզիկական կամ մտավոր արատ ունեցող և հաշմանդամ երեխաների, արտակարգ իրավիճակներում հայտնված կամ փախստական երեխաների, ազատությունից զրկելու վայրում կամ հատուկ դաստիարակչական կամ հոգեբուժական հաստատություններում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ հաշվի առնելով այս առավել խոցելի խմբերի երեխաների հանդեպ բնության համեմատաբար բարձր հավանականությունը:⁴⁰

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են երեխայի իրավունքների պաշտպանության ապահովմանն ուղղված միջոցառումները երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերով սահմանված ժամկետներում և կարգով:⁴¹

2012թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությունն իր որոշմամբ հաստատել է երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման կոնկրետ միջոցառումների ժամանակացույցը:⁴²

Հարկ է նշել, որ ինչպես երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքով, այնպես էլ այլ օրենքներով և իրավական ակտերով նախատեսված երեխային բնությունից պաշտպանությանը վերաբերող կարգավորումների իրականացման առավել արդյունավետ մեխանիզմները

³⁸ Օրենքի դրույթների խախտման համար պատասխանատվությունը առավելապես սահմանված է ՔՕ-ով և ՎԻՎՕ-ով:

³⁹ Երեխայի իրավունքների մասին ՀՀ Օրենք, հ.հ. 19 և 23

⁴⁰ Երեխայի իրավունքների մասին ՀՀ Օրենք, Գլուխ III հոդվածներ 24-32

⁴¹ Երեխայի իրավունքների մասին ՀՀ Օրենք, Հոդ. 33

⁴² ՀՀ կառավարության N 1694-Ն որոշում (27.12.2012թ.): Նշված ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի համար տես համապատասխանաբար՝ սույն որոշման Հավելված N 1 և Հավելված N 2:

հիմնականում ներառված են ՔՕ, ՎԻՎՕ և քաղ.օր.-ի շրջանակներում՝ երեխայի իրավունքները ոտնահարող արարքների համար սահմանելով պատասխանատվություն, ինչպես նաև ՔԴՕ, ՎԴՕ և ՀՀ քաղ.դատ.օր.-ի շրջանակներում, որոնք, մասնավորապես, սահմանում են երեխայի իրավունքների պաշտպանության դատավարական երաշխիքներ:

Դատավարական երաշխիքներ

ՀՀ 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ ՔԴՕ), ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԴՕ) և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ քաղ.դատ.օր.) պարունակում են երեխայի դատավարական իրավունքների պաշտպանությունն ապահովող կարգավորումներ և մեխանիզմներ:⁴³

Երեխայի դատավարական իրավունքների պաշտպանությանն ուղղված կարգավորումները կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝

- 18 տարին չլրացած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնարավորությունն ու մատչելիությունը երաշխավորելուն ուղղված կարգավորումներ,
- դատավարական գործընթացում 18 տարին չլրացած անձանց բռնությունից պաշտպանելուն ուղղված դատավարական երաշխիքներ:

Հարկ է նշել, որ երեխայի տարիքով պայմանավորված սահմանափակ գործունակությունը բնավ չի խոչընդոտում նրա իրավունքների և շահերի լիարժեք պաշտպանությանը: Եվ ՔԴՕ, և ՎԴՕ և քաղ.դատ.օր.-ով ապահովվում է երեխայի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու հնարավորությունը, որն իրականացվում է նրա օրինական ներկայացուցիչների (ծնողների, որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) միջոցով:⁴⁴

Անչափահասի դատավարական իրավունքների պաշտպանության ծավալը զգալիորեն մեծ է, մասնավորապես, քրեական դատավարության շրջանակում: Դա պայմանավորված է քրեական գործերով վարույթների ընթացքում, և հատկապես անչափահասին ազատությունից զրկելու դեպքերում, անչափահասի բռնության ենթարկվելու բարձր ռիսկով: Այսպես, անչափահասին բռնությունից պաշտպանելուն ուղղված ՔԴՕ հիմնական երաշխիքներն են.

- անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու գործերով վարույթին պաշտպանի և անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցչի մասնակցության պարտադրությունը,⁴⁵
- անչափահաս դատապարտյալի նկատմամբ դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը դատարանի կողմից քննելիս պաշտպանի մասնակցության պարտադրությունը,⁴⁶
- անչափահաս վկայի (14 տարին չլրացած վկայի, իսկ վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև 14-18 տարեկան վկայի) օրինական ներկայացուցչի իրավունքը մասնակցելու անչափահասի մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին,⁴⁷

⁴³ Տես, օրինակ՝ ՔԴՕ. Հոդ. 69 մաս 1 կետ 5, Հոդ. 76 մաս 1, Հոդ. 87 մաս 1, Հոդ. 153 մաս 4, Հոդ. 205 մաս 4, Հոդ. Հոդ. 205¹, 207, 341, 429, 441-443; ՎԴՕ. Հոդ. 4 մասեր 4-7; ՀՀ քաղ.դատ.օր. Հոդ.173² մաս 1 կետեր 4 և 11:

⁴⁴ Տես՝ ՔԴՕ. Հոդ. 59 մաս 4, Հոդ. 63 մաս 7, Հոդ. 65 մաս 6, Հոդ.76: ՎԴՕ Հոդ.4; քաղ.դատ.օր. Հոդ. 43:

⁴⁵ ՔԴՕ, Հոդ. 69 մաս 1 կետ 5; Հոդ. 441

⁴⁶ ՔԴՕ, Հոդ. 429 մաս 4

⁴⁷ ՔԴՕ, Հոդ. 87 մաս 1

- Բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի, 14 տարին չլրացած անչափահասին որոշակի դատավարական գործողություններ կատարելու համար քրեական վարույթն իրականացնող մարմին բերման ենթարկելու անթույլատրելիությունը,⁴⁸
- անչափահաս տուժողի և վկայի, ինչպես նաև կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության կարգին և պայմաններին վերաբերող սահմանված լրացուցիչ երաշխիքները: Այսպես, օրինակ, արգելանքի տակ չգտնվող անչափահասները, որպես կանոն, կանչվում են իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով: ⁴⁹ Օրենքով սահմանված է անչափահասների հարցաքննության ավելի կարճ թույլատրելի տևողություն:⁵⁰ Բացի այդ, 16 տարին չլրացած վկայի և տուժողի հարցաքննությանը պարտադիր է մանկավարժի մասնակցությունը, 18 տարին չլրացած վկայի և տուժողի հարցաքննությանը կարող են մասնակցել վկայի կամ տուժողի օրինական ներկայացուցիչները: 16 տարին չլրացած վկան և տուժողը չեն ենթարկվում պատասխանատվության ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար,⁵¹
- ոչ մեծ ծանրության հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անթույլատրելիությունը:⁵²

Ինչ վերաբերում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ քաղ. դատ. օր-
ով նախատեսված կարգավորումների, ապա դրանք առավելապես ուղղված են ստեղծելու
երաշխիքներ որդեգրման գործընթացի շրջանակներում, սահմանելով, օրինակ, հատուկ
պահանջներ որդեգրողների նկատմամբ, 10 տարին լրացած երեխայի որդեգրման վերաբերյալ
համաձայնության ստացման անհրաժեշտությունը, ՀՀ կառավարության լիազորված մարմնի
որդեգրման գործընթացի վերաբերյալ վերահսկողության իրականացման անհրաժեշտության
սահմանումը:⁵³

Անչափահասի պատիժը կրելու կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատիժը կրելու վայրերում մեծ է նաև բռնության
կատարման հավանականությունը, ինչպես նաև անչափահասի տարիքով պայմանավորված
ֆիզիկական, հոգևոր, հոգեբանական, սոցիալական առանձնահատկությունները, ՀՀ
քրեակատարողական օրենսգրքում նույնպես (այսուհետ՝ ՀՀ քր.կատ.օր) առկա են հատուկ
կարգավորումներ անչափահասի պատիժը կրելու պայմանների վերաբերյալ: Այսպես, օրինակ,
ազատազրկման դատապարտված անչափահասի պատիժը կրելու նպատակով նրան փակ

⁴⁸ ՔՂՕ, Հոդ. 153 մաս 4

⁴⁹ ՔՂՕ, Հոդ. 205 մաս 4

⁵⁰ ՔՂՕ, Հոդ. 205¹, որի համաձայն անչափահասի հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ երկու ժամից
ավելի, իսկ օրվա մեջ անչափահասի հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել վեց
ժամը:

⁵¹ ՔՂՕ, Հոդ. 207

⁵² ՔՂՕ, Հոդ. 442

⁵³ ՀՀ քաղ. դատ. օր., Գլուխ 29¹, մասնավորապես, Հոդ. 173²

ուղղիչ հիմնարկ ուղարկելը արգելվում է,⁵⁴ արգելվում է անզգուշությամբ կատարած հանցագործության համար ազատազրկման դատապարտված անչափահասի նկատմամբ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը դեպի մեկուսացվածության առավել բարձր աստիճանի փոխելը,⁵⁵ ընդհանուր կանոնի համաձայն ուղղիչ հիմնարկում անչափահասները անջատ են պահվում չափահասներից:⁵⁶ Անչափահաս դատապարտյալին իր հուզական կապվածությունների հետ հարաբերություններ պահպանելու իրավունքի իրացման նպատակով ամսվա ընթացքում մեկ անգամ տրամադրվում է մինչև 4 ժամ տևողությամբ տեսակցություն ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հետ:⁵⁷ Անչափահասի սոցիալական պահանջների բավարարման նպատակով անչափահաս դատապարտյալի համար աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է նախնական մասնագիտական կրթություն:⁵⁸

ՀՀ միջազգային պայմանագրեր

ՀՀ վավերացրել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կամ երեխայի իրավունքների պաշտպանությանը վերաբերող հատուկ դրույթներ պարունակող հիմնական միջազգային պայմանագրերը:⁵⁹

Հայաստանի Հանրապետության կողմից պատշաճ կերպով վավերացրած կամ հաստատված միջազգային պայմանագրերը հանդսանում է ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս:⁶⁰ ՀՀ միջազգային պայմանագրերը ենթակա են անվերապահ կատարման: Իր միջազգային պարտավորություններն արդյունավետ իրականացնելու նպատակով ՀՀ պետք է հետևողականորեն ձեռնարկի կազմակերպչական և իրավական միջոցներ,⁶¹ այդ թվում ՀՀ օրենսդրական կարգավորումները միջազգային պայմանագրերով նախատեսված կարգավորումներին համապատասխանեցնելու համար: Ամեն դեպքում ՀՀ միջազգային պայմանագրում սահմանված նորմերի և ՀՀ օրենքներով նախատեսված նորմերի միջև անհամապատասխանության պարագայում կիրառվում են միջազգային պայմանագրով նախատեսված նորմերը:⁶²

⁵⁴ ՀՀ քր.կատ.օր., Հոդ. 109 մաս 3

⁵⁵ ՀՀ քր.կատ.օր., Հոդ. 102 մաս 2

⁵⁶ ՀՀ քր.կատ.օր., Հոդ. 68 մաս 1 կետ 2

⁵⁷ ՀՀ քր.կատ.օր., Հոդ. 56 մաս 3

⁵⁸ ՀՀ քր.կատ.օր., Հոդ. 90 մաս 2

⁵⁹ ՀՀ միջազգային պայմանագրերի ցանկը տես՝ Հավելված 1-ում:

⁶⁰ ՀՀ սահմանադրություն, հ. 6

⁶¹ Քոչարյան Վ., Միջազգային իրավունք (ԵՊՀ հրատ. 2002) էջ 127:

⁶² ՀՀ Սահմանադրություն, Հոդ.6

**Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հաստուկ դրույթներ
պարունակող ՀՀ միջազգային պայմանագրերը**

- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թ. կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 22.07.1993 թ.),
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը (ՀՀ կողմից վավերացվել է 30.07.2005 թ.),
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրությունը (ՀՀ կողմից վավերացվել է 21.03.2005 թ.),
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. միջազգային Դաշնագիրը (ՀՀ կողմից վավերացվել է 23.03.1976 թ.),⁶³
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թ. միջազգային Դաշնագիրը (ՀՀ կողմից վավերացվել է 03.01.1976 թ.),⁶⁴
- Կիբեռանցագործությունների մասին 2001թ. Եվրոպական կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 01.02.2007թ.),⁶⁵
- Հարկադիր աշխատանքի վերացման մասին 1957թ. կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 17.12.2005թ.),
- Աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքի մասին 1973թ. կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 27.01.2006թ.),
- Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին 1980թ. կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 01.06.2007թ.)
- Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 1999թ. կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 02.01.2006թ.),
- Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 01.06.2007թ.),
- ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. արձանագրությունը (ՀՀ կողմից վավերացվել է 25.12.2003թ.),
- Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի 2005թ. կոնվենցիան (ՀՀ կողմից վավերացվել է 01.08.2008թ.),
- Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի 2007թ. կոնվենցիան (ՀՀ կողմից ստորագրվել է 29.09.2010 թ., սակայն առ այսօր չի վավերացվել):

⁶³ Հաստուկ դրույթ է ՔՔԻՄԴ 24-րդ հոդվածը, որը սահմանում է ծնողների, հասարակության և պետության կողմից երեխայի հաստուկ պաշտպանության անհրաժեշտությունը և որպես այդպիսի պաշտպանության իրականացման հաստուկ երաշխիք առանձնացնում է երեխայի գրանցումը ծնվելուց անմիջապես հետո:

⁶⁴ Որպես հաստուկ դրույթ տես, մասնավորապես, 10-րդ հոդվածով, որով նախատեսված է երեխաների նկատմամբ պաշտպանության և օգնության հաստուկ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Նշված դրույթով սահմանված են մասնավորապես տնտեսական և սոցիալական շահագործումից երեխաներին զերծ պահելուն ուղղված նվազագույն երաշխիքները:

⁶⁵ Տես՝ Հոդ.9, որով, մասնավորապես, սահմանվում է Կոնվենցիայի անդամ-պետությունների պարտավորությունը ձեռնարկել միջոցներ մանկական պոռնոգրաֆիային վերաբերող ապօրինի արարքները քրեականացնելու ուղղությամբ:

VIOLENCE AGAINST CHILDREN IN THE REPUBLIC OF ARMENIA
ANALITICAL REPORT ON RESEARCH RESULTS

THE RESEARCH WORKING TEAM:

Research Director and analyst, candidate of sociological sciences (PhD) Adrine Babloyan;

*Database specialist and analyst, candidate of sociological sciences (PhD) Bagrat Harutunyan;
Field Coordinator Tigran Harutunyan*

Administrative manager Hovhannes Keshishyan

EXECUTIVE SUMMARY

The research on violence against children was carried out in the timeframe from March to July of 2014 in the capital city of Armenia and in the northern regions of Lori, Tavush and southern regions of Vayots Dzor and Syunik by the research team of *MEDIA-MODEL* in collaboration with *Hope&Help* NGO. The main goal of the survey was to reveal manifestations of violence against children in Armenia, particularly measuring the risks of violence and cyber-crime against children in the age of 13-18 years-old.

A multistage probability sample was constructed and implemented. The research sample covered 780 persons including 711 pupils of IX-XII grades from general education institutions/schools in the selected communities and 69 first-year students from selected higher educational institutions.⁶⁶ The sample error stands at ± 3 , 5% within 0, 95 credibility range⁶⁷:

In addition five focus-group interviews were conducted with representatives of the main staff of the educational institutions/schools in the selected marzes (administrative regions).

The summarized findings of the survey are as follow:

Lack of special knowledge in the field of child abuse, violence against teens and its prevention among the core teaching staff of general education schools, especially among the staff of the regional schools;

The tendency of shifting the responsibility for cases of violence and violence control towards those directions of education where the given institution/staff are not the immediate actors/chargers;

Absence of special guideline instructions for teachers concerning identification of children subjected to violence or special measures to be undertaken in such cases ;

Restriction of participation/minimum involvement of social pedagogues, social workers, psychologists and other professionals in the everyday school work by the core teaching staff supervisors.;

Relatively low level of Complex Index of Violence against children – nearly 54%, i.e. for 46% of respondents no factors of risk for violence were envisaged by the study;

The Psychological Violence Rate is the highest comparing to almost equal rates of physical violence and sexual abuse;

Educational institutions/schools as primary domain for physical violence: Physical Violence Rates are highest at school and higher educational institutions with involvement of two main parties – classmates (the highest rates) and teachers/lecturers;

Prevalence of violence among children of the same age: its highest level is in Yerevan, then in the northern cluster (Lori and Tavush Regions) and southern cluster (Vayots Dzor and Syunik Regions);

⁶⁶ The sample did not cover special, boarding school and other institutions, so that the more typical results and non-diverse picture could be revealed. Besides that, The limitations related to filling in standardized questionnaires and conducting face-to-face non-mediated interviews with children having special needs were taken under consideration.

⁶⁷ See Research Sample on page 15 for details

High Psychological Violence Rate at educational institutions, which is higher than the level of psychological violence in the family and in the streets. The victims of psychological violence are mainly female children;

Existence of a group of risk of teenagers that are out of control in terms of their appearance, movement, interactions with their friends and other directions, the absolute majority of whom are from Yerevan. This group is represented by male respondents possessing mid-level and higher mid-level economic status.

Sexual abuse rates tending towards zero, with the exception of rates of violence by children of the same age against each other (16 out of 70 respondents have heard about cases of sexual abuse by their mates) and other adults against children (12 out of 70 respondents have heard of cases of sexual abuse by adults);

Tendency to conceal/hide the cases of sexual abuse: one-third of interviewed students noted that in case they become victims or witnesses of sexual abuse they would prefer to hide the details of the cases, as they can be discredited or find themselves in a shameful situation;

Poor awareness of children about victim support organizations and responsible bodies: only 3 out of 70 interviewed students could mention any similar organization.

High level of Complex Index of Cybercrime Risks: approximately 79%. On average, one individual is affected by three factors of risk making him/her a potential cybercrime victim, which is quite a lot. The group of teenagers, who are at maximum danger to become cyber-crime victims, is very big – about 12.5%, since they are simultaneously affected by more than 7 risk factors.

The target group under cybercrime risks: boys, who, according to the research results, on the one hand, frequently access and stay in the Internet, and on the other hand, seek to make acquaintances and are adventurously ready to meet new people in real life. This group of risk is especially large in Yerevan, then in the northern marzes and southern ones.

Lack of knowledge in the field of Internet security, which is proved by survey data on violation of Internet security rules.

CONCLUSIONS

Summarizing the research findings, we can single out the following:

- The core teaching staff of general education schools, particularly from regional schools does not possess special knowledge in the field of violence against teens/children and its prevention. The definitions used by them lack clear categorization, typological bases or professional terminology. In their perception, violence overlaps with a number of adjacent phenomena, such as trafficking, propaganda, academic overload of pupils, etc. As a result, the identification of cases and control of violence through application of unique pedagogical skills is decreasing.
- A latent tendency of responsibility shifting becomes obvious in the field. The focus group participants tend to consider prevalent those types of violence against children and those

directions of general education, where they are not direct actors/chargers. Moreover, this trend is active both at group and individual identification levels (e.g. in Yerevan, they believe that violence is used in the regions; at secondary schools they believe that there is violence at high schools; at general education schools they point out that the problem is prevailing at special education institutions.)

- Teachers do not have special guideline instructions for identification of children subjected to violence or undertaking special measures in such cases. In general, they tend to respond spontaneously and do not engage professional specialists or institutions. In this respect, social pedagogues and psychologists are most active, within the range of their professional capacities; they provide assistance, including, if necessary, cooperation with the police and other state bodies. However, they are minimally integrated into the work with the children by grade curators/supervising teachers, who are trying to control the situation by themselves.
- The complex Index of Violence against children stands at approximately 54%, which means that for 46% of respondents no factors of risk of violence were envisaged by the study. It should be stated that this estimate is quite reassuring, especially if we take into account the fact that the groups that are simultaneously affected by four or more factors are extremely small. The largest is the group of teenagers that is simultaneously affected by up to two factors for violence. Schoolchildren are at more risk of being victims of violence than students.
- According to the estimates, psychological violence rates are most prevalent, while rates of physical and sexual abuse are equal. The main parties for all types of violence are teenagers themselves, since, according to the data, manifestations of violence between children of the same age are the most widely spread.
- Educational institutions – schools and higher education institutions appear to be the main domain for physical violence. Moreover, the physical violence is used by two main parties – classmates (the rate is the highest) and teachers/lecturers. Violence among children of the same age is more prevalent in Yerevan, then in the Northern cluster (Lori and Tavush Marzes) and the Southern cluster (Vayots Dzor and Syunik Marzes). In terms of manifestations of violence against children by teachers, the capital city again comes first. The physical Violence Rate calculated on the basis of responses given by private school pupils is lower than by those studying at state institutions. The Physical Violence Rates are lowest for the cases of violence used by family members.
- In terms of psychological violence, the educational institutions once again appear to be the most violent; the psychological violence rate in this field exceeds the ones within the family and in the streets. Female children most frequently become victims of psychological violence by both their mates, teachers and family members. In contrast to physical violence, the psychological violence by teachers is equally spread at both state and private educational institutions.

- The non-nuclear urban families, where the parents have secondary or secondary vocational education, are at more risk in terms of family psychological imbalance. Teenagers that are out of control of their parents are also considered to be a group of risk for different kinds of deviant behavior. It has been discovered that absolute majority of uncontrolled in terms of their appearance, movement, interactions with friends and other directions, are urban residents, and more specifically of residents of capital city Yerevan. Mostly these are male respondents with mid-level or higher mid-level economic status.
- Sexual Abuse Rates tend towards zero, with the exception of the rates among mates or children of the same age (16 out of 70 respondents have heard of cases of sexual abuse by their mates) and other adults (12 out of 70 respondents have heard of cases of sexual abuse by adults). Girls have matched about cases of sexual abuse by family members, mates and other adults more often than boys, while only male respondents have mentioned cases of sexual abuse by teachers/lecturers. The main source of information for the children on sexual abuse is external, and is represented by Mass-Media and Internet informational streams.
- If becoming a victim or a witness of sexual abuse, about one-third of students would prefer to hide the details of the case, since they can be discredited or can find themselves in a shameful situation. The level of children awareness on special support organizations and responsible bodies is also unsatisfactory: only 3 out of 70 interviewed students mentioned such an organization.
- 88% of the total number of the interviewed teenagers are registered in at least one social network, which can be considered a very high level. The Complex Index of Cybercrime Risk is quite high. It stands at approximately 79%, which means that only for 12.5% of respondents no factor of risks were envisaged by the study, and it is impossible to estimate the risk rates for another 8.8% of those respondents who states that they were not using Internet.
- On average, one person is affected by three risk factors, which is quite a lot. The group of teenagers who are at maximum danger as they are simultaneously affected by more than 7 risk factors is also large: it is about 12.5%. Objective or external risk factors, such as the security of Internet connection devices and confidentiality of personal data, are more prevalent than the subjective ones. It is much easier to carry out their control than that of the subjective factors.
- The major group under cybercrime risk are boys who, according to the research results, on the one hand, frequently access Internet and spend much time on it, and on the other hand, seek to make acquaintances and are adventurously ready to meet new friends in real life. This group of risk is especially large in Yerevan, then in the northern marzes and southern ones.
- There is lack of knowledge in the field of Internet security, which was proven by the data concerning deviation of Internet security essential rules. It is found out that approximately 30% of the users do not have any powerful antivirus program; almost half of the users have the same password while logging in different services, and approximately 17% follow sites with age restrictions.

Based on the findings, the following practical suggestions have been developed:

- To organize a multi-level awareness campaign on all types, parties and domains of violence, with special events organized for general education staff, parents and pupils with the purpose to obtain skills in conflict resolution organized through joint working teams of teachers, parents and pupils. It is not social pedagogues and psychologists who need special retraining, but the core teaching staff and school supervisors, especially old teachers with long-term schoolwork experience. The control and prevention of violence should first of all target the perceptions, knowledge and world overview of a group of male pupils residing in Yerevan.
- To strengthen the feedback with control institutions, in some cases by bypassing the intermediary school administration to encourage a direct circulation of information, especially in administrative region and rural communities (for example, through anonymous school surveys, installation of hotline services, and cooperation with parents' and pupils' local councils).
- To elaborate and provide special guidelines for the grade supervisors, social pedagogues and psychologists for identification of victims of violence or those and aggressive children, as well as on preventive actions to be undertaken in such cases through elaboration of special reporting templates for evaluation and monitoring of violence and psychological stress cases.
- To add/to create positions for professional staff such as social workers, social pedagogues and psychologists at all schools, especially in rural communities, providing clear-cut report templates for monitoring. To strengthen the capacities of professional specialists at schools.
- To elaborate a three-level pupil-parent-teacher awareness raising system to improve the knowledge in Internet security, which should be developed and introduced by state bodies, implemented/offered through the support of different professional groups, including NGOs and school IT specialists, and controlled on places by the school administration and grade supervisors.
- To increase the number of technical equipment for external control in schools, such as video-cameras, antivirus program software, and special security measures undertaken by IT admins at each school.
- To highlight and disseminate information on the cases of revealed violations, cases of violence, cybercrime and **specific punishment via** mass media and Internet.
- To focus further researches on boarding schools, orphanages, and other special institutions and, based on the findings, to conduct more-targeted case-studies using qualitative research methodology.

LEGAL REGULATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA STIPULATING PROTECTION OF THE CHILD FROM ABUSE

Lilit Yeremyan

Child abuse is a very serious but at the same time a relatively unrecognized issue in the Republic of Armenia. State bodies (including law enforcement agencies), local self-government bodies, non-governmental organizations and the society in general should pay due attention to this issue. A child is any person under the age of 18 years.⁶⁸ Physical and psychological consequences of child abuse can be short-term, causing immediate damage to child's health and well-being during his/her formative years, or long-term, haunting the victim for the rest of his/her life. Violence against children can lead to fatal consequences.

As a rule child abuse is likely to be committed by those who have most frequent direct communications with the child. These people are usually family members, teachers, employees of educational or medical facilities, employers, those who have the responsibility to bring up the child or take care of him/her, or other persons in the closest proximity of the child (e.g. relatives, friends, neighbors), as well as, for example, officers of law enforcement agencies or penal institutions.⁶⁹

